ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԱՑ

ՋԵՆՈՐ ԳԼԱՆ ԱՍՈՐԻ

9(47.925)
Զ-55

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԱՐՕՆՈՅ

ԶՈՐ ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ՋԵՆՈՐ ԱՄՈՐԻ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1832 ԹՎԱՆ

321

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Օ՛ԵՆՈՒՍ այս աշակերտ սրբոյ Լուսաւորչին, և առաջնորդ ինն ակնեան վանիցն 'ի նմանէ կացեալ, հրամանաւ վարդապետին իւրոյ՝ որպէս ինքն իսկ պատմէ՝ գրեաց զգիրս զայս առ Երիցունս ոմանս յԱսորիս։ Ուստի հաւաստի թուի՝ ասորերէն զսա գրեալ. զի ինքն իսկ և առ որս գրէրն՝ ասորիք էին. մանաւանդ զի և ասորի գրով վարէին յայնժամ մերք։ Եւ պատմէ 'ի սմա զերթ սրբոյ Լուսաւորչին 'ի Կեսարիա, և զձեռնադրել նորա 'ի Ղևոնդեայ եպիսկոպոսէ, զփոխագրութիւն նշխարաց սրբոյ Կարապետին, և զիրաց ինչ պատերազմի՝ որ 'ի կողմանս Տարօնոյ գործեցան։ Բդ զսոյն պատմութիւն նոյն ինքն ապա մատենագիրն և 'ի Հայ բարբառ երևի յեղեալ. քանզի այսպէս 'ի գլուխ գրոցս դրոշմեն գրիչագիրք. Պատմութիւն Տարօնոյ, զոր Խորենացոյ Օ՛ենոբ Անուն։ Այլ եթէ զթարգմանելն ոք փոխանակ պատմագրելոյ առցէ, և համարիցի զսա հայերէն գրեալ, և կամ յայլմէ ումեքէ յեղափոխեալ 'ի հայ, ոչ ինչ կամակորէ զիմաստ բառին։ Օ՛յ և բազում նմանութիւն գտանեն քննողք ընդ տիպս կերպարանաց բանից սորա և Յովհաննու Մամիկոնեանի. որով և ոչ վրիպեսցի ոք թերևս զնա կարծել թարգմանիչ գրոցս այս։

Որպէս գրեթէ՝ եամ շարագրածք 'ի ձեռն գրըչագրաց հասեալք առ մեզ, և առաւել սա ժամանակաց երկայնութեամբ աղաւաղեալ գտանի։ Այլ մեք 'ի ստուգագոյն օրինակաց զտպագիրս զայս արարաք, հնգեակ օրինակաց բաղդատութիւն ըստ կարի ուղղագրեալ։ Ուրեք ուրեք էին և հատուածք ինչ, որ թէպէտ յերիս և 'ի չորս օրինակս պակասէին, այլ մեք ոչ թողաք զայնս 'ի բաց. որպէս զի մի՛ զրկեսցին հնախոյզք մերոյ աշխարհիս 'ի տեղեկութենէն՝ որ 'ի նոսա։ Ա՝նանաւանդ զի երևի ուրուք 'ի յետնոց զհատուածսն զայնոսիկ կրճատեալ՝ ագահելով 'ի ժամանակն և 'ի մագաղաթ, և այլոց ոմանց գրչաց 'ի նմին օրինակէ փոխագրեալ. որպէս և այլ երկք հնոց յաճախ իսկ զնոյն արկածս կրեցին 'ի պղերգութէ գրըչագրաց։ Այլ թէպէտ և համարիցին հատուածքն այն յետոյ յաւելեալ, ոչ յետնոյ ինչ ուրուք թուին յաւելուածք, այլ կամ նորին իսկ մատենագրին, և կամ ուրուք 'ի յաջորդաց նորա, 'ի նորին վանիցն աւանդաջնորդաց։

ՉԼԵՆՈՐԴԱՅ ԳԻՐՔԱՅ

ԱՍՈՐԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏՄԲՕՆՈՅ

Պատճէն առաջին սրբոյն Գրիգորի զոր առաքեաց 'ի Կեսարիա առ Ղեւոնդիէ։

Զ ԱՌ Ի ՎԵՐՈՒՍՏ պատուեալ և 'ի մարդկանէ գովեալ, երիցս երանեալ տեառն և առտուաճարեալ սրբոյ Հայրապետիդ Ղեւոնդեայ, մեծարգոյ [1] և պատուական հոյակապ քաղաքիդ Կեսարեան քահանայապետ, առ 'ի ձեր սրբոյ ձեռնադրութենէդ և 'ի մեր փանաքիմացութենէս առաջին թուղթ՝ ողջունիւ և սրբութիւն հասցէ ձերում փառաւորութեանդ, և ապա բոլոր տիեզերաց։

Յոգի գոհանամք զքո, որ հայրախնամ ողորմութեամբն իւրով գթացաւ յազգս մարդկան իջմամբ Որդւոյ իւրոյ միածնի. որ զամ ազինս հրաւիրեաց յերկնային քաղաքն 'ի ձեռն առաքելական քարոզութեան, յորում այսմ աշխարհի կարի առաւել մասն պարծանաց եհաս։ Զ 'ի երկոքեան ամոլքն աստ եկեալք, և սորին սահմանի վիճակի՝ Հոգւոյն բանիւ 'ի ձեռն նորին ընտրեցաք. որ թէպէտ և առ նոքաք վերջացան 'ի ճշմարտութէ, սակայն կամք ողորմութեն

[1] 'Ի միում ձեռագրի Մէգալու։

այ գթացաւ առ մեր նուաստութիւն. ըստ որում և գործեաց սքանչելիս 'ի մերում ժամանակի, որ զօրինակն դուք 'ի մեզանէն իսկ լուայք և ծանեայք։ Ա՛նսաւանդ կրկին գոհութիւն ձեւք այ մատուցանեմք, առաւել և ձեզ օրհնութիւն, զի զդանձն կենաց շնորհեցէք երկրիս Հայոց, զմիջնորդն այ և մարդկան զնշխար սրբոյն Յովհաննու Ա՛կրտչին. որով և ցնծայ յոյժ երկիրս Հայոց սորա գալստեամբս, որպէս և անդ Ղազարի գալստեամբն 'ի Յորդանան։ Լու զայս գիտութիւն ստուգիւ ձեզ ծանուցանեմք, զի որպէս Ղազարի իջմամբն 'ի ջուրն՝ մահ կորեաւ, նոյնպէս և աստ 'ի սորա գալստեանն՝ դժոխոց դրունքն խորտակեցան։ Օ՛ի է աստ յերկրիս Հայոց 'ի չորրորդ բաժինս և յերրորդ Հայոց աւարտին, 'ի լերինն՝ որ կոչի Տաւրոս, և հատեալ անցանէ[1] մինչև 'ի դրունս Պալ հաւայ Պարսից. և առ սովաւ բնակի երկիրն մամիկոնէից, բազում վայելուչ տեղօք, և ծառատունկ պիտոյից. որ և աստ իսկ որջացեալ էր մահ յերկուս տեղիս[2]։

Լու այնչափ որջացեալ էր 'ի միում վայրի, մինչև 'ի սրբոյ Հոգւոյն յայտնեալ՝ եթէ նա իսկ է դրունք դժոխոց, զոր ինքնակնեան կոչէն տեղոյն հնդիկք և պարսիկք։ Յոր պանծային յոյժ բնակիչք երկրին վասն Գ'իսանեայ կռոցն, և նորին եղբօրն Գ'եմատրեայ. ուստի յոյժ բուսնեալ էր սատանայ 'ի նոյն։ Գործանեցաք զպատկերն սատանայի, և եդաք 'ի նոյն տեղոջ մատրանի[3] զնշխարս սրբոյ Կարապետին Յովհաննու և Գ'թանագինեայ վկայի, ուստի 'ի վայր կործանեցաւ մահ իւրով կարողութիւն, և այժմ ՝ած երկրպագեալ պատուի։

'Ի նոյն ինքնակնեան տեղւոջն թողի զերկոսին կենդանիսն զՆատան և զԱրծանիդէս, զորս դու ըստ սիրոյ քո ընծայեցեր զնոսա աշխարհիս Հայոց։ Որոց և եդեալ իսկ էն զիւրեանց մարմինս կենդանի 'ի խաչ եղանել ընդ Ղազարի վասն այլոց օգտի մեռաց 'ի մարմ-

1 Յերկուս օրինակս անդ է։ Նէիդ. և սա Բաղրամ վայելուչ կոչի
2 'Ի չորս օրինակս առ սովաւ պեղջ. կոչ յերկուս պեղի։
Բանի յերիրի կամ երիրն մամիկոնէ-
3 Յերկուս օրինակս մատրանայ։

նի. զոր իբրև զանդիւտ մարդարիտ համարիմ զնոսա տուեալ ինձ։ Այլ ըստ սիրոյ մտերմութեդ քո զոր ունիս առ մեզ, աղաչեմ զի մի ևս ընձայս այլ մատուցանես ինձ։ Օ՛ի հունձք բազում են և մշակք սակաւք. այլ աղաչեմք զձեզ, զի հանցես մշակս 'ի հունձս յայսոսիկ։ Յորոց մին մշակն, զոր խնդրեմք 'ի քէն, Դղիազարոս է. և միւսն՝ եղբայր Յակոբայ ասորւոյ [1], զոր ընդ իս ածեալ՝ ձեռնադրեցի եպիսկոպոս մամիկոնէից տանն։ Արդ և զդա յղեսցես, հանդերձ այլ մշակօք, մանաւանդ և զՏիմոթէոս ազգենացւոց եպիսկոպոսն յղեսցես. զոր դու իսկ գոր վեր զՀմտութի դպրութեն, որ էր յոյժ իսկ պիտանի երկրիս մերում, օգնականութի գտեալ 'ի քէն ա զօթիւք և խրատուց։

Ուստի և յարաժամ Ճգնութեդ բազմաց օրինակ գոլով, և դաստիարակ եղով շնորհիւ ՏՆՆ, ողջ լիցիս բաւական բազմաց օգնականութեան 'ի ՏՐ, և մերոյ բարեխօսութեամբ. ամէն։

ՊատՃէն երկրորդ. պատասխանի գրոց սրբոյն Գրիգորի. զոր յղեաց Կեսարու հայրապետն 'ի ժամ վախճանի իւրոյ։

Դրգանիկ և ածարեալ Տեառն եղբօրդ.

Դ՝ՀԱՍ առ մեզ՝ որ և ուրախարար զիր քո, և յոյժ անթերի ուրախութիւն լցոյց զվշտագնեալ անձն իմ։ Որ թէպէտ վասն տրտմութեան հասանելոյ 'ի վշտի էի, սակայն շարժեալ զմեր դանդաղութիս ձեր գոհութեանն համակն. զոր ընթերցեալ՝ գոհութիւն մատուցի ՏՐ ըստ գրեցելոյ 'ի քէն, որ ոչ անտես արար ՏՐ զաղգս հիւսիսական. որք զրկեալք բազում ժամանակս 'ի Ճշմարտութենէն, զմոլորեցուցիչս իւրեանց ՏՐ համա-

1 Յերիս օրինակս Ե գիրս՝ զբրծեալ յեռանդրեցի եպիսկոպոս՝ եղբայր Յակոբայ ասորւոյ ևն։

րէին։ Եւ զայն ուսոյց նոցա հակառակամարտն Ճշմարտութիւն սատանայ. զի ընդ խաւար ընթացեալք, զրկեալք լինէին յաստուածածանօթութենէն։ Զ.յլ 'ի դէպ եկեալ նոցա մարգարէին բան, թէ "Զողովուրդ որ նստէր 'ի խաւարի՝ տեսին զլոյս մեծ աստուածգիտութիւն"։ Որ թէպէտ 'ի վաղ իսկ ծագեաց արեգակն արդարութեան ընդ արարածս, սակայն ազգդ քո 'ի տունջեան իբրև 'ի գիշերի զորմ խարխարեալք։ Ուստի և այժմ դեռ հայեցաւ 'ի դոսա ՈՒԾ, և էջ փրկել զդոսա 'ի ձեռաց անմարմին Փարաւոնի. զի վերագոյն գտար տանջանօք քան զՈՒՐՍԷՍ՝ ոչ խնայելով 'ի մարմնդ քո, մինչև ազատեալ հաներ յանապատն Սինա յանկոխին գազանաց, ուստի հալածական լինէին ցաւք և հեծութիւք։

Եւ արդ քանզի քեզ ծագեաց արեգակն արդարութեան՝ Ես 'ի դոսա, և դու ընդրեցար 'ի տեղի ընդրելոց սրբոց առաքելոցն Բարթողիմէոսի և Թադէոսի, յիշեա զնոցա նահատակութիւն, և մի՛ երբէք վերջասցիս 'ի շաւղաց նոցա. զի և չէք ինչ պատճառս, զի ետ զդոսա ՈՒՐ 'ի շինել և ոչ 'ի քակել. քանզի և 'ի սկիզբն իսկ է մուտ Կարապետիդ յաշխարհդ Հայոց։ Որ և զիմ անուանս գրեսջիր 'ի քո դպրութեանդ. և գրեսցես, զի և այնու մասն օրհնութեան ընկալայց յետ քո։

Զ.յլ և խրատ բարեաց տամ ձեզ. զիննակնեան տեղիսդ, զոր բարեբուղխ ասեն ոմանք, շինեսջիր զդա բնակութիւն դասուց կրօնաւորաց։ Եւ կացուցանես զդոսա ըստ օրինակի այսր կրօնաւորացս, զոր տեսեր 'ի մերում վիճակիս. զոր և 'ի սրբոյն Անտոնէ ուսցիս զկարգ ՃգնութԵանն, զի ոչ իւիք պակաս է քան զառաջինն Անտոն։ Զոր և ես քեզ ոգնութիւն համարիմ զայն. զի զԱպիփան աշակերտ սրբոյն Անտոնի հաւանեցուցի գալ 'ի նոյն իննակնեան տեղին, ունելով ընդ ինքեան ընդիրս արս քառասուն՝ Ճգնաւորս խարազնազգեստս, պարկեշտ վարուք և հրաժարեալս յաշխարհէս. զոր առեալ կացուցանես զԱպիփան՝ դոցա և այլոց եղբարցդ վերակացու։ Եւ դրոշմեսջիր

1 Ցերիս օրինակս Խորխորէայ։

արձան յաւիտենից, զի մի՛ որ 'ի դաստակերտս կամ 'ի գիւղաքաղաքս զօրէն աղէքսանդրացոցն գործեսցէ, շինեալով իւրաքանչիւր ումեք զտէրունական տաճարն, և առանձինն բնակել։ Այլ ժողովեսցես 'ի նոյն տեղի հարեւր արանց չափ, որոշեսցես 'ի նոսա գեղջս և աւանս մեծամեծս, որպէս զի պէտք վանացն 'ի նոցանէ վճարեսցի, և ինքեանք միայն աղօթից և ճրագնուութեանն պարապեսցին։

Խրատեա և զիշխանսդ զայդոսիկ՝ լինել եկեղեցաւ զարդս, աղքատասէրս, կրօնաւորասէրս և երկիւղածս։ Իսկ զշինուածս մատրանն մի՛ շինեսցես բնակութեան կրօնաւորացդ, այլ կացուսցես 'ի նմա քահանայս և քորեպիսկոպոս։ Որոշեսցի նմա դաստակերտս, և շինեսցես 'ի նմա աղքատանոցս. որպէս զի որք գայցեն 'ի բժշկուին, մի՛ լիցի տրտունջ. որպէս առ դրան խորանին ննջեցուցանէին զուխտաւորսն։ Այս ա՛մ ըստ այսմ օրինակի տուր գործել։

Այլ վասն Տիմոթէի և Աղիազարու եպիսկոպոսացն, զոր յինէն աղաչանօք էիր խնդրեալ, նոքա յայնժամ էին գնացեալ՝ մինչ դեռ զբագինսն կործանեցեր, և մեզ հարցման պատասխան [1] էիք արձակեալ։ Զանազի Աղիազար գնաց 'ի քաղաքն Իւրմէ փախստական, զի յարեան [2] 'ի վերայ հերեսիովտայքն և հալածեցին զնա 'ի կողմանս Հռոմայ։ Իսկ զՏիմոթէոս լուայ թէ գնաց 'ի կողմանս Աղրուսաղէմի վասն աւետարանին թարգմանելոյ 'ի հելլենացի լեզու։ Այլ ես իսկ 'ի ցաւս մահու անկեալ կամ, և ոչ գիտեմ զկենացս յերկարութիւն. և վասն այսորիկ դանդաղիմ իսկ և գրել առ նոսա թուղթս։ Այլ դուք գրեցէք առ նոսա զնշան ալանց [3] ձերոց և զտեղացդ վայելչութիւն։ Այս առաւել ստուգիւ գրեսջիք՝ եթէ զի՞նչ էր պատերազմն ձեր և քրմացն, մինչ երթայիքն 'ի մէնջ։ Արձեալ ցուցցես [4] զնշխարացն վայրս ծածուկ գրով, զի մի թերութիւն լինի լսողաց՝ կարծելով եթէ երևեալ ևս չէն։

1 Յերկուս օրինակս պատասխանի։ Յերոց։
2 Յերկուս օրինակս և յարքան։
3 'Ի չորս օրինակս ընտանեաց։
4 Յերկուս օրինակս ցուցցես, յայլսն ցուցցէ. և 'ի մի այլ ցուցցէ։

Զ.ԱԼ զմէնջ եթէ գիտել կամին զորպիսութենէ, մահու ակն ունիմք և կենաց վՀար։ Բայց թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի, սակայն ներքինն զնորոգումն կենաց սկսանի։ Այլ զմեր պակասութիս տացէ՞ Տր՝ ած ձեզ, զի զանձամբ առեալ հօտդ 'ի բաւ նաւոր փարախդ վերին Սիոնի փոխարկել. որով և աղօթիւք քոյովք և 'ի մեր հօտս ինայեսցէ Տ՝ՀՏ. զի յերևեալ հօտապետին, առցուք և մեք վարձս ընդ առաջին մշակացն։ Աղջ լերուք 'ի Տր։

Այլ իբրև դարձան պատգամաւորքն առ Տէրն Գրիգոր գորիոս, ոչ գտին զնոսա 'ի Տարօն. այլ անցեալ գնացին 'ի կողմանս Հաշտենից՝ յարարատեան գաւառն 'ի Աղարշապատ քաղաք. և հանեալ զնամակն մատուցին առաջի ժողովրդեանն։ Ուր ընթերցեալ, տրտմեցան յոյժ հանդերձ թագաւորաւն. առաւել վասն հալածանացն Անղիազարու, և հեռանալոյն յերկրէն իւրեանց։

Այլ գրեաց ինքն և թագաւորն և գահերէց իշխանքն [1] չորեսին Անղիազարն նիւստրացոց եպիսկոպոսն և Տիմոթէոս ագդենացոց եպիսկոպոսն օրինակ զայս։

Տեառն սիրեցեալ եղբարցդ, և հեռացեալ մշակացդ վասն բանին կենաց, 'ի Տր՝ ողջոյն ասեմք հանդերձ Տրդատաւն և ամ իշխանօքս։

Զ.ՄԵՆԱՑՆ ոք, որ զՏ՝ածային մշակութին յանձն առնու, հալածական [2] պարտ է լինել. զի ոչ առ ամենեսեան ընդունելի է նորա քարոզութիւնն։ Որպէս այժմ զձէնջ իսկ լուաք, զի ելեալ էք 'ի ձերմէ բնակութենէդ. յանձն առէք լինել օտար 'ի վայրուց և ծանօթից, ոչ ինչ զմտաւ ածելով զպանդխտութենէ ժամանակս։ Զ.ԱԼ դէմ եդեալ գնացէք, և ոչ գիտէք յով չոգայք։ Զ.ՐԴ վասն պանդխտութենդ երանեմք ձեզ. իսկ վասն իմաստութենդ, ոչ։ Զ.Ի մինչ գի-

1 Ցերիս օրինակս Իշխան, յայլում ընդ-գահերէց Իշխանօքն։

2 Ցերկուս օրինակս հալածան, յայլում 'ի հալածանս։

տէլիք զթագաւորս քրիստոսական հաւատով լցեալ, և զաշխարհս յածխաշտութիւն, յօտար և 'ի տարա-դէմ երկիրդ ընդէր եղեք հալածական. մանաւանդ զի գիտէիք, եթէ ամ գաւառացս եպիսկոպոս պի-տոյ էն և քահանայս։ Օ՚ի թէպէտ ումանք, որք ուս տեք ուստեք եկեալ էն ժողովեալ, բայց զինչ էն այ-սոքիկ առ վեցհարեւր և քսան գաւառս չայոց. որ և գաւառին մէն մի քահանայ կամ երկու լուկ թէ հանդիպի։ Օ՚ի դեռ մանկունք երկրիս 'ի դպրոց էն, և ոչ ոք 'ի նոցանէ բաւականս քահանայութէ։ Լոկ դուք զայդչափ բազում քահանայս առեալ՝ տա բադէմ և հեռի ուղեգնացուք ետուք զձեզ, և արդ 'ի ձերում երկրիդ այլ չունիք դառնալ։

Լ՚ապա աղաչեմք զձեզ, 'ի մէնջ մի վերջանայք. այլ ամ վստահութէ փութացարուք գալ զկնի արանցդ, զոր յղեցաք առ ձեզ։ Լ՚ու եթէ գայցէք, զամ երկիրդ Լ՚կեղեաց և չարքայ ձեր առաջի առնեմք. յոր վիճակ և բնակեսջիք՝ ձեր եղիցի և որք զկնի ձեր, որչափ կենդանի էք դուք և մեք։ Լոկ երկիրն մամի կոնէիս եթէ հաճոյ թուեսցի ձեզ, որպէս և դու իսկ ասէիր՝ եթէ զիննակնեան տեղիսն ինձ տուր, և անդ զքո եղբայրն իսկ եմ ձեռնադրեալ եպիսկոպոս, և ըստ կարի աղաչանաց զանուն տեղւոյն փոխեցաք յիւր աւելի անունն։ Լ՚ու այնչափ ջերմագոյն է 'ի սպասաւորութի սուրբ Լ՚արապետին, մինչ զամ շի-նուածս վանացն քարեկիր է եղեալ. և թուի ինձ՝ թէ մինչև 'ի մահ ումեք չկամի տալ։ Լ՚այլ մեզ ոչ է արժան առնուլ 'ի նմանէ, զի աշխատեալ է առանց այլոց սատարութէ. ինքն շինեաց զեկեղեցին, զոր ես միայն հիմնարկեցի։ Լ՚ակայն եթէ ինքն տացէ, 'ի մէնջ լիով է, զի այլ ևս յաւելում 'ի դաստակերտս։ Լ՚ապա եթէ զայն ոչ, սակայն ամ երկիրն առաջի ձեր է. զոր և տեսանէք տեղի վայելուչ, այն ձեզ. յոր-մէ ոչ ինչ պակաս գտանէք 'ի մէնջ քան զասացեալն։

Լ՚ողջ լերուք 'ի տէր։

Եւ ԱՌԵԱԼ տարան զԹուղթն առաքեալքն այնորիկ, որք 'ի Կեսարիայն եկին. և տարան 'ի մէջ 'ի Յոպէ և 'ի Կեսարիա, և դարձան՝ և ոչ գտին անդ։ Եւ անտի ելեալ գնացին Յերուսաղէմ. և չհանդիպեալ նոցա, տեղեկացան 'ի նոցանէ՝ եթէ 'ի Հռոմ գնացին երկոքեանն։ Եւ իբրև նոքա 'ի Հռոմ գնացին, Յղիսազար 'ի Միջագետս Պարոց էր գնացեալ վասն թարգմանութեան երկոտասան մատեանցն։ Իսկ Ռեկտոր և Պնաստաս և Պայիոս Եգիպտոսի եպիսկոպոսքն իբրև տեսին զԹուղթն, յոյժ ուրախ եղեն և խնդացին. քանզի նոքա հալածական շրջէին զկնի Յղիսազարու։

Եւ փութացեալ գրեցին զնոյն բանն յայլ նամակ, և յուղարկեցին առ Տիմոթէոս 'ի Կորնթոս. և կոչեցին ընդ նմա և զՏիքիկոս սարկաւագն, որ յոյժ հմուտ էր բազում դպրութեան. և ինքեանք եկին 'ի Միջագետս, և ոչ գտին անդ զՅղիսազարոս։ Պա դարձան Յերուսաղէմ. միւս պատճառ՝ վասն նորա, և միւս՝ վասն քննութեան աղանդոյն Մենանդրի. որ և յայնժամ բազումք դեռ ունէին զնորա պղծութիւն։ Իբրև գնացին անդ, զՅղիսազար ոչ գտին. և 'ի նոյն աւուրն վախճանեցաւ Յերուսաղէմի հայրապետն. զոր հաճոյ թուեալ երուսաղէմացւոցն, առեալ ձեռնադրեցին զՊայիոս Յերուսաղէմի հայրապետ. և Ռեկտոր և Պնաստաս դարձան 'ի Կեսարիա։ Իսկ Յղիսազար եկեալ, 'ի ճանապարհին հանդիպեցաւ սրբոյն Պրիգորի և Տրդատայ. և խնդացեալ յոյժ դարձաւ զկնի նոցա մինչև 'ի Հռոմ քաղաք։ Եւ անդ կացեալ բազում աւուրս, ապա խնդրեաց 'ի նշխարաց սրբոց առաքելոցն մասն ինչ, զահեակ ձեռն Պնդրեի առաքելոյն և Պուկասու աւետարանչին։ Օ որ առեալ, մեծաւ խնդութեամբ դարձան յաշխարհն Հայոց. և Տրդատ անցեալ գնաց յաշխարհն իւր յարարատեան քաղաք։

Իսկ՝ որն Պրիգոր մնաց ժամանակս ինչ 'ի Տարօն՝ ընդ իւր ունելով զնշխարս նոր առաքելոյն, դադա-

բեալ աւուրս քսան և հինգ 'ի վանս Ալուակայ յինն-
նակնեան տեղիսն Ալիսանեայ կռոցն, 'ի կայեանն Ը-
խարաց սրբոյ Կարապետին։ Այլ առաքեաց զիշխանս
մամիկոնէից տանն, տեսանել տեղի վայելուչ և լեռ-
նաբնակ. զոր երթեալ խուզեցին աւուրս բազումս,
և ոչ գտին տեղի պատշաճ 'ի յամենայն գաւառսն,
և դարձան ունայն։ Իսկ 'ՊԷն Ալրիգոր հրամայեաց
պաշտօնէիցն աղօթք առնել յերեկօրեայ. և ինքն
մտեալ յեկեղեցին, տարածեաց զձեռս իւր առաջի
Ն-ի-խարաց սրբոց առաքելոցն և առաջի տապանի 'ՊԷ
Կարապետին, և խնդրեաց յոյ այսպէս.

Տէր ՊԷ բազմագութ և ողորմած, որ քննես զի-
բաւունս և պարգևես զողորմութիւն. որ յիշեցեր
զազգս մարդկան զմոռացեալս 'ի գթութեանց քոց,
և ոչ բարկացար 'ի սպառ, և ոչ անտես արարեր յա-
ւիտեան. այլ կարգեցեր զիս 'ի պաշտաման քահա-
նայութեան այսմիկ, և եռուր մեզ ժամանակ՝ հատու-
ցանել իրաւունս առաջին հարցն մերոց, որք դիմա-
դարձ գտան 'ՊԷ աւետարանին քարոզութ։ Որոց տի-
բեաց մահ մեղաց և կորուստ ապականութեան, և ըմ-
բռնեալ մահու՝ կապեաց զամենեսին ընդ անիծիւք,
արժանացուցեալ զնոսա դժոխոց կայանին. զորս հա-
ւանեցուցեալ չարն մնալ յունայնութեան իբրև 'ի Ճըշ-
մարտութենն։ Իսկ մեզ շնորհեցեր ծանօթս լինել
անուանդ քո, և ժառանգ արքայութեդ երկնից ընդ
սրբոց առաքելոցն. և արարեր խաղաղութի առ հե-
ռաւորս և մերձաւորս գալստեամբ միածնի քո, և
քարոզութիւն 'ՊԷ առաքելոցն, որք բաժանեցին զնամ
արարածս շրջագայութիւն աւետարանին։ Լուաւել
զորս յայսմ աշխարհի արարեր զկամն ողորմութեան
քո 'ի ձեռն սուրբ Կարապետին, որ բաժանեաց իւր
մարմնոյն զնամ աշխարհս։ Զանուանդ զի առաւել-
ապէս գթութիդ քո հաճեցար բնակիլ 'ի տաճարս
յայսմիկ, որ առաջին հիմնարկութիւն շնորհեցար ինձ
յանկնարկութենէ քումմէ՝ առնել 'ի տեղւոջս յայս-
միկ, յոր հիմն հաւատոյս մերոյ խարսխեալ մնասցէ
անդրդուելի մինչև 'ի վերջին օրն՝ յորժամ գաս և
նորոգես զսա անապական, դու ՊԷ։ Այլ միջնորդ է
սա ստուերի և Ճշմարտութեան, և դարձեալ նստելոց

է սա ընդ աջմէ միածնի քո 'ի փառս անձառելիս։ Զոր, որ զօրութեաց, հայեաց յերկնից 'ի պատրաստ բնակութիւն քումմէ, և յայտնեա տեղի բնակութեան նշխարաց սրբոց առաքելոցն քոց 'ի յերկրիս յայսմիկ 'ի գովութիւն մեծի տէրութեանդ և 'ի պատիւ ուրախութեան քո, 'ի փառս ամենասուրբ երրորդութեանդ։

Եւ իբրև կատարեաց զաղօթսն, յայտնեցաւ նմա հրեշտակ տէրն և ասէ. Յարուցեալ երթիցես 'ի սուրբսն լերինն Տաւրոսի, և ցուցից քեզ տեղի՝ ուր հաստատեցաւ որ բնակիլ սրբոցդ։ Եւ նորա խնդութիւն արտաքս եղեալ՝ էառ զնշխարս սրբոց առաքելոցն, և գնաց 'ի նոյն տեղի՝ ուր եցոյց նմա հրեշտակ տէրն. և աղօթեալ 'ի տեղւոջն, եւ պատրաստել զնիւթ շինուածոյն որ վկայարանին. և եդ անդ զբերեալ մասն որ առաքելոցն։ Եւ կարգեալ անդ պաշտօնեայս եկեղեցւոյն արս երկոտասան, և եւ զտեղին զայն Եղիսաբարու, և անուանեցին զնա Եղիսաբարու վանք։ Եւ տուն մեծ կատարեալ 'ի տեղւոջն զօրն բնակութեան սրբոցն՝ հանդերձ աշխարհախումբ ժողովրդեանն, յորում բազում բժշկութիւք եղեն։

Եւ 'ի սոյն ժամանակս Ռեկտոր և Ենասատաս 'ի Ռուզանդիա հանդիպեալ ոմանց՝ որք Յեշիշատն Տարօնոյ էին, անդ երթեալ տային նոցա զրոյց զառաջին պատերազմն՝ մինչ գայր որն Գրիգոր 'ի Տարօն, և թէ զիարդ դարձան նոցա ընդդէմ քուրմքն՝ որ 'ի տեղիսն Գիսանեայ։ Նոյնպէս և զերկրորդ պատերազմն՝ որ եղև ընդ Տրդատ և ընդ իշխանսն հիւսիսոյ. զոր Յոյնք լուեալ, զարմացան ընդ քաջութիւն աբքային Հայոց Տրդատայ։ Այս ամ իբրև լուան Ռեկտոր և Ենասատաս և Եւքիւզաս և Մարկեղիոս, զարմացան. զտեղի առեալ անդ աւուրս ինչ, գրեցին թուղթ առ որն Գրիգորիոս օրինակ զայս.

ՍՐԲԱԶԱՆ և ուրախալի և փառաւորեալ հայրապետիդ Հայոց մեծաց ողջոյն 'ի Տէր։

ԶԱՌ Ի ՍՐԲՈՑ հայրապետիդ անթերի սիրով և հոգեխառն մտերմութիւն զպատուական աջոյ գիր ընթերցաք 'ի Հռոմ քաղաքի. և յոյժ ուրախութիւն

լցեալ՝ գոհացաք զնոյ, և կամեցաք զկնի կոչնակացդ[1] գալ։ Բայլ պատճառ արգելմանս մերոյ Աղիաղարը եղև, որ 'ի Միջագետս շրջէր. զոր, եկեալ 'ի Հռոմայ, ոչ գտաք զնա անդ։ Այս հարկ եղև վասն նորա և վասն տեղեացն Երուսաղեմի երթալ առ նոսն Միմաքոս. զոր ըստ այ տեսչութենն զԱյիոս Երուսաղեմի հայրապետն ձեռնադրեցին փոխանակ նորա, որ վաղճանեցաւ։ Եւ մեք աւասիկ եմք 'ի Անիւզանդիա. վասն զի ազգենացոց եպիսկոպոսն գնացեալ է յԱղիպտոս, և ջանս ունի համոզել զնոսա 'ի խաղաղութիւն ոչք հալածական արարին զմեզ։ Անցեալ դրեալ է առ մեզ, եթէ զբաղաքս ետուն ազգենացիք 'ի յիմ ձեռս, բայց նիւատրացիքն ընդդէմ դարձան. արդ մնացէք դուք 'ի Անիւզանդիա, մինչև ես յայլ քաղաք երթամ։ Արդ մեք վասն այդր դանդաղիմք գալ. զի երկիրդ հեռի է, և մեք անկար 'ի նուաղ կենացս և 'ի պանդխտութենէ, և Աստուծոյ տանջի 'ի ջերմութէս, և զոն Արկեղէս աստ վատեալ է յաչացն։

Այլ արդ աղաչեմ զքեզ, երջանիկ մշակդ այ, զի հրամայեսցես միւսմ 'ի պաշտօնէիցդ քոց՝ մեզ գրով առաքել զլուցատրութիւն ձերում Ճանապարհորդութեան, և զդալն յերկիրդ Հայոց, և զառաջին պատերազմն՝ որ 'ի քրմաց անդի, և զերկրորդ գալն 'ի Հռոմայ, և զայն պատերազմն՝ որ 'ի հիւսիսականաց անդի, և զնշխարացն՝ զոր տարեալ ես՝ եթէ ուր եդեալ ես, կամ զոր պաշտօնեայս թողեալ ես առ նա. և եթէ ումեք յայտնի, որպէս ասեն ոմանք, թէ ոչ. և զԼրօնիդէս և զԼնտոն ուր ես թողեալ, որով պարծին եկեղեցիք նոցա սրբութիւն. և կամ թէ զինչ եղև Աղիփան աշակերտ նոցա, և կամ ուր Աղիազար և Օնեսիմ։ Օ այս ամ ստուգիւ գրեսջիր առ մեզ, աղաչեմք. և զի յերթալն մեզ առ Տիմոթէոս եպիսկոպոսն, մարթասցուք տեղեկացուցանել զնոսա գրով։ Այս ամ մեզ պիտանի է, և ձեզ ոչ դանդաղելի։ Եւ շնորհք որ հոգւոյն մնասցէ 'ի վերայ հաւատացելոցդ։

1 Յերկուս օրինակս Ի-ՆՕՒԱԾՈՅԴ։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Եւ իբրև ընթերցաւ զթուղթն սուրբն Գրիգոր, հրամայեաց Օ Էնոքայ Աստուծոյ գրել զառաջին պատերազմն և զերկրորդն ստուգիւ, և զնշխարացն՝ թէ ուր եդաւ, և զՆետոն և զԱրմենիդէս՝ թէ որպէս վարին, կամ ուր են։ Այլ յականէ յանուանէ, ասէ, զնշան բլրոցն և զլերինն և զարանցն, որ 'ի պատերազմին գրգռեալ՝ զկուռսն ոչ տային կործանել. զայս ամենայն պատմութիւն գրեսցես և առաքեսցես։ Իսկ Օ Էնոք աղաչէ սկիզբն առնել պատմութեանն նախ 'ի մահուն Յոսրովայ, և անտի ոգով գրել զամենայն։ Օ որ ոչ հաւանեցաւ նոքն Գրիգոր, այլ բաւական համարեցաւ զայն միայն գրել։ Օ 'ի ոչ է, ասէ, օրէն զայդչափ պատմութի[1] ՅԱստուծոյ թուղթն գրել, և յիշատակ Հայոց ոչ թողուլ. այլ միայն զոր ինքեանք ինդրեցին, զայն յուշարկեսցես գրով։ Օ որ հաւանեալ Օ Էնոքայ, առեալ գրեաց առ եպիսկոպոսս Աստուծոյ միայն լոկ զոր ինչ առ իւրեանց սահմանեալն գործեցան։

1 Յերկուս օրինակս ՀԱՌԱՋԻՆ պակասին։

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՁԵՆՈՒԱՑ

ՑՈՒՑԱՆԵԼ ԶՊԱՏՃԱՌ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՆ

Տեառն և սիրելի երջանիկ եպիսկոպոսացդ, 'ի Օնոբայ յանարժան ծառայէ առ ձեր սրբութիւդ, և Հայաստանեայցս յոյժ սիրով ողջոյն 'ի Տէր։

Յորժամ պատուական աջոյ ձեռին ձերոյ գիր ընթերցաւ առաջի սրբոյ Հայրապետիս Գրիգորի, անթերի ուրախութիւն գոհացաք զնայ, զի դադարեաց հալածանքդ 'ի կողմանցդ յայդցանէ։ Եւ իսկոյն ձեռն 'ի գործ հրամայեաց արկանել պատճէնին պատասխանւոյ, որչափ և հարցման ձերոյ էր գիր։ Օ՞ր թէպէտ և ոմանք արգելուլ հրամայեցին՝ չգրել պատասխանի վասն ձեր գալոյ, սակայն նա ոչ այնպիսի ածեալ զմտաւ, այլ աննախանձ զձեր պատասխանին յիշել։

Եւ դուք մի ինչ աղարտէք զսակաւ պատմութիս, կամ եթէ Ադաթանգեղոս զայդ ոչ յիշէ. զի ես յառաջագոյն գրեցի քան զնա։ Եւ որ զթագաւորաց ժամանակն չգրեցի, վասն զի Տէրն Գրիգոր ոչ հրամայեաց այլ ինչ աւելի գրել քան զհայցուածն ձեր. մանաւանդ զի պատշաճ համարեցաւ զարշակունի[1] և զքաջ թագաւորաց գիր թողուլ տանս Հայոց, և ձեզ պատճէն պատասխանւոյ գրել. զոր ինքն անուանեաց Տէրն Գրիգոր զայս պատճէն՝ Ադորոց պատմութիւն։

Ադ ես սկիզբն այս պատմութեան զձերդ եդից զհարցումն։

1 Ցերկուս օրինակս Շարշոնի։

ՅԱՆՈՒՐԱՑ ԱՍՈՐԻՈՑ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՑՆ ԱՍՈՐԻՈՑ

ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՄԻ ԻՆՆԱԿՆԵԱՆ ՏԵՂԱՑՆ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՐ ՅԱՐՁԱՆԱՑ

Ընդ ժամանակս թագաւորութեանն Խոսրովայ որդւոյ Ա աղաւրշոյ, վրէժխնդիր լինէր [1] Արտաւանայ եղբօր իւրոյ, և 'ի գոռալ [2] ընդ միմեանս երկուց թագաւորացն՝ արքային Հայոց և Պարսից, սաստկացաւ մարտ պատերազմին, և զօրացաւ արքայն Հայոց. և սկսաւ ապականել զերկիրն Պարսից ամս տասն, և հիմն 'ի վեր ջանայր առնել սպանմամբ և գերուք։ Այս եղև միջնորդ արքային Հ'էնաց, և ոչ կարաց գրաւել զսիրտ նորա 'ի հաշտութիւն. այլ սովով և սրով հանեալ զվրէժս եղբօրն իւրոյ, զոր եսպան արքայն Պարսից։ Իսկ այր ոմն անուն Նշակ, 'ի նոյն աղգէն արշակունեաց, խորհուրդ արարեալ առ արքայն Պարսից՝ գալ սպանանել զԽոսրով, և իւր վարձանս առնուլ զՊալհաւն Պարտաւայ։ Զոր յանձին կալեալ արքային Պարսից, ոչ ինչ վերջանայր Պարթևն 'ի սպանմանէն Խոսրովու. այլ յարուցեալ առնու զեղբայր իւր և զկին և զորդիս իւր, և սիրոյ պատճառաւ և փախստեան աղաչաւ գայ առ Խոսրով։ Այս

1 Յերկուս օրինակս մահուան Արտաւանայ։

2 Յերկուս օրինակս Ի գոռալ. 'ի միում օրինակի գոռալոյ։

'ի կատարել երկրորդ ամին, մինչ դեռ կամէր արշաւել Խոսրով 'ի պարսիկս 'ի գարնանային ժամանակս, 'ի ժամ որսոցն մեկուսի առեալ զԽոսրով Ինակայ՝ որպէս թէ բան ինչ ունի ասել, յանկարծակի զէնս 'ի վերայ ՝ յարուցեալ՝ զթագաւորն դիմաւալ կացուցանէր։ Եւ ինքեանք ջրասոյզ եղեալ կործանեցան իւրայօքն ամենեքեանքն, ոչ ժամանեալ 'ի Պարթևն։ Այլ թագաւորն Պարսից զօր մահուն Խոսրովայ տօն կարգեաց, և զՊարտաւն մնացեալ ազգին տայր Ինակայ։

Երդ մինչ 'ի Պարսիցն դիմեալ գայր Ինակ յԵրտազ գաւառ 'ի Հանգիստ՝ որ առաքելոյն Թովմէոսի, ասեն զսրբոյն Գրիգորի յղուին անդ լեալ. որ և զնորին մշակութեն ելից զկարգն։ Երդ մինչ 'ի խաղաղութեանէր Խոսրով, այր մի որ կոչէր Հուրդար՝ 'ի նշանաւոր ազգէն Պարսից՝ ելեալ զկնի Ինակայ, և եկեալ մինչև յԵրտազ, և անդի ելեալ գնաց պանդըխտել 'ի կողմանս Համրաց։ Եւ եկեալ 'ի Կեսարիա, և առեալ իւր կին 'ի հաւատացելոց զմեծատան ուրեմն քոյր՝ անուն Եւթաղէ, և քեռն Նոփի։ Եւ կացեալ ամ մի 'ի Կեսարիա, և դարձեալ առ զկինն իւր Հուրդարս այս, և գնաց 'ի պարսիկս։ Որ ոչ ոչ զհետ մտեալ Եւթաղեայ, հասանէ 'ի գաւառին այրարատեան. և դադարեալ 'ի Աղարշապատ քաղաքի, մտանէր Նոփի ստնտու մանկանն Գրիգորի [2], և իբրև զդայեակ համարձակ մնուցանէր զմեր Լուսաւորիչն։

Երդ իբրև սպան Ինակ զԽոսրով, և դեռ յոգւոջ էր, հրաման տայր թագաւորն զազգատոհմն Ինակայ 'ի սուր սուսերի մաշել։ Իսկ Հուրդարս իբրև լուաւ զայս հրաման 'ի թագաւորէն, փութացեալ եմուտ առ Նոփի կինն Ինակայ, և առեալ զԳրիգոր 'ի գրկաց նորա, և ետ զնա ցկինն իւր Նոփի։ Իսկ զմիւս եղբայր նորա, որ կոչէր Աուրէն, մանկաբարձքն փախուցին 'ի դուռն Պարսից, և անդ մնաւ առ հօրաքեռն իւրում, որ էր կին թագաւորին

1 'Ի մեռում օրինակի 'Ի Վեր յարուցեալ։

2 Յերկուս օրինակս Մանկամբ Գրիգորի։

Զուանչրի Հեփթաղի[1]։ Որ իբրև զարգացաւ, գնաց յերկիրն Շ'ենաց յետ մահուն Խոսրովուհեայ. և կացեալ անդ ամս տասն, թագաւորեաց անդ 'ի վերայ երկրին Շ'ենաց ամս ինն և տասն։ Զոր ոմանք համբաւեն՝ թէ Վգոն ասեն եղբօրն Գրիգորի, որ է Յակոբ. բայց ոչ գիտեն զատոյգն, զի Յակոբն այն հօրաքեւորդի էր սրբոյն Գրիգորի. և անուն մօրն նորա Խոսրովուհի։ Իսկ յորժամ մեռաւ մայրն նորա, և զթագաւորութիւնն բարձին 'ի հօրէ նորա Տիրանայ, զի Եսպան գնա 'ի պատերազմի արքային Վինաց Ռեգէս, ապա Յակոբ հանդերձ քերրն իւրով Աբկղնէիւ մնաց անդ։ Եւ յետ ժամանակաց քեռորդի նորա գնաց յաշխարհն Գրեաց, և անդ թագաւորեաց. զոր յետոյ Տրդատ ըմբռնեաց, մինչ առ արքայն Յունաց էր։ Զի սա էր որ եկն 'ի պատերազմ 'ի վերայ Գրիգորիոսի արքային Յունաց, որպէս Ագաթանգեղոս պատմէ զայսոսիկ։ Եթէ ստուգիւ կամիս գիտել զայսոսիկ, ո՛վ երանելիդ Գրեկտոր, ընթերցիր զթագաւորութի Հեփթաղինեկայ հելլենացի գրով, և կամ զթագաւորութիւնն Շ'ենաց, զոր գտանես յԱւռհա քաղաքի առ Խարդայ[2] պատմագրի։

Իսկ Խուրդար առեալ զկին իւր և զմանուկն Գրիգոր, գնաց զկնի աներոյն իւրոյ Եւթաղեայ յաշխարհն կապադովկացոց. և տուեալ գնա 'ի դպրոց, ուսուցանէր ասորի և հելլենացի գպրութիւն և լեզու, և վարժեալ լինէր ճոճապաշտութիւն։ Իբրև եղև երկուտասանամեայ, այր ոմն ճոճապաշտ՝ որ կոչէր Գաւիթ՝ ամուսնացուցանէր զնա ընդ դստերն իւրում, որ կոչէր Մարիամ։ Զոր իբրև եղեն նմա երկու որդիք, անուն անդրանիկին Վրթանէս, և կրտսերոյն Արստակէս, մայրն եմուտ 'ի վանս կանանց, և կրտսերն գնաց զհետ Ճգնաւորի մի՝ որում անունն էր Եւիկիմաքոս. իսկ անդրանիկն մնաց առ դայեակն իւր, և յետոյ ամուսնացաւ։

Եւ հայրն անցեալ գնաց առ Տրդատ՝ զհօրն պարտն հատուցանել. և մնաց առ նմա մինչև նա թագաւորեաց 'ի տեղի հօրն իւրոյ. և վասն ոչ զո-

1 Ցերիս օրինակս Ե-Ֆոշի։ 2 Ցերկուս օրինակս Բարդեան։

հելոյ կռոցն՝ 'ի մեծամեծ տանջանս մատնեաց զնա։ Իբրև տեղեկացաւ 'ի քեռոյ աներոյն Կիրիգորի եթէ դա է որդին Հռակայ՝ որ ապան զՀայրն քո զԽոսրով, և նորա արկեալ զնա 'ի վիրապն ներքին ամս հնգետասան։ Եւ յետ հնգետասան ամին դիւագնեալ ամ երկիրն Հայոց, և ինքն Թագաւորն 'ի մէջ վարազացն երթեալ դադարէր։ Իսկ 'ի հրամանէն այ եկեալ հանին զնա նախարարքն իւր. և նորա ելեալ ժողովեաց զնոսա առ ինքն, և հինգ՝ օր թողու զնոսա անսուաղ առաջի իւր կալով, լսելով զքարոզութիւն վարդապետութեանն նորա։ Այս առաջին պահք եղաւ յաւուրս սրբոյն Կիրիգորի. զոր 'ի Հռոմ Եղբեսորոս հաւանեցաւ, և պահեաց ինքն և Կոստանդիանոս Թագաւորն, և ամ քաղաքն Եգիպտոսի. զոր և Առաջաւորք կոչեմք։

Եւ յորժամ լցան աւուրքն պահոց նոցա, Թափեցան մորթ վայրենական խոզակերպին Տրդատայ, և դիւաբնակ մարմինք զօրաց նորա ընկալան զաժշկութիւն։ Այսպա ձեռն 'ի գործ արկեալ՝ ուսուցանէր նոցա շինել տունս տէրունականս, և ասէ. Պարտ է քահանայս ածել, որ հովուեն զձեզ։ Իսկ հրեշտակ ոմն հաւանեցոյց զնոսա, զինքն լինել նոցա հովիւ։ Օ՞ որ յանձն առեալ, տայ 'ի ձեռս նորա իշխանս և զօրս բազումս, և առաքէ զնոսա յաշխարհն կապադովկացւոց 'ի քաղաքն Կեսարիա, ձեռնադրիլ 'ի սրբոյ հայրապետէն Կ. Եւոնդեայ։ Եւ ելեալք 'ի Կ. աղաշապատ քաղաքէ՝, անցանէին ընդ գաւառն Նասենոյ, և գայլին յԵրէզնաւան յԿեղեաց գաւառին, 'ի կուռսն՝ զոր ինքն կործանեաց։ Եւ անտի երթեալք, մտին 'ի Կեսարիա։ Եւ ձեռնադրի 'ի մեծ հայրապետէն Կ. Եւոնդեայ մեծաշուք պատուով. ա բարեալ նմա մեծարանս, տայ նմա զոր նշխարս Կարապետին Յովհաննու և զԹանագինեայ վկայի։

Այլ եթէ ով երեր 'ի Կեսարիա զնշխար Կարապետին. Յոհաննէս աւետարանիչն։ Զինչ էր նա 'ի Պատմոս կղզոյն, և եկն յԵփեսոս, և անտի երթեալ յԵրուսաղէմ՝ գտանէ զգերեզման նորա ըստ

1 Ցերկուս օրինակս չիսան ոչ։

հրամանի տեսչութեանն։ Եւ առեալ 'ի գիշերի զոր մարմինն Կարապետին Յոհաննու, և էտ ցՊողիկարպոս եպիսկոպոսն՝ որ էր աշակերտ իւր, և էտ տանել Յ,փեսոս յեկեղեցին՝ զոր ինքն շինեաց, և կոչեաց զանուն նորա սուրբ Աստուածածին։ Յ,ետ փոխման աւետարանչին՝ մնաց Յ,փեսոս որ նշխարքն Կարապետին, մինչև 'ի ժամանակս Թեկոսի թագաւորի։ Յ,ետ ապա 'ի ժամանակս նորա նստի Յ,փեսոս աշակերտ Գ,դեոնոսի Փարմելոս. և անտի հալածեալ եկն 'ի Կեսարիա, ընդ իւր ունելով զբոլորովին նշխարս որ Կարապետին, բայց միայն 'ի գլխոյն։ Յ,ետ եդ զնա 'ի որ սիրեդոնն, ոչ 'ի ծածուկ՝ այլ յայտնի. և եկաց 'ի նոյն տեղոջն մինչև ցթագաւորութի Հիրակղեոփանոսի։

Յ,ետ 'ի գալ սրբոյն Գրիգորի 'ի ձեռնադրութիւն առ Գ,ետնդ Կեսարու Հայրապետն, որ թէպէտ բազում անգամ խնդրեաց սուրբն Գրիգոր զնշխարս որ Կարապետին, ոչ էառ յանձն տալ. մինչև հրամանն 'ի տնէ առնոյր 'ի գիշերի վերջնումն՝ բաժանել և տալ զկէսն ցնա։ Յ,ետ 'ի վաղիւն բազում պատերազմունս սկսաւ լինել, մինչև նախարարքն կշռեցին քահանայապետին երկոտասան հազար դահեկան, և այնպէս առեալ բռնութեամբ՝ ելին 'ի քաղաքէն. մինչ զի խորհուրդ առեալ իշխանն Գ,նդեզ տանն հարկանել զքաղաքն 'ի գիշերի հրով։ Զոր իմացեալ հայրապետին, համոզեաց զնոսա 'ի խաղաղութիւն. և փոխանակ երկոտասան հազար դահեկանին՝ էտ նոցա զնշխարս Գ,թանագինեայ, և հաղիւ կարաց արձակել զնոսա հաշտութեամբ և սիրով։ Տայր և սրբոյն Գրիգորի երկու լուսաւոր ակունս, զոր էր տուեալ նմա Հռոմայ հայրապետն։

Յ,ելեալ 'ի Կեսարիոյ՝ մնայր ժամանակս ինչ 'ի Սեբաստիա, հաւաքել զդասս կրօնաւորաց։ Յ,ետ զոմանս վարդապետս կոչեր Յ,ղեքսանդրիոյ, և հրաշազան պաշտօնեայս. յորոց մին Գ,կլաւիոս, զոր Գ,ունայ դաշտին եպիսկոպոս ձեռնադրեաց. նոյնպէս և զայլս Յ,սորոց։ Որ և զիս իսկ ոչ եթող դառնալ 'ի Գ,իւատրա՝ հրաժարեալ յեղբօրէն իմմէ Գ,ղիազարու։ Յ,ետ անտի ելեալ անցաք մինչև 'ի Յորդան. և անդ թո

ղաք զՍուրտինոս Եփեսացի՝ վարդապետ ամենայն գաւառացն։

Եւ մեք ելեալ անտի, ընդ Կարին և ընդ Հարք կամեցաք անցանել։ Իսկ ոմանք յիշխանացն զգացուցին սրբոյն Գրիգորի, եթէ 'ի գաւառն Տարօնոյ երկուս բագինս մնացեալ են՝ որ դեռ ձօնեն դիւաց։ Իսկ նորա գէմ եղեալ գայր, զի և զայնս քանդեսցէ. և եկեալ յերկիրն Պալունեաց յաւանն մեծ Գիւանանէ 'ի քաղաքագեղն Կուառս, ոմանք 'ի քրմացն անդ Հանդիպեցան։ Եւ տեղեկացեալ յիշխանէն Հաշտենից՝ եթէ առ վաղիւն կործանելոց են զմեծ աստուածն Գիւանեայ և Գեմետրեայ, գիշերացնաց եղեալ 'ի տեղի աստուածոցն, և լցին զգանձս 'ի տունս գետնափորս։ Եւ ինքեանք ազգ արարին յԱշտիշատ 'ի քուրմն՝ եթէ ժողովեցէք արս պատերազմողս, և փութապէս վաղիւն հասէք առ մեզ, զի մեծն Գիւանէս 'ի պատերազմ ելանելոց է ընդ ուրացեալ իշխանն։ Նոյնպէս և զարսն Կուառացն սրեցին՝ դարան գործել 'ի ցանկս այգեացն, և զոմանս յանտառն դարձուցին։ Եւ որ գլխաւոր քուրմն էր, անուն Արձան, և որդւոյ նորա՝ Գեմետր, առեալ զօրս՝ որք 'ի Կուառատանն էին՝ արս իբրև չորեք հարեւր, և ելեալ 'ի վերայ լերինն՝ ուր Հանդէպ Կուառացն էր, և մնացին մինչև այլ զօրքն ուստեք եկեսցեն նոցա յօգնականութիւն։ Եւ ելեալ 'ի վաղիւն անցանէին ընդ ստորոտ լերինն, զոր օրինակ սովոր էին ասպատակել։

Իսկ սրբոյն Գրիգորի առեալ զիշխանն Արծրունեաց, և զիշխանն Անձեւացեաց, և զիշխանն Անգեղ տան, և սակաւ ինչ զօրու իբրև արս երեքհարեւր, ելեալ յերրորդ ժամու ընդ բլուրն՝ ուր Արձանն էր թաղուցեալ, և գային յանհոգս եղեալ, բնաւ չունէին կասկածս։ Եւ իբրև մերձ եղեն ընդ ելս զառ'իվերին, յառաջ մատուցեալ Արձանն և Գեմետր, և հնչեցուցին զփողն պատերազմին, և յանդգնաբար յարձակեցան 'ի վերայ։ Օ՜ որ լուեալ իշխանքն՝ ընդոստեան յոյժ. զի յորժամ լուան երիվարքն զձայն փողոցն, սկսան վրնջել և պատերազմ յուզել։ Իսկ իշխանն Անգեղ տան ձայն տուեալ ա-

սէր. Իշխան Սիւնեաց, յառաջ մատիր և տես՝ զու-
ցէ զօրք հիւսիսոյ իշխանին են։ Իսկ նորա երթեալ,
և ոչ կարաց գիտել՝ թէ ո՛ր ոք են։ Դարձաւ և ասէ.
Փախո զԳրիգորդ յանհոգս ուրեք, հանդերձ ըն-
կերօք իւրովք. զուցէ ըմբռնիցեն զդա, և մեք ա-
մօթ կրիցեմք 'ի թագաւորէն։ Եւ զու առաքեա
զոք զկնի զօրաց մերոց, զի դարձցին յետս. քանզի
ռազմ է բազում զօրաց, և բազում դրօշք երևին
փողփողեալք։

Իսկ իշխանն Ընգեղ տան տայ զՅոն Գրիգոր 'ի
ձեռն իշխանին Մոկաց, և ասէ. Փութացո յամուրն
Ողկան, մինչև տեսցուք՝ թէ զի՞նչ լինիցի. և ինքն
առաքեաց զկնի զօրացն՝ ազդ առնել։ Իսկ իշխանն
Մոկաց առեալ զԳրիգորիոս, դառնայ ընդ զառ 'ի
վայր բլերն՝ կամելով իջանել 'ի Կուառս։ Իսկ արք
տեղւոյն սկսան զանց Ճանապարհին պահ ունել. զոր
տեսեալ սրբոյն Գրիգորի՝ թէ մեծ վտանգ է 'ի տե-
ղւոջն, իջուցեալ զնշխարս մերձ առ աղբեր մի յայն
կոյս ձորոյն հանդէպ գեղջն, դնէր և նշանագրէր
զտեղին։ Եւ ծածկեաց ետ զնշխարսն, և ոչ ոք կա-
րաց տեսանել մինչև եբն Գրիգոր դարձաւ 'ի տեղին։

Իսկ արք գեղջն հետամուտ եղեն մեզ. և մեք հե-
ծեալ յիւրաքանչիւր երիվարս, փախստական գնա-
ցաք յամուրն Ողկան. և յառաջեալ քան զնոսա մտաք
'ի ներքս, քանզի ընդդէմ եկին արք տեղւոյն, և
մուծին զմեզ 'ի ներքս։ Իսկ արք գեղջն եկեալ ան-
ցին յայնկոյս 'ի քաղաքն Կուառս, և ազդ արարին
նոցա զմէնջ. զոր լուեալ յայսկոյս անցին, և զամրոցն
սկսան պաշարել։ Իսկ մեր 'ի վարանս մտեալ, յղե-
ցաք զիշերագնաց զոմն առ իշխանն Ընգեղ տան, և
թղթով ծանուցաք զկրսն։ Իսկ նորա ջորեք հազար
արանց ընտիր սուսերաւորաց առաքեաց. որք 'ի վա-
ղիւն եկեալ անցին յայնկոյս գետոյն։ Եւ յետ երից
աւուրց պաշարեալ զքաղաքն աւերեցին, և զպա-
րիսան հիմնայատակ արարին, և զմարդիկ քաղաքին
բերեալ 'ի Մեղտի անցուցին։

Իսկ իշխանքն իբրև լուան՝ ելին 'ի վերայ բլերն, և
տեսին զԸրձանն, զի արս ջորեքհարիւր լոկ՝ թէ աւելի
կամ պակաս՝ ունէր ընդ իւրն։ Աղվաղակի 'ի վե-

րայ յարձակեալ քաջ իշխանացն, 'ի փախուստ դարձուցանէին զԱ.րձանն. իսկ այլ զօրքն Հայոց իբրև լուան զձայն գուժին, վաղվաղակի ամենեքեան անդր 'ի բլուրն հասանէին։ Իսկ Ա.րձանն յառաջ մատուցեալ՝ սկսաւ թշնամանել զիշխանն Հայոց, և ասէ. Յառաջ մատիք, ո՛վ դենակորոյսք, և ուրացողք ըզհայրենի ՝ածն, և թշնամիք բարեփառին Պարսկաստանի. ո՞չ գիտէք զի այսօր Պարսկաստանի 'ի պատերազմ եղեալ է ընդ ձեզ, և մատնելոց է զձեզ 'ի ձեռս մեր, և հարկանելոց է զձեզ կուրութիւն և մահուամբ։ Իսկ իշխանն Ա.րծրունեաց 'ի մէջ անցեալ, ասէ. Ո՛վ որ խրոխտասդ 'ի վերայ մեր. եթէ վասն աստուածոցն մարտնչիս, սուտ ես. և եթէ վասն երկրիդ, քնաւ իսկ անմիտ ես. զի այս իշխանն է Ընդեղ տան, և իշխան Սիւնեաց տանն, և այլք 'ի պատուաւորաց՝ զորս դուք իսկ ճանաչէք։ Իսկ Պեմետրորդի Ա.րձանն ասէ. Ի ուարուք մեզ իշխանքդ Հայոց. այս քառասուն ամ է՝ զի ծառայեմք մեծի աստուածոցն, և գիտեմք զզօրութիւն նոցա, զի ընդ թշնամիս պաշտօնէից իւրեանց ինքեանք մարտնչին։ Ա.րդ մեք պատերազմաւ ձեզ չկարեմք ընդդիմանալ. զի այս տուն է թագաւորին Հայոց, և դուք իշխանք նորա։ Բայց այս ձեզ յայտնի լիցի, որ թէպէտ մեք ձեզ յաղթել ոչ կարեմք, սակայն լաւ է այսօր մեռանել 'ի վերայ աստուածոցն մերոց՝ քան թէ զտաճար նոցա 'ի ձէնջ ապականեալ տեսանեմք, որով և զկեանս ատեցաք և զմահ սիրեցաք։ Բայց որ իշխանդ ես Ընդեղ տան՝ յառաջ մատիր, զի մենամարտեսցուք ես և դու։

Յայնժամ 'ի մէջ անցեալ իշխանն Ընդեղ տան և Ա.րձանն, և սկսան անցանել շուրջ զմիմեանսք. և աճապարեալ Ա.րձանն եհար տիգաւ 'ի վերայ բարձից նորա, և մերձ տարաւ յընկենուլ զնա։ Իսկ իշխանն դարձեալ 'ի վերայ նորա, ասէ. Պիտեա զայս, Ա.րձան, զի տեղւոյս այս Ա.րձան են կոչելոց. զի քեզ արձանանալ պիտի յայսմ վայրի։ Եւ 'ի վեր ամբարձեալ զձեռն իւր՝ ինջուցանէր զսուրն 'ի վերայ աջոյ թիկանցն, և 'ի բաց ձգէր զպարանոցն հանդերձ ձախ թիկամբն և ոտամբն։ Եւ նորա անկեալ յերկիր թաւալէր. և կուտեցին արձան 'ի վերայ նորա,

և կայ 'ի Թաղման 'ի նմին տեղւոջն՝ որ դեռ ևս Ա.ր-ձան կոչի անուն լերինն։

Այս մինչ այս այսպէս գործեցաւ, փութանակի եկին հասին զորքն քրմաց 'ի Ալ իշապ քաղաքէ, և արք Պարտիոյ և արք Մեղտոյ ամենեքեան առ հասարակ անդր հասանէին։ Այլ այլք յԱ.ստղծնից եկեալ ընդ նոսա, ընդ ամենայնն, որպէս և ինքեանք յետոյ ասէին, հինգհազար չորեքհարեւր և յիսուն այր։

Իբրև հասին 'ի գլուխ լերինն, ձայն գուժեաց յերկոսեան գունդսն. և միաւորեալ դասք քրմացն ընդ միմեանս, յարձակեցան 'ի վերայ զօրացն Հայոց, և փախստական արարեալ իջուցին զնոսա զառ'իվայր լերինն ընդ գեղջն կողմանէ։ Իսկ արք գեղջն այնորիկ քանզի դարանամուտք էին, ընդդէմ եկեալ մերոց զօրացն, և յերկուց կողմանց 'ի մէջ առեալ զզօրսն Հայոց, սկսան կոտորել։ Իսկ իշխանն Ա.նգեղտանն հերձեալ զքրմացն կողմն, և անցանէր յետուստ կողմանէ, և ուշ բլերն առնէր. զի անդ արք հետևակք, որ զառ'իվերին կողմանէն էին, բազում ինաս արարին վիմաք երիվարացն։ Իսկ Ոեմետր իբրև ետես՝ եթէ Ա.նգեղտան իշխանն 'ի բլուրն էլ, թողեալ զզօրսն՝ ուշ նմա արարեալ, նոյնպէս և այլ զօրքն սկսան ձիախաղաց անդր ժողովել։

Իբրև ելին 'ի վերայ բլերն, Ճակատեցան դարձեալ առ միմեանս։ Այս կային մնային իշխանքն մեր զօրուն իւրեանց, զի դեռ ամենեքեան չէին ժողովեալ. քանզի չորեք հազար այր դեռ 'ի Մեղտի զգերիսն ունէին, իսկ երեք հազարն անցին ընդ Ասսեան և ընդ Հաբը. իսկ այլքն դեռ 'ի դաշտի անդ սփռեալ ասպատակէին։ Այս յորժամ Ճակատեցան առ միմեանս, և կամէին խառնել ընդ իրեար, ժամանեաց նոցա երեկոյ. և 'ի նոյն վայրի իջեալ բանակեցան մինչև ցառաւօտն։ Այս իբրև առաւօտ եղև, եկին հասին 'ի նոյն տեղի մնացեալք[1] զօրուն Հայոց, և այլք ոմանք 'ի Տիրակատարն քաղաքէ, որպէս թէ արք հինգ հարեւր, եկին օգնել[2] քրմացն։ Ա.րդ իբրև հարստացան երկոքին

1 'Ի միում օրինակի ճանչեալ։ 2 'Ի միում օրինակի յոգնք քրմացն։ որդիք զզրոնն Հայոց։

կողմանքն, և էին վեց հազար ինն հարեւր քառասուն և վեց արք քրմացն, իսկ հինգ հազար և ութսուն զօրք իշխանացն Հայոց, ապա հնչեցուցին զփողս պատերազմացն, և դիմեցին իւրաքանչիւր այր 'ի դէմ առն դիպանաւորի. զառաջինն յաղթեցին զօրքն Հայոց՝ քրմացն։ Իսկ 'ի նոյն ցեղէն Մեմերուայ իշխանն Հաշտենից, որ էր ընդ զօրսն Հայոց, կտրեալ եօթն հարեւր արամբք 'ի քրմացն կողմ ելանէր[1]. և սկըսաւ կռուել ընդ իշխանս Հայոց։ Իբրև տեսին զօրքն Հայոց զնա, լքան և յերկիր կործանեցան. զի այնպիսի տյրն այն յաղթող և հմուտ պատերազմի և կորովի, մինչ զի ամենայն իշխանքն Հայոց դողային 'ի նմանէ։ Լու յանիմաստ սկսաւ արեան Ճապաղիս հանել. և ամենայն զօրքն զաղաղակ բարձին առ իշխանն Միւնեաց։ Իսկ նորա ձայն տուեալ, ասէ. Մ՚ոյ գայլակորիւն, յիշեցեր զբարս հօր քո, և 'ի նոյն շաղղակերուութի դարձար։ Իսկ նա ասէ. Մ՚ոյ արծուոյ ձագ, թեւաքդ ես հպարտացեալ. բայց եթէ 'ի շար[2] ակնատացս անկանիս, ես ցուցանեմ քեզ զիմ զօրութիւնս։ Իսկ իշխանն Միւնեաց չանդուրժեաց առ թշնամանսն. յարձակեալ 'ի վերայ նորա, եհար մըրՃոփն 'ի վերայ սաղաւարտին, և կտրեալ զնա 'ի զօրացն, և փախստական արար զնա 'ի վերայ լերինն ընդ արևելս կոյս։ Լու հանեալ հանդէպ ինքնակնեան վայրուցն՝ մղեալ ընկէց յերիվարէն, և իջեալ՝ դանակաւ կտրեաց զգլուխ նորա. և զմարմինն գահավէժ արարեալ, ասէ. Ցեսցեն զքեզ անդեղք, և զիտասցեն՝ եթէ արծուոյ հարեալ է զնապաստակդ։ Լու ինքն դարձաւ։ Որ մինչև ցայսօր Մ՚ըծուիք կոչեն տեղոյն։

Իսկ իշխանն Մ՚ըծրունեաց 'ի մէջ անցեալ՝ կտրեաց զքրմապետն Մ՚շտիշատայ, որոյ անունն էր Միտակէս[3]. և տարաւ փախստական մինչև 'ի գլուխ լե-

1 Յերկուս օրինակս ընդ զօրսն Հայոց, հանդերձ եօթն հարիւր արամբք յոյն իսյս եանց, և էին ընդ երդն Դիմերրիայ. և սկսաւ արամբք իւրովք։

2 'Ի միւսմ ևեթ օրինակի 'ի լոր սկանապոյս։

3 Յերկուս օրինակս պակասէր հատուածս սրոյ անունն էր Միտակէս։ Իսկ զանուն քրմին ուղղեցաք Միտակէս որպէս յիշատակի 'ի սուրբն ըստ երից ձեռագրաց. զի երկու այլք ունէին Միտակէս։

րինն՝ ընդ գիտան վայրուցն։ Եւ իբրև եհաս նմա, ընդդէմ դարձաւ Ամետակէսն, և եհար զբարձս նո-
ցա. իսկ նորա ջեռեալ յարենէ խոցուածին, աճա-
պարեալ կտրեաց զթիկունս, և պարանոցաւն 'ի բաց
ընկէց, և զդի նորա դարահոս արար. զոր և Ամետ-
սակող[1] կոչէն զանուն տեղոյն։

Իսկ իշխանն Արջուց[2] փախուցեալ 'ի նոյն վայրս թա-
գեաւ. զոր տեսեալ իշխանին Արծրունեաց՝ որպէս
թէ ընդ չտես[3] արար, և գնացեալ մերձեցաւ առ նա.
և յանկարծակի յարձակեցաւ 'ի վերայ նորա։ Իսկ
նորա փախստական եղեալ ընդ անդառն, կտրօն փայ-
տի էանց ընդ սիրտ նորա և ընդ լեարդն, և անդէն
մեռաւ։ Իսկ նորա առեալ զերկոսին երիվարսն և
դարձաւ. և անուանեցաւ տեղին այն Արջուց ձոր։

Եւ իբրև դարձաւ անտի, եկեալ հանդիպեցաւ զի
Գոմերտը և իշխանն Անդեղ տան մարտնչէին ընդ մի-
մեանս։ Եւ նորա 'ի վերայ յարձակեալ, կտրեաց
զաջոյ ուս նորա, և 'ի վայր ընկէց. և կտրեաց զգը-
լուխ նորա, և ձգեաց 'ի մախաղ իւր. և դարձաւ։
Եւ յարձակեալ 'ի վերայ զօրացն, յանխնայ կոտո-
րեալ գիթաւալ առնէին իբրև արս հազար երեսուն
և ութ. և զայլսն մերկացուցին։ Եւ 'ի նոյն պատե-
րազմին եսպան Գոմերտը զորդի Մոկաց իշխանին. որ
և մեծ սուգ եհաս իշխանացն Հայոց։

Արդ իբրև մեռաւ Գոմերտը 'ի նոյն պատերազմին,
հնչեցոյց իշխանն Սիւնեաց զփողս պատերազմին 'ի
խաղաղութիւն. և լուեցին երկոքին կողմանքն 'ի կոտո-
րելոյ զմիմեանս։ Զոր իբրև տեսին արք կողմանցն,
որ քուրմքն էին, աղաչեցին զիշխանն 'ի խաղաղուն,
զի թաղեսցեն զմեռեալս իւրեանց. և թոյլ ետուն։
Եւ ժողովեցին զամ կոտորեալսն յերկոցունց կող-
մանցն. և հատեալ գերեզմանս՝ լցին զնոսա 'ի ներքս,
և կանգնեցին 'ի վերայ գերեզմանացն արձանս, և
գրեցին 'ի նմա այսպէս.

1 'Ի միում ձեռագրի Մէ-
սէ. 'ի միւս այլ Մեսէ-ղ։

2 Յերիս օրինակս Արջոյ։

3 Յերիս օրինակս «դպէ» Բէ ընդ
լեռնալս «դպ»։

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՈՐ ԵՂԵՒ ՅՈՅԺ ՍԱՍՏԻԿ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԳԼԽԱՒՈՐ ԱՐՁԱՆ ՔՐՄԱՊԵՏՆ ՈՐ ԿԱՑ ԱՅՍՐ Ի ԹԱՂՄԱՆ ԵՒ ԸՆԴ ՆՄԱ ԱՐՍ ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՈՒԹ ԵՒ ՉԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄ ԱՐՄԱՌ ՎԱՄՆ ԳԻՍԱՆԵԱՑ ԿՈՒՈՑ ԵՒ ՎԱՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Օ այս գրեցին ասորի և հելլենացի գրով, և յոյն և իսմայելացի նշանաւ[1]։ Յե ինքեանք իջին երեկօթս առնել յիննակնեան տեղոջն. և փութապէս կոչնական արարին սրբոյն Գրիգորի, և ինքեանք մնացին անդէն։ Մնանք 'ի դիտանոցն մնացին, և այլ զօրքն 'ի մարգՃակին իջևանս կալեալ առ քաղցր աղբերն անտառին։

Իսկ մեք 'ի յամրոցէն ելեալ, եկաք ընդ նոյն Ճանապարհ ընդ որ փախստական գնացաք։ Իբրև եկաք 'ի վայրս գեղջն, մոլորեցաք. քանզի գիշեր էր։ Այց մինչ դեռ գայաք առ ափամբ այգեստանեացն, յանկարծակի ծագեաց լոյս սաստիկ առաւել քան զՃառագայթս արեգականն 'ի նշխարացն՝ զոր պահեալ էր սրբոյն Գրիգորի։ Յե այնչափ ծագեաց, մինչև ամ բնակիչք գեղջն 'ի դուրս ընթացեալ արք և կանայք ծերք և տղայք 'ի տեսին, և հիացեալք՝ սկսան զղջանալ։ Յե նոյնժամայն բարձեալ տարան գնըշխարան մինչև 'ի մէջ գեղջն, և պաշտօն ցնծութիւն կատարեալ մինչև ցառաւօտն, և 'ի վաղիւն բարձեալ՝ եկաք յԱ.ըձանն, և ընթերցաք զգիրն։ Յե բազում ժամն արտասուեալ սրբոյն Գրիգորի վասն 'ի զուք կոտորածին, և ապա առեալ զալ թեկն Ա՝կրտչին՝ տեառնագրեաց շուրջ զամ կողմանքն գաւառին, ասելով. Յղիցի ալ ամն 'ի վերայ երկրիս այսորիկ, պահել 'ի թշնամեաց. և թէ վասն մեղաց տանջեցան 'ի ամնէ, սակայն թշնամիք սորա մի յերկարեսցեն, այլ չարեաք սատակեսցին։ Յե մի հերձուածողք բնակեսցեն յայսմ աշխարհս. ալ սրբոյ Կարապետին է

1 Յերկուս օրինակս ասորի և հելլէնացի և յոյն գրով, և իսմայէլացի նշանաւ։

ղեցի կնիք և պահպան, և միանգամայն եղեցի տունս այս շինուած յաւիտենական ազգայ յազգս։

Եւ ասացեալ մեր զամէնն, ձայն դղրդի[1] եհաս յա-կանջս մեր։ Եւ իբրև եկաք ինքաք յիննակնեան տե-ղիսն, ընդ առաջ եղեն[2] մեզ իշխանքն Հայոց, աւետիս տալով մեզ՝ եթէ Ներսեհ կործանեցաւ։ Եւ իբրև եկաք 'ի տեղին, տեսաք զտեղի կռոցն քանդակեալ. և զկուռսն, որ հնգետասան կանգուն էր, ընդ չորս բաժանեալ։ Եւ պաշտօնեայք կռոցն զաղաղակ բար-ձեալ՝ ողբային չարաչար, որ և դևքն 'ի լսելիս մարդ-կան կոծէին՝ ասելով. Վա՜յ մեզ, զի և ոսկերք մարդ-կան մեռելոց հալածեն զմեզ յերկրէս։ Եւ մարդկո-ւէն տեսլեամբ որպէս թեւաւորք ելեալ գնացին յԱ-տիշատի կուռսն։ Ոսկ այլք 'ի դիւացն իբրև զսի-ծակս անհուն բազմութք, կամ թէ որպէս թանձրամած տաղտարափս՝ այնպէս յարձակեալք 'ի վերայ բազ-մութեն, և զքուրմն առ հասարակ լլկեալ՝ թողին իբ-րև զմեռեալս։ Եւ մատուցեալ 'ի Երիգորի, բժիշ-կեաց գնոսա. և հրամայեաց կործանել զԻսանէս, քանզի պղնձի էր՝ երկոտասան կանգուն երկայնութ[3]։ Իբրև մատեան կործանիչքն 'ի ներքոյ նորա, զոր տե-սեալ պաշտօնէիցն՝ բազում ողբովք 'ի վերայ յար-ձակեալք, ասէին. Երեցուք նախ մեք, և ապա մեծն Իսանէս կործանեսցի։ Ոսկ զօրացն 'ի մէջ առեալ զքուրմն սպանին արս վեց. և ապա կործանեցին զդուրս մահուն։ Ոսկ դևքն ձայն բարձեալ, ասէին. Թէպէտ և դուք զմեզ աստի հալածէք, բայց որք աստ կամին բնակիլ, և նոցա մի լիցի հանգիստ։ Այլ չէ անհաւատալի. զոր օրինակ ընդ դրունս քաղաքի զօրք բազում մտանեն, նոյնպէս և այս տեղիս դուռն էր դիւաց. զի այնչափ էին դևքն 'ի տեղոջն Իսա-նէ, որչափ 'ի սանդարամետս անդնդոց։

Իբրև կործանեցին զօրքն զկուռսն, սկսաւ սուրբն Երիգոր հիմն արկանել եկեղեցւոյ։ Եւ վասն զի ոչ գոյր նոցա նիւթ պատրաստ, առեալ քարինս անկազմն

1 Ցերկուս օրինակս յայն դղրդոց։
2 'Ի միում օրինակի ընդառաջքն։
3 Ցերկուս օրինակս զԻսանէս. որ էր երեսուն կանգուն երկայնութեամբ, Ռին պղնձի պատկերին։

և անտաշս, և գտեալ կիր 'ի բնակուիս կռոցն, սկիզբն արար եկեղեցոյ 'ի տեղիսն՝ ուր կուռքն Կերմերեայ էր լեալ՝ ըստ նորին չափոյ։ Այլ արար անդ աւուրս երկոտասան, և կամէր զնշխարս սրբոյ Կարապետին զամէնն աստ դնել, բայց ոչ էառ հրաման 'ի նմանէ։ Այլ զհասարակն առեալ դնէր 'ի տապան բրտեայ[1], զի հողեղէն է և ոչ ոսկեղէն. վասն այնորիկ ոչ է պարտ ոսկով պատել զմեռեալ մարմին մարդկան։ Այլ եդ զնոյն տապանն 'ի նոյն պղնձի տապանն. և եդ անդ զմի ակն լուսոյ, զոր Եբեր 'ի Կեսարիոյ՝ անուն լիգրոն։ Այլ ոչ եթէ յայտնապէս ումեք դնէր, այլ զտեղին 'ի ծածուկ կազմեալ, և 'ի գիշերին առեալ բրիչս ես և Աղբիանոս եպիսկոպոս, բրեցաք երկու առնաչափս, արկեալ 'ի նեբբոյ խիճս քարանց, և եդաք անդ զնշխարս սրբոյ Կարապետին։ Այլ այս էին զոր եդաք. զաջ թեկն մինչև ցարմուկն, և զձախ ձեռն թիկամբն հանդերձ, և զոսկր բարձուց աջակողմանն, և այլ մանր ոսկերս 'ի մարմնոյն։ Իսկ զԱթանագինէին զգլուխն և զաջ ձեռն մինչև ցդօտին զնամ հատեալ ընդ մէջ, և զնորայն եդաք 'ի կաւէ տապան։ Օ՜ որ թէ ստուգիւ կամիք իմանալ, ցՊիսիդոն թարգմանիչ ասորի իսկ հարցէք, և նա ասէ ձեզ։ Զանգի Կարապետին առ անկեան դրանն Աղշակունի, թզաւ մի հեռի գտանես զբևեռանշանին 'ի մոիցն, կէս թզաւ բարձր 'ի գետնոյն և յաջմէ եկեղեցւոյն։ Օ՜ որ գրեալ է սուրբն Գրիգոր 'ի տախտակս պղնձի, Նա եդեալ 'ի բեմի անդ՝ թէ կին ոք մի իշխեսցէ մտանել ընդ դուռն եկեղեցւոյդ. զի մի կոխելով զպատուական նշխարսն, անհաշտ խռովութիւն լիցի այր ընդ նոսա՝ որ մտանէնն և ակնարկէն ընդ նա իսկ. զոր և Պիսիդոն իսկ ընթերցեալ է զտախտակն։

Իսկ Աթանագինէին առ նոյն սեամն հուպ ընդ ձախակողմ անկիւնին[2]. և այնպէս անյայտ կան 'ի պահեստի, զոր և թէ գտանել ոք կամի բևեռայն նշանաւոր՝ չիք հնար, թէ և քառասուն կանգուն փորիցեն. զի պատճառ իրացն այս եղև։ Յորժամ պահեցաք

1 Ցերկուս օրինակս Բրբենոյ։ Գինէ հուպ առ ուեռան ընդ յոյ-
2 Ցերիս օրինակս Իսկ Անանա Խղիեանն։

զնչխարս սրբոյն, երիցս անգամ ծունր կրկնեալ սրբոյն Գրիգորի մուք հանդերձ, և յարուցեալ տա-բաձեաց զձեռս իւր ընդ արևելս, և ասէ.

Աստուած աստուծոց և Տէր տերանց, որ կատարեաս զկամն երկիւղածաց քոց, և ոչ անտես առնես զաղաչանս այնոցիկ՝ որ խնդրեն 'ի քէն. դու Տէր, որ պահեցեր զսա և ածեր մինչև 'ի տեղիս յայս, ձգեա՛ զաջ քո 'ի վերայ տապանաց սոցա, և կնքեա անվթար զբրութիւն քով զոսկերս սոցա, զի մի՛ ոք կարասցէ հանել զսոսա աստի և գտանել մինչև յօր կատարածի աշխարհի և նորոգման սոցա և Ամ սրբոց։ Եթէպէտ և 'ի սրբոց ոք ջանայցէ հանել, աղաչեմ մի՛ լուիցես նոցա աղօթիցն. այլ որք յուսով և հաւատով խընդրեսցեն զբժշկութիւն 'ի դուռն սրբոյ Կարապետիս, բժշկեսցես զնոսա։ Այլ միայն թէ կամք քո իցեն թողուլ զնոսա 'ի ցաւս իւրեանց, զի տանջեալ մարմնով՝ ապրեսցին հոգւով 'ի հանդերձեալ դատաստանին։ Իսկ զդասս պաշտօնէից սորա պահեա, որ զդուշութիւն ծառայեն քեզ և սրբութիւն 'ի Տէր եկեղեցւոջս. զի դու միայն ես կարող յամենայնի, և քեզ փառք յաւիտեանս։

Այս մեր ասացեալ զամէնն, եկն ձայն յերկնից որ ասէր. Աղեցի քեզ որպէս և կամիս, մի՛ ոք գտցէ ըզդոսա հանելոյ պատճառաւ[1]. և որք ծառայեն ինձ՝ Տէր և անկեղծաւոր վարուք 'ի տեղւոջդ, մանաւանի լիցին դոցին բարեացն։ Այս շարժեալ ծածկեցաւ տեղին։ Իսկ 'ի վաղիւն ածեալ առաջի Միւնեաց իշխանին քուրմն մի, աղաչէին՝ զծածկեալ տեղիս դանձուցն ցուցանել և զդրունս գետնափոր տանն. և ոչ ասաց, այլ մեռաւ 'ի նոյն կախաղանին։ Այս ոչ եղև հնար գտանել. Թէպէտ և կարծէին ընդ հիմամբքն եկեղեցւոյն լինել, ուր Գեմետրեայ տաճարն էր։ Զանազի հին եկեղեցւոյն եդաւ 'ի նոյն տեղիս, նոյն չափովն լայնութիւնն և երկայնութիւնն. բայց միայն զի նոքա յարևմուտս երկրպագէին։ Նոյնպէս քննէին և զտաճարն Գիսանէին 'ի վեր բերել, որ էր առ

1 Յերիս օրինակս Ա Ֆ -ի գիրս ոչ զոսա ըստ հանելոյ խոշման։

յորդ աղբերն յարևելից կուսէ, որպէս երկուս քայլս մարդոյ հեռի գոլով, և ոչ գտին։

Իբրև լցան նոցա անդ աւուրք ինն, երթեալ իշխանն Միւնեաց յաւանն Կուառս, հաւանեցոյց զզօրս գեղջն՝ գալ 'ի մկրտութիւն. որք յանձն առին և եկին ընդ նմա։ Յաւ առեալ սրբոյն Գրիգորի ի ջուցանել ըզ նոսա 'ի ձորն Բ.ՅԾանայ [1] և մկրտեաց զնոսա. որ էր յարևելից կուսէ հանդէպ ԿաՃկոնից՝ Բ.ստղանից բերդին։ Յաւ մկրտեաց զնոսա քրիստոսազարդ օծմամբն, առնելով հաւատացեալս 'ՊՐ երրորդութեն։ Յաւ երևեցոյց 'ՊՐ լոյս մեծ 'ի սեան հրեղինի 'ի վերայ մկրտելոցն. և կացեալ երիս ժամս լոյսն 'ի վերայ սիրալի քահանայապորձութեանն, և անդէն ծածկեցաւ 'ի տեսողացն։ Յաւ որք մկրտեցանն էին, արք և մանկտի, ոգիք հինգ հազար և յիսուն։ Յաւ առեալ ածէ զնոսա 'ի տէրունական տաՃարն, և տօն սրբոյ Կարապետին տայր կատարել որ օր մի էր նաւասարդի։ Յաւ տուեալ զնոսա 'ի ձեռս քահանայիցն, ետ տանել 'ի գեւղս իւրեանց։ Յաւ հրամայեաց քահանայիցն նշան փայտեայ կանգնել ուր զնշխարսն եդիտ, և 'ի մէջ գեղջն. և զկանայսն անդ մկրտել։ Իբրև եղև այս ՊՐ, ժողովել տայր 'ՊՐ զմանկունս քրմացն և զպաշտօնեայս կռոցն, և աղաչէր զնոսա՝ դառնալ առ 'ՊՐ 'ՊԾ։ Իսկ նոքա ոչ առնուին յանձն, այլ ասէին ցիշխանն. Ո՞ այս բանս 'ի միտ առէք, որ թէ ապրիմք՝ փոխարէնս առնեմք ձեզ. և թէ մեռանիմք, աստուածքն հատուցանեն զվրէժս մեր։ Յաւ լուեալ զայս իշխանն Բ.նդեղ տանն, ետ տանել զնոսա 'ի Գայ տակարան քաղաքն 'ի տուն բանդի արս չորեքհարիւր երեսուն և ութ՝ գերծեալ զգէս նոցա։

Բ.յլ և յոյժ զարմանալի էր տեսիլ նոցա, քանզի սեք էին և գիսաւորք և զազրատեսակք, զի ցեղով 'ի հնդկաց էին։ Յանզի և կռոցն, որ յայս տեղոջ էին, պատՃառն այս է։ Գեմետր և Գիսանէ իշխանք էին հնդկաց, և եղբարք ցեղովք. դաւ ինն խորհեալ նոցա Գինաաքեայ արքային իւրեանց, զոր իրազեկ է

1 Յօրինակի մեում 'ի յոր Եմանոս. զոր և այլ օրինակ 'ի լուսանցն յաւելու։

զեալ արքային՝ առաքէ զոր զՀետ նոցա , կամ սպա-
նանել , կամ յերկրէն հալածական առնել ։ Իսկ նո-
ցա լեալ մաղապուր՝ անկան առ Թագաւորն Ա ա-
ղարշակ . և նա ետ նոցա զերկիրն Ծարօնոյ իշխա-
նութիւն . զոր ինքեանք շինեցին քաղաք , և կոչեցին
Ա իշապ ։ Ամբ եկեալ Յ.շտիշատ , և կանգնեցին ըղ-
կուռան զայնոսիկ յանուն կռոցն զոր՝ի հնդիկսն պաշ-
տէին ։ Այլ յետ հնգետասան ամի սպան Թագաւորն
զերկոսին եղբարսն , ոչ գիտեմ թէ վասն էր , և ետ
զիշխանութիւն երից որդւոց նոցա Կուառայ և Մեղտեայ
և Հոռենայ ։ Իսկ Կուառ շինեաց զաւանն Կուառս ,
և վասն անուան նորա կոչեցաւ Կուառս ։ Իսկ Մեղ-
տէս շինեաց՝ի դաշտի անդ իւր աւան , և կոչեաց զա-
նուն նորա Մեղտի ։ Իսկ Հոռեանն շինեաց իւր ա-
ւան՝ի գաւառն Պալունեաց , և կոչեաց զանուն նո-
րա Հոռեանս ։

Այլ յետ ժամանակաց խորհուրդ՝ի մէջ առեալ
Կուառ և Մեղտէս և Հոռեան , ելեալք՝ի լեառն
Արարքեայ , և գտին զայն տեղին բարեհամ և գեղե-
ցիկ . զի ընդարձակութիւն էր որսոց և հովասուն ,
խոտոյ և փայտի առատաձեռն . և շինեցին անդ դաս-
տակերտս ։ Այլ կանգնեցին երկուս կուռս , զմինն յա-
նուն Դիսանեայ , և զմինն յանուն Դեմետրեայ ։ Այլ
ետուն նոցա՝ի սպասաւորութիւն զազգս իւրեանց ։
Դիսանէս զի գիսաւոր էր , և վասն այնորիկ նորա
պաշտօնեայքն գէսք էին թողեալ . զոր հրամայեաց
իշխանն կտրել ։ Զի ազգն այն յորժամ՝ի Դ դար-
ձան , չէին կատարեալ՝ի հաւատն , և զՀայրենի օ-
րէնսն չիշխէին յայտնի ունել , այլ խաբէութիւն զայս
հնարեցան . ծամ միայն թողուլ՝ի գլուխ մանկանցն ,
զի զայն տեսեալ՝ յիշեսցեն զպաշտօն պղծութիւն իւ-
րեանց ։ Զոր և ես ազատեմ զձեզ , զդոյշ կացէք՝ զի
մի այս և՝ի ձերում երկիրդ սերմանեսցի , և մի լի-
նիջիք ընդ անիծիւք ։ Այլ մեք յառաջինն դարձցուք
՝ի կարգս և՝ի բանս ։

Իբրև հիմնարկեաց՝ որն Դրիգոր զեկեղեցին , և եդ
անդ գնչխարսն , և կանգնեաց անդ փայտեայ նշան
տէրունական խաչին՝ի դուռն եկեղեցոյն և՝ի տեղի
կռոցն Դիսանեայ , և եթող անդ պաշտօնեայս է-

կեղեցոյն զԱնտոն և զԿրօնիդէս։ Եւ զԴպիփան հայր հաստատեաց վանաց ընդ ձեռամբ իւրով. և ե թող 'ի տեղոջն արս կրօնաւորս քառասուն և երեք, և երկոտասան դաստակերտս ետ նմա, զի տեղեացն ծառայեսցեն։ Յորոց մինն Կուառս, և Մեղտի և Արեխ և Մուշ և Խորնի և Կեղք և Ռուզու։ Զանազի աւանք են սոքա մեծամեծք, որպէս կայ 'ի գրի իշխանացն մամիկոնենից։ Զանազի Կուառս ունէր երդահամարս երեք հազար և երկոտասան, և հեծեալս հազար և հինգ հարեւր։ Եւ Տում [1] ծուխս ինն հարեւր, և հեծեալս չորեք հարեւր։ Եւ Խորնի ունի ծուխս [2] հազար ինն հարեւր և վեց. հեծեալս եւթն հարեւր [3], և հետևակս հազար և եւթն։ Իսկ Արեխ [4] ծուխս հազար վեց հարեւր և ութսուն. հեծեալս հազար և երեսուն, և հետևակս չորեք հարեւր [5]։ Իսկ Կետեղք [6] երդս հազար և վեց հարիւր, և հեծեալս ութ հարիւր, և հետևակս վեց հարիւր։ Իսկ Ռուզու [7], որ թարգմանի բազմաց կայեան, ծուխս երեք հազար և երկու հարիւր, և հեծեալս հազար և քառասուն, և հետևակս աղեղնաւորս ութ հարեւր և քառասուն [8], և տիգաւորս վեց հարեւր և ութսուն. և պարսաւորս երկերեւր և ութսուն։ Եւ ընդարձակեալ ունէին սոքա իւրեանց խաշանց արօտականս զգաւառն Հաշտենից։ Զոր այս աւանագեղք 'ի բնէ տուեալ էին կռոցն 'ի ծառայութիւն, զոր և իշխանքն դարձեալ հաստատեցին 'ի սէր եկեղեցոյն յամն երեսուն և երկու թուով [9]։ Զայս այսպէս կարգեալ է սրբոյն Գրիգորի։

Զոր յետ երկոտասան աւուր երթեալ իշանէաք 'ի քաղաքագեղն Մեղտի՝ և անդ երեկօթս արարեալ,

1 Յերկուս օրինակս Տումբ. յայլսում օրինակի Խրդում։

2 Յերկուս օրինակս Եւ Խրդնի երդս հազար ևն. յայլսում Խոհրնի։

3 Յերիս օրինակս հազար եւ-ին հարիւր. յայլսում հազար ռն։

4 Յերկուս օրինակս Պարեխ երդս։

5 Յերիս օրինակս հեծեալս ռն հարիւր, և հետևակս վեցհարիւր։

6 'Ի միում օրինակի Կեթղէ. յայլ երիսն չիք։

7 Յերկուս օրինակս Բազում։

8 Յերիս օրինակս հեծեալս երեսուն հազար և քառասուն, և հետևակս աղեղնաւորս եւ-ին հարիւր և քառասուն։

9 Յերիս օրինակս 'ի վերայ եկեղեցոյն յամս և ի թուով. յայլսում օրինակի յամս . և 'ի միւս այլ յամս երեսուն և ռն։

և 'ի մէջ գիշերին եկն այր մի, և գոյժ էարկ՝ եթէ արք հիւսիսոյ գան 'ի վերայ մեր։ Իսկ մեք դէմ է-դեալ կամէաք անցանել յայնկոյս գետոյն յամրոց մի կուսեցեալ Թարձենք[1]։ Եւ իշխանքն անցեալ գնա-ցին մինչև 'ի դուռն Ուշքաղաքին, և տեղեկացեալ զի ոչ ինչ գոյր, և ապա դարձան և եկին ընդ առաջ մեր. և դարձուցեալ զմեզ յերեսացն Երածանու, ոմանք անցեալ մտին 'ի քաղաքն յառաջագոյն, իսկ ոմանք ընդ մեզ երթային։ Իբրև հեռացաք 'ի գե-տոյն իբր ձիոյ արշաւանաք երկու կամ երեք, և իբ-րև մերձեցաք առ փոքր ձորակին, և կամէաք անցա-նել միաբան և գնալ 'ի տեղի մեհենիցն, քանզի անդ իսկ էր խորհեալ գնել զմնացեալ նշխարսն, ապա ջո-ղիք կառացն յայն կոյս ձորոյն ոչ կարացին անցանել, և նստան։ Ապա հրեշտակն յայտնեալ՝ արդել զԳրի-գորիոս, և ասէ. Հաճեցաւ ձեր սրբոցդ բնակիլ 'ի տեղոջս յայս, և այն՝ վասն ցուցանելոյ 'ի հեռագոյն տեղեաց անդի զզօրուն ՅՍ, զոր տեսեալ մարդկան՝ հաւատասցեն սքանչելեացն։ Վասն զայս այլ պատ-ճառս 'ի սրբոյն Գրիգորէ ոչ լուաք։

Եւ անդ ձեռն 'ի գործ արկեալ շինուածոյ եկե-ղեցոյն, և նոյն օրինակաւ 'ի գիշերի կազմեցաք զտե-ղի նշխարացն. և եդաք 'ի քարեայ տապան առնա-չափ[2] զերկուց վկայիցն մերձ առ դուռն եկեղեցւոյն յաջակողմին։ Եւ զմիւս ևս զակին լուսաւոր դնէր 'ի նոյն տապանին, յաղագս միշտ լուսոյն զոր ունէր։ Այլ զորս եդն, այս են. զԹանագինեին զհա-սարակն, և զԱրապետին զոսկերս բարձուցն ձախոյ, և զերկու սրունսն, և զմասն ինչ ոսկերաց ողնին։ Իսկ զայլն 'ի Վեսարիա առին իւրեանց մասն, զերկուս ոտսն և զահեակ բոյթն։ Եդ իբրև եդաք 'ի ներս 'ի տապանն զնշխարսն նոյնչափ խորութիւն որպէս յինն-նակնեան տեղին, և ծունր կրկնեալ սրբոյն Գրիգորի մեք հանդերձ, զնոյն աղօթս մատուցանէր առ ՅՍ, զի մի ոք յանդգնեսցի առ 'ի հանել զնոսա։ Եւ նոյնպէս եկն ձայն յերկնից, եթէ զոր ինչ խնդրեցեր՝ եղիցի,

1 Թարինակի միւսմ՝ Հովէանդ։
2 Թերկուս սրինակս 'ի տարբերն գրագրի առանցին։

և ոչ ոք կարէ գտանել զդոսա։ Այլ զայս ասացեալ խաղաղացաւ տեղին 'ի մէջ. և յայտնի է նշանաւ բևեռով փափագողացն իրքն։

Արդ որ զկնի այսոցիկ է՝ զայն Թողաք այլոց պատմագրի, մինչև դարձեալ կրկին դառնայ պատմուիս 'ի Տարօն. զի որպէս զայլ տեղեացն չեմ ինչ գրեալ, նոյնպէս և զիմն չիշխէ ոք գրել[1]. զի Թագաւորաց ժամանակագիրք են։

Այս պատճէն առաջին պատերազմին Արճանին, և որ ինչ գործեցաւ յաւուրս իմ։

1 Յերկուս օրինակս էի «ՐԳԷ» ՀԱՅԼԳԷՆԷ», ԶՄ ԻՆԼ ԳՐԵԼ 'Ի ԲԷՐԻ, ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ՅԻՄՆ ԶԻՇԽԷՆ։

ՊԱՏՃԵՆ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՐ ՑԱՐՁԱՆՆ ԵՂԵԻ

Ի ԺԱՄԱՆԱԿՍՆ յայնոսիկ լուր եհաս 'ի դուռն արքայի՝ թէ Կոստանդիանոս կայսրն հաւատաց 'ի Քրիստոս, և դադարեցոյց զհալածումն եկեղեցեաց, քաջութիւն կալեալ զթագաւորութիւնն։ Այսպա խորհուրդ 'ի մէջ առեալ՝ գնալ 'ի դուռն կայսեր վասն գնելոյ դաշինս խաղաղութեան 'ի միջի իւրեանց, եկին հասին 'ի դաւառն Այսպահունեաց 'ի քաղաքաղեղն Անծկերտ։ Արքայն հիւսիսոյ զօրս գումարեալ, եկն 'ի վերայ իշխանին Արաց. և զնա փախուցեալ արարեալ, բերին մինչև 'ի Կարնոյ քաղաք։ Եւ զերկիրն գերի վարեալ, տարան ոգիս իբրև քառասուն և ութ հազար։ Իբրև եկն պատգամաւորն Արաց իշխանին առ թագաւորն Տրդատ, և խնդրեալ իւր զօր յօգնականութիւն՝ զի մի՛ տացէ զերկիրն տանել, և թագաւորն Տրդատ տուեալ երեսուն հազար արանց 'ի ձեռն իշխանին Այսպահունեաց, և արձակեաց յօգնականութի Արաց իշխանին։ Արք երթեալ ամսօրեայ ժամանակս յամեցին. և սակաւ մի գերութի դարձուցին. և երեք իշխան ըմբռնեցին և ածին։ Եւ կողմնապահ թողեալ երկրին, և ինքեանք դարձան առ թագաւորն։

Իսկ իմ աղաչեալ զքեզ Գրիգոր գնալ 'ի վանսն իմ, զոր ինքն հիմնարկեաց յանուն Սրբ Կարապետին. զի կայր լոկ՝ միայն հիմնարկեալ։ Զոր թագաւորն իսկ յանձին կալեալ գալ 'ի տեսուչ տեղեացն՝ զոր հիմնարկեաց, և եղեալ Հաշտից[2] տեղեացն թագաւորն ընդլեռնակողմն գնայր։ Զանազի ոմանք տեսեալ զզօրսն Յունաց, համբաւեցին՝ թէ իշխանքն հիւսիսոյ թա-

[1] Ցերկուս օրինակս Մանազ- [2] Ցերկուս օրինակս 'ի Դաշտից տեղեացն։

դաւորին ծանր զօրք դան 'ի վերայ. քանզի Տրդատ բազում դաւառս և քաղաքս էր զնոցա քանդեալ, և վաթսուն հազար արս 'ի գերութիւն իջուցեալ 'ի Պարսին։ Իբրև տեղեկացաւ՝ թէ Յունաց զօրքն էին, դարձաւ 'ի դաւառն Հաշտենից. և եկն բանակեցաւ 'ի գլուխ Արձանին վասն ընդարձակութիւն վայրուցն։

Իբրև եկաք 'ի տեղին ինն ակնեան թագաւորաւն հանդերձ, ինդիր արարաք Անտոնի և Արծնիդեայ։ Իսկ պաշտօնեայքն ասեն. Այս ամ մի է, սակաւ ինչ պակաս, մեք զնոսա չէմք տեսեալ։ Այս տրտմեցաւ յոյժ թագաւորն, զի 'ի վաղնջուց ցանկայր տեսանել զնոսա։ Իսկ ՝ոբն Գրիգոր առաքեաց ինդրակս զԱղբիանոս եպիսկոպոս հանդերձ երկու սարկաւագաք, պատուէր տուեալ նմա՝ եթէ ընդ առաւօտն ելանեն յանտառէն 'ի բլուրս ուրեք, և դու անդ կաց զգոյշ, զի մի զքեզ տեսցեն և փախիցեն։ Այս զաւուրս չորս ոչ կարացին գտանել. իսկ 'ի լուսանալ հինգերորդին առաւօտուն՝ լուան զձայն սաղմոսերգութեան նոցա, զի գային յանտառէն յարևմտից կուսէ 'ի քաղցրահամ աղբերէն։ Այս եկեալ 'ի բլուրն արևելեան 'ի տեղիս արարոցն Գեմետրեայ, զոր կոչեմք Արևու բլուր[1]. զի և անդ իսկ էին դարափոսք խուցք[2] նոցա, 'ի կողմանէ արևելից. և իբրև մերձեցան 'ի վերայ աղբերն, սկսան սաղմոսել այսպէս. "Լսելի արա ինձ, ՝որ, առաւօտու զողորմութիս քո"։ Իսկ Աղբիանոս ասէ. "Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ"։ Այս աղօթեալ անդ, ասէ Անտոն զԱղբիանոս. Արարի եկիր Ճանապարհորդ խաղաղութեամբ։ Այս նա ասէ. Արարք գտաք զձեզ օթեվանք սրբոյ Հոգւոյն, և Ճրագք լուսոյ։ Այլ և աւետիք ձեզ, զի ՝ոբ Գրիգոր և Տրդատ թագաւորն 'ի բնակութիս ձեր էն եկեալ, և յոյժ ինդրեն զձեզ։ Իսկ նոքա ասեն. Այս ձեզ աւետիք, զի սատանայ կործանեցաւ, և ՝ոծ այսօր կրկին ուրախութիւն լցոյց զարարածս իջմամբ ՝ոբ Հոգւոյն։ Այս կոչեցաւ տեղին այն Արևուտեաց բլուր։ Այս առաքեաց Աղբիանոս առ մեզ զերկուս սարկաւագսն աւետա-

1 Ցերկուս օրինակս Արևու բլուր։ 2 Ցերիս օրինակս դարափոսք խուցք նոցա։

ւորս. զոր լուեալ մեր, յոյժ ուրախ եղաք։ Եւ դարձեալ զնոյն սարկաւագունն առաքեաց ՝ի Գրիգորէ առեալ որս առ Տրդատ՝ի ստորոտս Լեռնանին. որ յոյժ խնդութեամբ լցեալ, եկն՝ի վանսն Հանդերձ գլխաւոր իշխանօքն։ Իսկ՝ի տեղին, ուր զաւետիսն եառն, հրամայեաց վեմն ժողովել բլրաձեւս, և կանգնեաց անդ նշան խաչի. զոր և կոչեմք Հաւետեաց խաչ՝։

Եւ առեալ սրբոյն Գրիգորի զդասս պաշտօնեիցն, և զնշան տերունական խաչին, Հանդերձ ջահիւք և անուշահոտութեամբ խնկոց և պաշտամունքք. որ և ձայն ուրախութեան պաշտօնեիցն զանտառն հնչեցուցանէր։ Եւ մերձեալ՝ի բլուրն, ընդ առաջ եղեն մեզ. և միաբան՝ի բլուրն եղեալ աղօթեցաք։ Եւ յետ ողջունին, ասէ սուրբն Գրիգոր. Խարիսք գտաք զձեզ առաւօտք խաղաղութեան։ Իսկ նոքա ասեն. Խարի եկիր արուսեակդ արդարութեան, որ զտիեզերս լուսաւորես. մշակ առանց ամօթոյ, և աշտարակ բարձրագոյն քան զերկինս։ Եւ բազում անգամ համբուրեալ զմիմեանս, և առեալ զնոսա՝ գայաք յեկեղեցին. զի ոչ էր բլուրն հեռի՝ի տեղոյն, այլ տակաւ մի՝ի բացեայ՝ի հիւսիսոյ կողմանէն, և ինքն հայի ընդ արևելս, բարեհամ և դիտանոց երևակ բազում վայրուց։ Իրրև ածաք զնոսա առ Թագաւորն, և նա արտասուեալ՝ աղօթէր օրհնել՝ի նոցանէ. և յարուցեալ համբուրեաց զնոսա, և նստան առաջի վկայարանին։ Եւ բազում վարդապետութիւն խօսէին ընդ նոսա, և ուսուցանէին զսրբութեան կրօնս։ Եւ կացեալ անդ աւուրս հնգետասան, Թագաւորն՝ի նոյն տեղին կանգնէր զտէրունական նշան մեծանգամ բարակոփ, ՝ի տեղի տաճարին՝ ուր Գրիսանէան էր, առաջի աղբերն՝ ուր զբժշկութիւն հիւանդացն կատարէր։ Եւ յորժամ կանգնեաց զսոր խաչն, տոն ուրախութեան կատարեցին. և՝ամ բազմութիւն ժողովրդոցն, որք կուտեցան՝ի տեղեաց տեղեաց, եղեն թուով արք հարեւր հազար չորեքարեւր և յիսուն։ Լնդ զզօրս Թագաւորին և զպաշտօնեայս սրբոյն Գրիգորի. քանզի Թագաւորն հրամայեաց Թուել, և զթիւն՝ի բուն խա-

1 Յերիս օրինակս ասէին խաչ։

չին եւ գրել զի լեցի վկայ ազգաց անցելոց յետ ժամանակաց։

Եւ իբրեւ կատարեցին զպաշտօն աւուրցն, եկին հասին զօրքն՝ որ 'ի Վիրս էին՝ առ Թագաւորն, և ածին ընդ ինքեանս երիս իշխանս և չորեքհարիւր այր ընդիր։ Զոր տեսեալ Թագաւորն, ուրախ եղև յոյժ, և գոհացաւ զնոսա՝ որ եւ 'ի ձեռս իւր զԹշնամին իւր. և առեալ զնոսա արձակեաց կապեալս յամուրն Ղկան։ Եւ ինքեանք յառաջեալ գնացին, բազում աւուրց օթևանօք զանց առնէին, մինչև հասին 'ի Հռոմ քաղաք. և անդ կացեալ սակաւ աւուրս, դարձան մեծաշուք պատուով։ Եւ բազում ուրախութիւն գային հասանէին յԱրկեղեաց գաւառն, 'ի Ավիլն աւան. և յետ երից աւուրց երեալ անտի, գային հասանէին ընդ գաւառն Պալունեաց. և երկուս աւուրս մնացին 'ի մեծ աւանն Հռոմանոս։ Եւ անտի էլին եկին 'ի գետն Կուառս. և քանզի աշխատեալք էին, հանգիստ առնէին այն օր։

Բ.րդ յորժամ գնացին զօրքն 'ի Վիրսն, և դարձուցին զդերիսն, և զերիս իշխանսն Եղին յԱղկան զորս ածին ընդ իւրեանս կապեալս, և ինքեանք Թողեալ կողմնապահ զիշխանն Բ.ղձնեաց չորեք հազար արամբ՝։ Իսկ նորա կաշառեալ 'ի Թագաւորէն հիւսիսոյ, առեալ 'ի նմանէ վաԹառն հազար դահեկան, և գնաց ինքն յերկիրն Բ.ղպահունեաց. զի ամ ջան նեղուԹեն վասն Թագաւորին ունելոյ էր։ Զոր ոչ իմացաւ Տրդատ վասն Թշնամանացն. և նա զորս փաթաթատակաս ըմբռնէր, կապել տայր և 'ի բանակն արկանել։ Եւ այնչափ հմտուԹիւն եկեալ և դիտակօք, որ և զԹագաւորն 'ի նեղուց տեղ Թակարդեալ։

Իսայց առ Թագաւորն Տրդատ զօրք որ կային՝ երեսուն հազար միայն էին. և այլն ամենայն երԹեալ էին 'ի Մուշն աւան։ Բ.րդ 'ի հասարակել զիշերոյն, մինչ մեք զպաշտօնն մատուցանէաք առաջի նոր խաչին, զոր և կանգնեաց Հրամանաւ սրբոյն Գրիգորի իշխանն Սիւնեաց. զի մինչ Տրդատ զինանկնեանն

1 Յերիս օրինակս զԻշխանն Ղղ- պակաս ապրդեալ 'ի համառօտ Ղնեաց Դ-ով անուն. որ երեի վեր- գրուԹիւն չորեք հազարին Բ-։

խաչն կանգնեաց, իշխանն Ղազար տան զՀռոմենիցն կանգնեաց, և Սիւնեացն զԿուառացն. և նոքն Գրիգոր երթեալ զիաչն օրհնել, և յերկու աւանսն հիմն եկեղեցւոյ արկանէր։ Բրդ 'ի նոցն աւանին 'ի գիշերին պաշտմանն, մինչ դեռ զօրհնութիւն երից մանկանցն կատարէաք և Թագաւորն առ մեզ էր ամ իշխանաքն 'ի յաղօթել, և չունէաք բնաւ իրացն կասկած, յանկարծակի ձայն ահեղ իբրև ամպոց՝ որ յոյժ դղրդէ՝ եկն էհաս 'ի վերայ մեր։ Օ յ զարին կողմ գեղջն պաշարեցին հեռուակքն, և զնեերքինն հեծեալքն։ Այս սկսան հնչեցուցանել զփողս պատերազմաց, և թնդիւն սաստիկ շուրջանակի, և զձիոց վրնջիւնսն էր լսել։

Այս սկսան իշխանքն մեր ելանել ընդդէմ նոցա 'ի պատերազմ. քանզի միջօրեայ էր լուսինն։ Այց 'ի պատերազմէն արգել զնոսա Տրդատ. Բայ, ասէ, գիշեր է. և մեք ոչ գիտեմք զչափ զօրուն, թէ որչափ է համար զօրուդ. այլ թէ իմաստութիւն կամիք առնել, ելէք վեցհազար այր 'ի մէջ այգեստանեացդ 'ի գլուխ Բրձանին թագիք մինչև ցառաւօտն, և չորեքհազար 'ի Հաշտենից կողմանդ, և չորեքհազար ընդ մէջ նոցա անցեալ գնասցեն առ այգեստանեաքն 'ի վերին գահն, և մեզ ուշ կալցեն։ Այց տեսէք զի մի զձեզ տեսցեն, և նենգուք 'ի փախուստ դարձցին, և 'ի մէջ առեալ՝ վտանգեսջիք։ Այս բաժանեալ արձակեաց զնոսա ուր և խորհեցաւ։

Այց Թագաւորն և Գրիգոր մեք հանդերձ 'ի փոքր ամբոցին կայաք և աղօթեաք։ Այս մի ոմն 'ի զօրացն Սիւնեաց պատանի մի ըմբռնեաց 'ի հիւսիսակնացն, և էած առ Թագաւորն։ Այս իբրև տեղեկացաւ եթէ 'ի քո զօրացդ և իշխանացդ է իրքդ, և այս է Թագաւորն հիւսիսի Գեղուեհոն, և վասն ուներոյ զքեզ եկեալ է յիսուն և ութ հազարաւ, և հրամայեաց զօրացն պատրաստել զյետին աւուրն մեհու պատերազմ։ Այս իբրև առաւօտ եղև, զօրքն սկսան կազմել փողոցս Թագաւորին՝ զի յԲրձանն ելցէ։ Իսկ Թագաւորն հիւսիսոյ հրամայեաց զօրացն զառաջս ունել. վեց հազար սպառազինօք արգելուլ կամէր զԹագաւորն Տրդատ։ Որոց եկեալ յառաջն,

արդելուին զնա 'ի գլուխ Ղրձանին. և զբազում ժամն ոչ կարացին ելանել 'ի վեր։ Զոր տեսեալ սրբոյն Գրիգորի, յարտասուս եղեալ, և ձայն բարձեալ՝ ասէ. Ո՞կրտիչ և Կարապետ Քրիստոսի, տես զինչ գործեն. և հասիր յօգնուի, և արա զայս օրս նշանաւոր յազգս։ Եւ առեալ զնշխարս առաքելոցն՝ զոր բերեալ էր 'ի Հռոմայեցւոցն, տեառնագրեաց 'ի վերայ թշնամեացն։ Եւ առժամայն ոյժ տուեալ Տրդատայ, քաջառնաբար ձայն բարձեալ՝ յօգնականուի կոչելով զոր Կարապետն, և կտրեաց զբազմ առաջագահիցն[1], և եղ 'ի վերայ բլերն։ Եւ որք 'ի գիշերին թագուցեալ էին, յարուցեալ 'ի մէջ առին զայն զօրն, և փախստական արարեալ իջուցին զնոսա ընդ հարաւակողմն յանտառն. և որպէս 'ի թակարթ արկեալ, սուր 'ի վերայ եղեալ՝ կոտորեցին. և անուանեցաւ տեղին այն Թակարթս։

Իսկ զօրն Հիւսիսի որպէս գիպող ժամանակ գտեալ, յարձակեցան 'ի վերայ գեղջն. և գեռ հանէին զմեզ յամրոցէն։ Զոր[2] տեսեալ չորեքհազար արանցն, որ 'ի վերայ գեղջն կային, յարձակեալ 'ի վերայ՝ փախստական արարին զնոսա 'ի նեղքոյ գեղջն։ Զոր և ոմանք յայգորդացն գլաջարդ առնէին զձակատ երիվարացն, և ոմանք 'ի հեծելոցն 'ի վիմաց անտի մեռան։

Իսկ զօրք մեր ցրուեալ զնոսա ընդ այգեմէջն, սակաւք փրծան. և անկան 'ի տեղջն յայնմիկ վեցհարեւր այր 'ի Թակարթան. իսկ երկու հազար եւթն հարեւր այր, և զորս պարսեռօքն[3] կոտորեցին, ութ հարեւր վեց. և ընդ ամենայն՝ չորեքհազար երկու հարեւր և երկոտասան այր։

Եւ ապա դարձեալ Թագաւորն 'ի փոքր կոտորածէն, եղ 'ի գլուխ Ղրձանին. և հարեալ զազդարար փողն, մինչև ամ զօրքն ժողովեցան 'ի մի վայր։ Եւ իբրև եկին հասին 'ի տեղին, և զնոքն Գրիգոր իջուցին յանդառն, և պահէին զնա արք վեցհարեւր։ Իսկ Թագաւորն Հիւսիսոյ առեալ զզօրսն իւր, գնաց 'ի Հաշտենեաց տափարակն. և առաքեաց Թուղթ առ

1 Յերիս օրինակս ---ջագահիցն։
2 Յերկուս օրինակս որ գնէին։
3 Յերկուս օրինակս դարսեռօքն։

Տրդատ՝ թէ եկ 'ի վաղիւն տացուք պատերազմ, և և եղիցի օր յաւիտենական 'ի մէջ երկոցունցս. կամ տացես զիշխանսն իմ յիս, և հարկս հնդեւտասան տարւոյ. ապա թէ ոչ, քանդեմ զերկիրդ քո սրով և գերութիւնք և մահուամբ, որպէս զի ծանիցես զդէմս խաղութեան քո՝ որ եղեր առաջի զօրաց քոց. արդ ըստ այդմ արա զպատասխանիսդ։ Եւ ընթերցեալ ըզթուղթն, ոչ արար նմա պատասխանի. այլ յարուցեալ գնաց երեսուն հազար արամբք 'ի պատերազմ, և երթեալ յանդիման նոցա իջաւանեցաւ 'ի Մուշեղամարգն Հաշտենից։ Եւ 'ի վաղիւն սկսան ռազմ գործել և Ճակատ յօրինել. և փողոցս թողեալ պատերազմին դրունս երկու, և գունապահս տեղեացն զբագրատունեացն իշխանն կացուցանէր։ Իսկ զաջ թևն զօրուն տայր 'ի ձեռն իշխանին Սիւնեաց, և զահեակ թևն 'ի ձեռն իշխանին Հնդեղ տան։ Իսկ ըզգահերէց իշխանսն կացոյց թիկնապահս իւր. և այնպէս յօրինեցան երկոքին Ճակատքն, և պատրաստեցան 'ի խումբն։

Իսկ իբրև ՝ամ զօրքն սկսան ընդդէմ իրերաց անցանել, ձայն բարձեալ արքայն Հիւսիսոյ ասէր. Ա՛ռ քայ Հայոց, ինձ մատիր։ Եւ իբրև եկին ընդդէմ իրերաց, սկսան իբրև զմրճաւորս քարահատաց, կամ իբրև զուռնածս՝[1] որք պատեն զշանթս հրայրեացս, մինն առնոյր և միւսն իջուցանէր։ Ուանզի արքայն Հիւսիսոյ մեծահասակ էր և կորովի իբրև զՏրդատ. և բազում կոփեալ միմեանց, ոչ ինչ եղև։ Իսայց սկսաւ պակասիլ արքայն Հիւսիսոյ. և գիտացեալ է թէ ՝ինասելոց եմ, և քանզի Ճօպանաւոր էր՝ ամենապարեաց և ձգեաց զՃօպանն, և արգել զաջ թեկն ընդպարանոցն. և փութանակի դարձաւ և կղթեաց զՃՃ պանն[2], մինչ զի և չկարաց բնաւ շարժել զձեռն Տրդատ։

Եւ մտրակեալ զկուշտ երիվարին զկնի Պեդռեհոնին, այնպէս փութացեալ մինչ զի ոչ ետ քայլել նմա առաջի իւր տասն քայլ։ Իբրև եհաս նմա, ասէ. Կատաղի շուն, խառանեցեր զկնի քո ջլացդ։ Եւ ամ-

1 Ցերիս օրինակս Էբրև զուռնածս մինն առնոյր և ն։

2 Ցերիս օրինակս գաղթեաց 'ի ՀՐԷԼ զՃՃպանն։

բարձեալ զաջ ձեռն իւր 'ի վեր, ի՛նչ-ուցանէր զաւ-
սերն 'ի վերայ ձախոյ Թիկանն Աստուածոնի. և ան-
ցուցեալ ընդ գօտին, և զոր ն երիվարին հանդերձ
գլխո

յանխնայ կոտորել։ Եւ այնչափ յանդգնեալ, մինչ զի զիշխանն Հոփայ՝ի մէջ առեալ բազմաց պատեցան զնովաւ. և՝ի նեղ արկեալ, մինչ զի աղաղակեաց ասելով. Ո՞ւր ես իշխանդ Սիւնեաց, հաս ինձ՝ի թիկունս։ Եւ նորա հասեալ իբրև զարաթռիչ արծիւ, հալածեաց զարսն՝ի նմանէ։ Եւ իբրև ետես եթէ խոցեալ էին չարաչար ընդ երանոյն նորա, առեալ զձեռանէ նորա՝ տարաւ՝ի բանակն, և՝ անդէն մեռաւ։ Այլ զօրապետն հիւսիսային, որ էր թագուցեալ զկերպարանս իւր, ՝ի գիշերին արծարծեալ ըզծնացեալ իշխանն գնալ՝ի վերայ արքային, և արարին որպէս խորհեցանն։ Յանկարծակի աճապարեալ՝ի վերայ խորանացն արքայի, կտրեցին զթևսն՝ի միմեանց. և հասեալ՝ի վերայ արքային, խուն մի և ըմբռնեալ էին զարքայն՝ եթէ ոչ էր գունդ մի խուճապեալ Մեհնունեացն արիք, մինչև եկ արքայ՝ի դրասպակս զօրուն հիւսիսոյ։ Եւ դիմահարեալ միմեանց արքայն և զօրապետն, մինչ զի կարեվէր խոցեաց զահեակ թեկնն Տրդատայ արքային. և բարկացեալ մրմռեալ իբրև զառեւծ յարձակեցաւ՝ի վերայ նորա, և հարեալ զգլուխ նորա յերկուս ձեղքեաց, և ինքն առաջի եդեալ զզօրն՝ փախստական արար և տարաւ մինչև՝ի կողմանս Հարքայ. և այլք ոմանք հետամուտ եղեալ գնացին մինչև՝ի Կարնոյ քաղաք։ Որ իբրև դարձաւ թագաւորն և իշխանքն յԱրձանն, և իջին առ նոքն Գրիգոր՝ի տեղին՝ ուր նոքա Կարապետն էր, մեծ գոհութիւն ՝ի և պատարագս ողջակիզաց մատուցանէին սպիտակ զուարակաց և նոխազաց և բազում գառանց. և աղքատաց բազում ողորմութիւն առնէին։ Եւ իբրև եկին ժողովեցան զօրքն՝ամ և իշխանքն, և համար արարեալ՝ գտաւ սպանեալ՝ի մերոցս հազար և ութսուն. իսկ՝ի նոցանէ հնգետասան հազար էին հարեւր քառասուն և երկու։

Իսկ նոքա՝ որք փախստական գնացին մինչև՝ի Հարք, և անդ իշխանն Հարքայ անկեալ՝ի վերայ՝ի վեց տեղիս, կոտորեաց հազար և վեց այր։ Եւ՝ի Ալիրս մտեալ՝ի բազում տեղիս կոտորեցին՝ի նոցանէ։ Եւ որ գնացին՝ի գաւառն Իւրեանց, էին վեց

հաղար. բայց մինչ 'ի Տարօն մտին, յիսուն և ութ հաղար էին։ Այս ամ գործեցաւ 'ի գալ նոցա 'ի Հռոմայ. բայց եղև 'ի ձեռն նենգաւոր իշխանին Աղձնեաց։ Որ իբրև կացին աւուրս երիս 'ի տեղին ինանակնեան, և ապա միարան խաղացին գնացին 'ի գաւառն Աղահունեաց, ընդ ինքեանս տանելով զիշխանն՝ որք էին 'ի բերդն Ողկան. և զչորեքարեւր արսն 'ի դիւանն արքունի տայր արկանել։ Այս իբրև հասաք զօրացն, զոր յառաջն էր յուղարկեալ, հրամայեաց նոցա ունել զիշխանն Աղձնեաց. և ածեալ առաջի, կամէր ծայրատել զոտս և զձեռս նորա։ Որ արդեալ ՝ին Գրիգոր 'ի պատուհասիցն. բայց 'ի պատուոյն մերժեալ հրամայեաց, և վարեալ 'ի գաւառէն Հայոց։

Որ և զկնի այսորիկ՝ եթէ կամի ոք իմանալ, յայլ պատմագրէ ծանիցէ. բայց առ 'ի մէնջ այսոքիկ պատասխանի բաւական լիցի ձեզ։ Այլ դուք եթէ գալ կամիք յերկիրս յայս, քարի է երկիրս, և վայրքս անուշ օդ[1] և բազմաջուր, դաշտաձև, և շուրջ զլերամբքս բաղում ամրոցք։ Այրկիրս խոտաբեր և մեղրաբուխ. և որպէս մանանայն իջանէր յերկնից անդ առ Հրեայսն, նոյնպէս և աստ 'ի մերում երկրիս 'ի վերայ անտառացս իջանէ քաղցր առաւելքան զմեղր՝ որ կոչի գազապէն։ Այս և այդ երկիրդ խորշակահար է և հացապակաս, և անասուն ոչ բազում 'ի դմա. իսկ այս երկիրս ամ բարութիւն լի է և աջողակ և առողջ։ Իշխանքս կրօնաւորասէրք, և 'ի չարեաց աք, և աղքատասէրք, և որբոց խնամածուք. վերակացուք եկեղեցեաց, և տեսուչք ամենեցունց։ Արդ աղօթիւք ձերովք պահեսցէ տէր զհօտս մեր և զձերդ 'ի խաղաղութիւն շնորհիւ տան։

Ողջ լերուք 'ի տէր մեր Յիսուս։

1 Ցերկուս օրինակս և անուշ օդս և ջուր բազում։

ՎԵՐՋ

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Ագաթանգեղոս 19. 22:
Ագգենայիք 12:
Ամթանագինէ 8. 23. 24. 33. 38:
Ակգենոս 24:
Աղբիանոս 33. 41:
Աղեքսանդրայիք 11:
Աղեքսանդրիա 24:
Աղձնիք 43. 49:
Այծան 35:
Այրարատեան գաւառ 21:
Անակ 20. 21. 23:
Անաստաս 14. 15. 16:
Անգեղ տուն 24–28. 35. 44. 46. 47:
Անգրէաս 14:
Անձևայիք 25:
Անտոն 8. 10. 17. 18. 37. 41:
Աշտիշատ 16. 25. 29. 36. 40:
Աշտիշ տեղիք, տե՛ս Աշտիշատ:
Ապահունիք 40. 43. 49:
Ուռայաւորք 23:
Ասկգնէ 22:
Ասորիք 14. 18. 19. 24:
Ատրպատական 28. 35:
Արածանի 38:
Արեւու բլուր 41:
Արծուիք 29:
Արծրունիք 25. 27. 29. 30:
Արձան լեառն 27. 28. 31. 39. 40–42. 44. 45. 48:
Արձան քուրմ 25. 26. 27. 31:
Արշակունի դուռն 33:
Արշակունիք 19:
Արջուց կ՝ Արջայ ձոր 30:
Արտազ 21:
Արտեան 20:
Աւետեաց բլուր 41:
Ադիկոս 14:
Ադիւղաս 16:

Բազում, տե՛ս Բուզու:
Բասեան 23. 28:
Բարգ 22:
Բարթուղիմէոս 10:
Բեկտոր 14. 15. 17. 22:
Բիւզանդիա 16. 17:
Բուզանդիա, տե՛ս Բիւզանդիա:
Բուզու 37:
Բուրգար 21. 22:
Բրեխ, տե՛ս Պարեխ:

Գամիրք 21. 22:
Գայիոս 14. 17:
Գեղեհոն 44. 46. 47:
Գիսանէ 8. 15. 16. 25. 27. 31. 32. 34. 36. 42:
Գլտակ 15:
Գուրթք 22:
Գրիգոր 14. 16. 18. 19. 21–26. 31–39. 40–49:

Դաւիթ 22:
Դեկոս 24:
Դեմեար իշխան 35:
Դեմեար կուռք 8. 25. 32. 33. 34. 36. 41:
Դեմեար քուրմ 25. 27. 28. 29. 30:
Դինասքէ 35:
Դիոկղետիանոս 22. 24:
Դկլատիոս 24:
Դուին 24. 41:
Դռով 43:

Եգիպտոս 14. 23:
Եկեղեաց գաւառ 13. 23. 43:
Եղիազար 9. 11. 12. 14. 16. 17. 24:
Եման, տե՛ս Այծան:
Եպիփան 10. 17. 37:
Երէզնաւան 23:
Երուսաղէմ 11. 14. 17. 23:
Եւթաղէ 21. 22:
Եփեսոս 23. 24:

Զենոբ 17. 18. 19:

Թադէոս 10. 21:
Թակարդք 45:
Թարձենք 38:
Թիշն 43:
Թորգան 24:

Իններակնեան տեղիք 8. 13. 15. 31. 41. 43:

Լիմնիք 22:

Խոհրնի, փէ՝ Խորնի:
Խոսրով արքայ Հայոց 18. 20. 21. 23:
Խոսրովուհի 22:
Խորնի 37:
Խրանի, փէ՝ Խորնի:
Խրտուտ, փէ՝ Ցուտ:

Ծովիք 48.

Կաճկոնք 35:
Կապադովկացւոց աշխարհ, փէ՝ Գամիրք:
Կարապետ, փէ՝ Յովհաննէս Կարապետ:
Կարին 25. 40. 48:
Կեղք 37:
Կեսարիա. 7. 9. 14. 21. 23. 24. 33. 38:
Կեսեղք, Կեսաղէք, փէ՝ Կեղք:
Կոստանդիանոս 23. 40:
Կորնեթոս 14:
Կուառատուն, փէ՝ Կուառք:
Կուառ 36:
Կուառք 25. 26. 35. 36. 37. 43. 44:
Կրօնիդէս 8. 17. 18. 37. 41:

Հայք 8. 16. 17. 23. 27. 28. 29. 47:
Հաշտանք 12. 25. 29. 37. 41. 44–46. 47:
Հարք 13. 25. 28. 48:
Հելիթաղ 22:
Հելիթաղիններակ 22:
Հնդիկք 8:
Հոն 47:
Հոռեան 36:
Հոռեանք 36. 43. 44:
Հովեանք 38:
Հռոմ 11. 14. 16. 17. 23. 24. 49:
Հրեայք 49:

Ղեւոնդ 7. 23. 24:

Ղուկաս 14.

Ճենք 20. 22:

Մամիկոնեայք 8. 9. 13:
Մանծկերտ, ֆ՝ Մանազկերտ 40:
Մարիամ 22:
Մարկեղէս, փէ՝ Մարկեղոս:
Մարկեղոս 16. 17:
Մեղաէս 36:
Մեղոն 26. 28. 36. 37:
Մենանդրոս 14:
Մեսակէս, փէ՝ Մեսակէս:
Մեսակէս 29. 30:
Մեսակող, Մեսակողմ 30:
Մեհնունիք 48:
Միջագետք 14. 17:
Մկրտիչ, փէ՝ Յովհաննէս Կարապետ:
Մոկք 26. 30:
Մովսէս 10:
Մուշ 37. 38. 43:
Մուշեղամարդ 46:

Յակոբ առորի (Մծբնայ) 9. 22:
Յոյնք 16. 22. 40. 41:
Յոհաննէս աւետարանիչ 23:
Յովհաննէս Կարապետ 8. 10. 13. 15. 23. 24. 31. 33. 35. 38. 40. 48:
Յորդանան 8:

Նիկիմեդիա 22:
Նիւատրա 24:
Նիւատրացիք 12:

Ոդոնի 21:
Ոզկան ամուրն 26. 43. 49:
Ուռհա, ֆ՝ Ուրհա 14. 22:

Պաղհաւ 20:
Պաղհաւայ դուռն 8:
Պաղունիք 25. 36. 43:
Պատմոս 23:
Պարթեւ 20. 21:
Պարսք 20. 21:
Պարտաթ 30:
Պարտաւ 20. 21:
Պիսիդոն առորի 33:
Պոլիկարպոս 24:

Ջուանշիր 22:

Ռեգէս 22։
Ռիստակէս 22։

Սգօն, փէ՝ Յակոբ։
Սեբաստիա 24։
Սեղբեստրոս 23։
Սիմեքրոս 17։
Սինա 10։
Սիւնիք 26. 27. 29. 30. 34. 35. 43. 44. 46. 48։
Սուրէն 21։
Սուրբինոս 25։
Սոփի 21։

Վաղարշակ 36։
Վաղարշապատ 12. 23։
Վիշապ քաղաք 28. 36։
Վիրք 40–43. 48։
Վրթանէս 22։

Տարօն 12. 14. 16. 25. 36. 49։
Տաւրոս լեառն 8։
Տիմոթէոս 11. 14. 17։
Տիրակատար 28։
Տիրան 22։
Տուտ, Տուտք 37։
Տրդատ 12. 14. 16. 22. 23. 40–49։

Փայտակարան 35։
Փարաւոն 10։
Փարմեղոս 24։

Քարքէ 36։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԱՑ

ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄԱՄԻԿՈՆԵՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԱՐՕՆՈՅ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1832 ՌՄՁԱ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆ մամիկոնեան եպիսկոպոս յաւուրս Ներսեսի Հայրապետի Շինողին կացեալ, հրամանաւն նոր գրեաց զգիրս զայս։ Յորում պատմէ զպատերազմունս տանն մամիկոնեանց ընդ Պարսս, և զՄուշեղայ և զԱյլ Վահանայ, այլովքն հանդերձ. որ ինչ յաւուրս Խոսրովու երկրորդի Պարսից արքայի յերկրին Տարօնոյ գործեցան։ Այլ որ ինչ իբք 'ի Տրդատայ մինչև ցԽոսրով լեալ են, զոր մատենագիրս 'ի յիշատակարանին իւրում աւանդէ գտեալ 'ի կողմանս Անդեսեայ և թարգմանեալ, չերևին 'ի միջի։

Անդատին 'ի նոցունց օրինակաց գրոցն Օէնոբայ և տպագիրս այս արարաւ. առ որ ցանկալի էր մեզ ընտրելագոյն օրինակս 'ի ձեռին ունել։ Օ յի ա ռաւել ևս 'ի սմա գտանին փոփոխմունք և յաւելուածք. որք եթէ ոչ 'ի գրչագրաց իցեն յետոյ կըրճատեալ, ինքն իսկ արդեւք մատենագիրն, կամ յետ նորա Գլակայ վանիցն առաջնորդք յաւելին զայնս ըստ նորին յորդորանացն՝ զոր 'ի յիշատակարանին իւ-

բում առնէ։ Օ յ։ "որք զկնի գոցա, ասէ, այլք նրա տին վանականք, զոր ինչ գործի յաւուրս նոցա 'ի տանս յայսմիկ՝ գիցէ 'ի նոյն մատեանս"։ Արդ մեր հնգեցունց օրինակաց բաղդատութեամբ՝ անթերի զընագիրս յերիւրեալ, թողումք այլում տեղւոյ քննել որ ինչ 'ի սմա ըստ ժամանակագրութեան մասին գտանին անտեղութիւնք, և զպատճառս նոցին հետաքննել հոլանել։

ՅՈԳՀԱՆՆՈՒ

ՄԱՄԻԿՈՆԵՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ

ԳԼՈՒԽ Ա.

Եթէ ոչք են, որ յաջորդեցին յառաջնորդութեան Կարապետին, որ կոչի Գլակայ վանք։

ՕԵՆՈՒ եկաց հայր վանացն Գլակայ ամս քսան։

Յետ նորա Եպիփան աշակերտն Ղնտոնի ամս ԺԸ։ Եւ սորա տասն ամին եկն սուրբն Գրիգոր 'ի Գլակայ վանսն, եկաց Ամ.ետեաց բլուրն առ Ղնտոն և Կրօնիդէս չորս ամիս։ Եւ նոքա հանեալ զնա անտի ասելով. Գնա յանապատ յանմարդաբնակ տեղիս, զի մի՛ ոք փառաւորութիւն մատուցանէ քում սրբութեդ։ Իսկ նորա գնացեալ 'ի Մանեայ այրսն, և կացեալ անդ ամս եւթն, վախճանի 'ի կենացս 'ի փառս ՅՍ։

Ստեփանոս աշակերտ նորա ամս հնգետասան[1]։ 'Ի սորա չորրորդ ամին վախճանեցաւ նոքն Ղնտոն. և յետ երկուց ամսոց և նոքն Կրօնիդէս, կացեալ ամս քառասուն յիննակնեան տեղիս. և է սակաւ ինչ հեռագոյն Թաղեալ յեկեղեցւոյն ըստ հարաւոյ կուսէ։ Սա շինեաց եկեղեցի, ուր սուրբ Գրիգոր զնշխարսն պահեաց յայն կոյս Կուառայ, առ յորդաբուղխ աղ-

1 Յերկուս օրինակս ՌՌԵՔՍԱՆ։

բերն. և կացոյց անդ կրօնաւորս վանքս հրեշտակային վարուք։

Լիբերմ ամն քսանեւութ։

Յովհաննէս ամն տասն[1]. սա էր 'ի ժամանակս սրբոյն Սահակայ։

Ղ[illegible]իմենդոս ամն ասն։

Մարկոս ամն ութեւտասն[2]։

Կիւրեղ ամն քսան և երկու։ Սա առաջին էպիսկոպոս ձեռնադրեցաւ 'ի Մանդակունւոյն Յովհաննէ Հայոց կաթողիկոսէ։

Գրիգոր ամն վեց։

Նդրէաս ամն մետասան[3]։

Գերսէս ամն եօթն[4]։

Յովհաննէս ամն երիս[5]։

Սահակ ամն հինգ[6]։

Յովսէփ ամն վեց։

Բարթողիմէոս ամն չորս[7]։

Աթանաս ամն տասն[8]։ Սա էր, որ 'ի ժամանակս Մովսէսի Հայոց կաթողիկոսի զթուականն գրեաց հրամանաւ նորին 'ի Գուին քաղաքի. զի նա էր տեղեակ տումարի ամ աղգաց։

Կոմիտաս ամն ութ[9]։ Սա գնաց միաւորել յԱբրահամ Հայոց կաթողիկոսէ առ Վրաց կաթուղիկոսն։

Ստեփաննոս ամն վեց։ Սա 'ի ժամանակս Կումիտասայ Հայոց կաթողիկոսի գնաց առ նա, և երբեր մնան ինչ 'ի սրբոց Հռիփսիմեանց, և եդ 'ի Գլակայ վանքն՝ ուր ինքն իսկ էր։ Զանազի Կումիտաս վերըստին շինեաց զվկայարան սրբոց Հռիփսիմեանցն։

Բարսեղ[10] ամն ութ։

Լազարոս[11] ամն երեսուն։ Սա 'ի տղայութէ ստացաւ զառաքինութէ. և էր աշակերտ Բարսղի, որ եղև նմա սիրելի վասն վարուց իւրոց, և իշխանին մամիկոնենից Մուշեղայ. և իշխանն բազմացոյց ամս

1 Յերկուս օրինակս յԻՌՈՍՆ։
2 Յերկուս օրինակս ՄԱԽԱՐ ամս ԵՐԻՍԿՈՍՆ։
3 Յերկուս օրինակս ՈՒՆ։ 4 ՀԻՆԳ։ 5 ԵՐԻՍ։ 6 ԵՕԹՆ։ 7 ԵՐԻՍ։ 8 ՔԱՌԱՍՆ։ 9 ԿԱՍՆ։
10 Յերիս օրինակս ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ։
11 Յերկուս օրինակս ԹՈՂԻՆ ԶԻՐ ԵՒ ՀԳՆԱՍՈՍՐ։

դատաստակերտս բազումս։ Այս բազում կրօնաւորս կար գեաց 'ի Վլակայ վանսն միաձայակս և ձգնաւորս՝ առանձինս բնակել, անձինս երեք հարեւր ութսուն և ութ։

Զոգ 'ի սորա ժամանակս եկին արք ջորք 'ի կողմանցն Յունաց, արք ձգնաւորք և խոտաձարակք, որոշեալք յամ մարմնական հեշտութենց, որք կամին անցանել ընդ Աւկաւ։ Որբև եկին 'ի տեղիսն յայն, հաձեցան բնակել յանապատ. և կացեալ ամն երկու, լուան ոմանք 'ի կողմանցն Ադաստանաց արք երեք. և եկեալ 'ի նոյն տեղին Վլակայ, և հանդիպեալ միմեանց՝ դադարեցին 'ի միում վայրի։ Ամանք յինանակնեան վայրսն, յԶեռեաց բլուրն. և ոմանք 'ի քարայրին, որ 'ի հարաւակողմն արևելեան է, 'ի թագուածի խաչի կողմանն. իսկ ոմանք 'ի կողմանց անտառաբլերն։ Զոր այնպէս բազում ժամանակս կեցեալ 'ի սոյն խստակրօնութենէ ամն քսան։

Զոգ 'ի ժամանակս իշխանութեան մամիկոնենից Ներսեհայ, և Թոդկայ վանականութենն', հրաշալի իմն գործեցան գործք 'ի վանսն Վլակայ 'ի դուռն՝ Կարապետին։ Իշխանն Զրծրունեաց, որում անունն կոչիւր Ներգ պատրիկ, սա շինեաց բազում եկեղեցիս և վանորայս. և ունէր կին բարեպաշտօն, Մարիամ անուն նորա։ Այս առեալ զկին իւր էած առ հայրն իւր Ներսեհ, զի ինքն դէմ եղեալ էր գնալ 'ի Կեսարիա։ Զոր թողեալ զկին իւր անդ, և յանձն արարեալ զգաւառն այլոց ազատաց, և ինքն գնաց։ Իսկ կինն նորա յոյժ փափաքեալ էր սրբոցն՝ որ 'ի Վլակայ վանսն, և ուխտի Կարապետին։ Յաւուր միում առեալ զփոքրիկ մանկիկն իւր անդրանիկն՝ որ էր յիստեան, գայ բազում յօժարութիւն 'ի դուռն Կարապետին։ Զգաչէր բազում անգամ զկրօնաւորսն, զի թոյլ տացեն նմա մնանել յեկեղեցին։ Իսկ սպասաւորքն արգելուին զնա. բայց զփոքր մանկիկն Ստեփաննոս առեալ 'ի գրկաց նորա, բերեալ առաջի սեղանոյն երկրպագեցուցին նոն, և բերեալ եռուն ցմայրն իւր։ Իսկ նորա առեալ՝ սկսաւ արտասուել,

1 Յերբս օրինակս Ն 'ի հայրապետութենէ Թոդիոյ։

և ողբալով ասէ. Վա՜յ ինձ մեղաւորիս, որ զրկեալ եմ 'ի բարեաց. ողբացէք զիս ՝ամ կանայք, տեղի տուք արտասուաց իմոց ՝ամ ձայնարկուք։ Ծածկեա՛ցեն զիս լերինք, և ողորմեսցին ինձ բլուրք. գաղանք եղկեսցեն զիս, և թռչնոց ազգք խիթասցեն ընդ իս։ Երեշտակք ապաշաւեսցեն զանձն իմ, և դևք բուն եալ յարձակեցան 'ի վերայ իմ։ Ողորմեցարո՛ւք ինձ ո՛վ՝ոք սպասաւորք Կարապետիդ, և տուք տանել զիս 'ի տաճար անդր։ Եւ դարձեալ ցմանուկն ասէր. Ո՛վ որդեակ, ընդէ՞ր բաժանեցար 'ի գրկաց իմոց. զի՞արդ ոչ ողորմեցար մօրս քո. ո՞չ ես ծնայ զքեզ, և ո՞չ ես սնուցի զքեզ. և զի՞արդ թողեր զիս միայն։

Եւ զայս ասացեալ կնոջն, հանեալ բազում անուշահոտ խունկս տայր սպասաւորացն, և դանձս բազումս 'ի սպաս՝ոք եկեղեցւոյն։ Եւ պատգամն յղեր առ հայրն Յոդիկ, զի առեալ զիրսն՝ և գնա թողցէ 'ի ներս։ Եւ նա ասէ. Ա՛յդ հրաման առեալ եմք յառաջնոցն, և ոչ իշխեմք առնել. արդ եթէ վասն հաւատոց ես, ընդունելի է քեզ այդ աշխատանքդ։ Բ.ըդ մի՛ վասն պատասխանւոյն ձանձրանար 'ի մէնջ, այլ երթ 'ի խաղաղութիւն։ Իսկ նա ասէ. Ա՛յդպէս. այլ եթէ վասն իշխանութեա՛ն է, ես ոչ երկնչիմ 'ի ձէնջ. իսկ եթէ վասն թշնամութե՛ Կարապետին ընդ մեզ, և ո՞չ ինքն 'ի կնոջէ ծնաւ, և ՝որ՞ն ինքն 'ի կնոջէ է ծնեալ. և ո՞չ առաքեալք և մարգարէքն մայր ունէին։ Բ.ըդ ես մտանեմ ո՛վ ՝որ, և զմայրն քո բարեխօս ունիմ ինձ. մի՛ առներ յիս զցասումն բարկութե՛ քո, զի մի՛ եղէց նշաւակ աշխարհի. զի եթէ դու զկնոջ կաթն արբեր, գոնեա և զիս տաճարիս արժանի արա։ Եւ զայս ասացեալ՝ եմուտ 'ի տաճարն, և համբուրեաց զորմ տաճարին. և գնաց առաջի պրբոյ սեղանոյն, և ծունր կրկնեալ՝ ասէ. Ցես, ՝որ, զբեկեալ սիրտ իմ, և ողորմութի՛ արա վիրաւորելոյս. զի դու ոչ յիշեցեր յողորմութե՛ զբարկութի՛ քո. արդ օրհնեալ եղիցի անուն քո յաւիտեան։

Եւ իբրև եկ անտի տիկինն, խատացին [1] ոխացան և տրտմեցան յոյժ ընդ իրսն սպասաւորք եկեղեցւոյն,

1 Ցերկուս օրինակս խանդացին։

և ոչ պատրաստեցին կնոջն կերակուր։ Իսկ նորա հրամայեալ սպասաւորաց իւրոց՝ Ճաշ առնել կրօնաւորացն, և զամենեսեան 'ի սեղանն կոչել. և էին արք երեքհարեւր ինն սուն և հինգ։ Եւ յորժամ Ճաշեցին, ասէ տիկինն. Ո՛վ սրբասէրք և փոյթք յաւծային մշակութիւն, ուրախ լերուք ընդ իս 'ի Տէր, զի նեբեաց ինձ, և կատարեաց զփափաքումն սրտի իմոյ. արդ օրհնեցէք զիս և սիրեցէք 'ի խաղաղութիւն։ Եւ յառաջ ելեալ գնացին։

Իսկ եկեղեցպանն և մի ոմն 'ի կրօնաւորացն գնացեալ առաջի սրբոյ սեղանոյն, ասեն. Ո՛վ Տէր, և դու ներեա՛ս կնոջն՝ որ զայն գործեաց. և այլ կանանց ըզնոյն խրատ համարձակեալ հատանեն. արդ արա զնըշան քո զօրութեդ, զի վկայ լինիցի ազգաց, և վկայ և օրէն բազմաց։ Եւ իբրև յուղարկէին զկինն՝ ելանել ընդ փոքր զառ'իվերն 'ի հարաւոյ կուսէ վանացն, որ 'ի գլուխ 'Լարդակայ', և հայի 'ի փոքր ամրոցն Ա՛ԵԾամօր ներքոյ 'Լարդակայ՝ զոր Ա՛նդակն [2] կոչեն, ետես կինն 'ի հիւսիսական կողմանէն տեսուի զարմանալի. և ընկէց զմանուկն 'ի դայեակն, և ասէ. Ցեսանեմ այր մի գիսաւոր ընդ ամպս որոտացեալ, և ելեալ յեկեղեցւոյն գայ առ իս. տեսանեմ առ նա սուր սրեալ և թացուցեալ [3] և յարեան ներկեալ։ Եւ ընդ բանսն եհար զնա, և անդէն սատակեցաւ։ Զոր տեսեալ ծառայիցն, ընթացեալ ազդ առնէին սպասաւորացն եկեղեցւոյն. և հայրն ելեալ բարկացաւ եկեղեցպանին, տրտմեալ յոյժ՝ բազում ժամն արտասուեաց։ Ապա առեալ զսպասաւորսն տարաւ 'ի տեղին, և կազմեալ գերեզման, եդին 'ի նոյն տեղւոջն. և կանգնեաց խաչ քարեայ, և գրեաց 'ի նմա այսպէս.

ՈՐ ՈՒ ՑԱՆԴԳՆԵՍՑԻ ՄԱՐՏՆՁԵԼ

ԸՆԴ ԵԿԵՂԵՑԻ ԱՍՏՈՒԾՈՅ

ԱՑՍ ՍՈՒՐ ԵՂԻՑԻ ԸՆԴ ՆՄԱ

Եւ հաստատեալ կայ այս գրով 'ի նոյն տեղւոջն։

1 Յերիս օրինակս Ս-գ-ա-ի։ Նական չկայ։

2 Յօրինակի միում Ա՛ՐԴ-ա-ի՝ զոր Ա՛ՐԴ-ՈՒ ի-ԼԷՆ. իսկ յայլ երիս օրինակս Ն-գ-ա-ՅԷ-Լ։

3 Յերկուս օրինակս Ի-գ-ա-ՅԷ-Լ։

Իսկ զմանուկն առեալ էտ 'ի դայեակս մինչև յաբ բունս հասաւ. և ապա առեալ 'ի վանսն ուսոյց զնա, և հաստատեաց զնա հայր վանացն յառաջ քան զմահ իւր։ Իսկ հայրն նորա Իշխանն Աբծրունեաց մինչ դեռ գայր 'ի Կեսարիոյ, լուեալ զմահ կնոջն, ստիպ ջացաւ. իսկ հայրն Լոդիկ մխիթարեաց զնա։ Եւ նա խորհեցաւ շինել եկեղեցիս. բայց գնաց 'ի Մատ բաւանսն վասն նիւթ գտանելոյ, և անդ շինեաց եկեղեցի վայելուչ, և կոչեաց զանուն նորա վասն կնոջն՝ սուրբ Աթաթին, և զարդարեաց զնա հրաշալի սպասիւք և կազմուածք։ Նոյնպէս և զբոլոր Կարապետն 'ի Գլակայ վանսն մեծաշուք փառօք զարդարեաց։

Ա դարձոյց զԼուսաւոր 'ի Կարապետն և զՊարեխ. քանզի Իշխան ոմն անօրէն՝ տանն մամիկոնեանից՝ կտրեաց զերկու աւանսն 'ի վանացն, և էտ գուստանի ումեմն կնոջ։ Որ, բարկացեալ հօրն Կիւրղի, անիծեալ զիշխանն վասն կտրելոյ զգիւղսն 'ի վանացն։ Իսկ յետ ամսոյ միոյ 'ի յորս ելեալ, ընկէց զնա երիվարն, և եհան զոգին։ Բայց որդին թէպէտ և էտ զաւանսն, այլ ոչ էառ 'ի նմանէ հայրն մինչև 'ի գալ այս Իշխանիս։ Որդ այս Իշխանս կշռեաց քսանեւերկու հազար դահեկան, և էտ Իշխանին Տարօնոյ. և գնեաց զԼուսաւոր և զՊարեխ, և էտ զնոսա վանացն վճռաւ. և երկու գիւղս յիւր գաւառէն, զԲրատամետ և զգահ Իշխանացն [1]։ Իսկ զորդին թողեալ առ Լոդիկ, գնաց 'ի գաւառն իւր. և 'ի վախճանիլն իւր՝ էտ տանել զինքն 'ի վանսն Ինանկեան, և կայ 'ի կողմ արևելից երեք քայլ հեռագոյն յեկեղեցոյն։

Ընդ այն ժամանակս սպանին զԱրմիզդ Պարսից արքայն, և Զամբ Խոսրով որդի նորա եկն փախըստական 'ի Յոյնս [2]. և կնքեալ Աղկեդոնի հաւատոյն [3], դարձաւ զօրօք 'ի Օրկայ առ Պարսից գոր-

1 Յերիս օրինակս ՎԱՐԴԱՆԷ Ի ՂԳՈՆ։

2 Յերիս օրինակս 'Ի ՀՈՄ։

3 Զայս և Յովհաննէս կաթողիկոս գրէ յիւրում պատմութեան այսպէս. "Բայց մինչ դեռ կենդանի էր սուրբ հայրապետն Մովսէս, Խոսրով որդի Կաւատայ արքայի Պարսից, յետ բազում մարտից ապրութեաց և քաջութեաց, և տիրելոյ ազգաց բազմաց, ըստ ծագման նշուլից ոծայնի լուսոյն 'ի սիրտ նորա՝ 'ի ժամ վախճանի իւրոյ հաւատացեալ յոծ ճշմարիտ, և յոր-

ծաւոլքն, և զերկիրն իւր առնոյր։ Եւ մինչ 'ի Յունաց գայր Խոսրով, առեալ զՍուրեղ զտէրն Աշոտ և Խութայ Տարօնոյ իշխանն և Վասակ՝ հրամանաւն Մօրկայ, տարեալ 'ի Պուլին, և Հայոց մարզպան հաստատեաց՝ տուեալ 'ի ձեռս նորա զզօրս Հայոց երեսուն հազար. և ինքն առեալ զզօրսն Յունաց երեթանասուն հազար, գնաց 'ի Ատրպատական[1]։ Եւ ընդ Հայոց զօրսն հպարտացան բնակեալ Յոյնքն, անցին գնացին աւուր միոյ Ճանապարհ 'ի դաստակերտ, և անդ իջին։

Իսկ Ղևիսորձէս, որ զՍրմիզդ եսպան, գումարեալ զզօրս Պարսից ութսուն հազար, և եկն 'ի վերայ Սուրեղայ։ Իսկ քաջն Սուրեղ քաջալերեալ զզօրսն, հազիւ հաւանեցոյց մտանել 'ի պատերազմն։ Եւ բանս 'ի բերան Հայոց զօրացն Սուրեղ իշխանն մամիկոնենից և Հայոց մարզպան, 'ի բարեխօս և 'ի յոգնութիւն ջրոյ Կարապետն կոչել. և միաբան զայս բան ասացեալ, յարձակեցան 'ի վերայ զօրացն Պարսից. և ետ տոր 'ի ձեռս նորա զթշնամին։ Օ՜ որ գիտացեալ Սուրեղայ՝ թէ նա է թագաւորն, նմա մատեաւ. և սկսան բախել իրերաց։ Օ՜ որ վաստակեցաւ յոյժ Սուրեղ. սակայն զմահ և զկեանս առաջի եդեալ, բարձեալ զմուրձն 'ի վեր՝ ի՛նչոյց 'ի վերայ գագաթանն Ղևիսորձիշի, և ուղեղն ցնդեալ ընդ քիթն ի՛նքեր։ Եւ կտրեաց զգլուխն, և ձգեաց 'ի մախաղն իւր. և յորդորեալ զզօրսն 'ի պատերազմն, և զօրացեալ զօրացն, առաջի եդեալ զնոսա 'ի փախուստ, և կալան 'ի նոցանէ քառասուն և ութ իշխան կենդանւոյն. և համար կոտորածոյն ոչ երևէր՝ վասն բազմութեան։ Իսկ արս հազար ընդ իշխանացն ըմ-

գի նորա միածին, և 'ի Հոգին Սրբոյ։ և անարգեալ 'ի բաց զկռատմոլ ամբարշտութիւնն, խոստովան եղև՝ թէ ոչ գոյ այլ Աստ բաց 'ի միոյն միայն, զոր քրիստոնեայք պաշտեն։ Եւ ապա աւաղանին սրբոյ վերըստին ծննդեան լուսաւորութեամբ հազորդի կենդանարար մարմնոյ և արեանն տն։ Եւ ոչ՝ունեալ զնոր աւետարանն Քրիստի համբուրմամբ, յետ երից աւուրց վախճանի 'ի բարւոք ծերութիւն։ Եւ բարձեալ զմարմին նորա քրիստոնէից նուիրական սաղմոսերգութիւն և քահանայական գաստու, տարեալ դնեն 'ի շիրիմն Թագաւորացն։

1 Յերիս օրինակս գտանին 'ի Ռուխոտան։

բռնեալ, և մեծաւ յաղթութիւն դարձաւ 'ի պատերազմէն։

Եւ իբրև ազդ եղև առ Թագաւորն Յոսրով, և խնդաց յոյժ. իսկ զօրքն Յունաց տրտմեցան սաստիկ ամօթով։ Իբրև կոչեաց Թագաւորն զՍուշեղ, և պատրաստեցաւ տալ պարգևս ամ զօրացն, յղեաց առ Յոսրով՝ արքայն Սօրիկ, քանզի զնա Թագաւորին փոխարէն էին կացուցեալ. Եթէ գիտես դու զայդ, որ արքայի մահու սպառնայ Սուշեղ։ Իսկ նա խորհեցաւ դարան մահու գործել նմա, և արձակեաց կոչել առ ինքն զՍուշեղ. և քոյր Յոսրովու խնացեալ, ազդ արար Սուշեղայ զնենգուի եղբօրն։ Իսկ Սուշեղայ առեալ ընդ իւր քառասուն իշխան, առանց այլ ուրուք, կազմեցան զօրէն պատերազմի. և սուսեր պատերազմի ընդ մէջ ածեալ, այնպէս եկին առ Թագաւորն։ Եւ եկեալ երիվարօքն մինչև 'ի դուռն խորանին, և ամ խստութիւն տուեալ պատասխանի, և 'ի լոյս ածեալ զմահու դարանն, Թքակոծեցին զնա, և զանմտութիւն նորա պարսաւեցին. և յարուցեալ մեծաւ բարկութիւն իշխանօքն հանդերձ, եկ 'ի Թագաւորէն։ Իբրև լուաւ զայն Թագաւորն՝ երկեաւ, քանզի մանուկ էր։

Իսկ իշխանն Սուշեղ արձակեաց առ Յունաց զաբրավարն, և ասէ. Կամեցայք դուք սպանանել զիս նենգութիւն, արդ մի զարթուցանէք զառեւծ՝ որ 'ի քուն է, և մի զգայլ՝ որ զիւր բարն մոռացեալ է. ապա Թէ ոչ, այն որ զութսուն հազարսն յաղթահարեաց, կարող է և զեւթանասուն հազարսն սատակել։ Եւ ինքն Թողեալ զզօրսն 'ի Դուին, 'ի բաց եկաց 'ի մարզպանութենէն. և առեալ զզօրս իւր, որ 'ի մամիկոնեան տանէն էին, եկն 'ի գաւառ իւր։ Եւ յետ սակաւ ամաց Եսպան Վոկաս զՍօրիկ, և ինքն նստաւ յաթոռ նորա։

Իսկ Յոսրով գնացեալ վրէժինդիր Սօրկայ, և եկեալ անցանէր ընդ Կարնոյ քաղաքն. և արձակէ առ Սուշեղ իշխանն Տարօնոյ պատգամս, և ասէ. Լաւ եկ ընդ իս 'ի դուռն Թագաւորին Յունաց, լինել վրէժինդիր Սօրկայ մահուանն. ապա Թէ ոչ, 'ի դառնալն իմ՝ զերկիրդ քանդեմ, և զքեզ կապա-

նոքա տանիմ 'ի դուռն արքունի, կնաւ և որդեաք։ Իսկ նա ոչ ինչ յղեաց պատասխանի առ նա, այլ սկսաւ ամրացուցանել զգաւառն։ Եւ իբրև գնաց Խոսրով, էառ աւար և գերութիւն յերկրէն Յունաց. և անցեալ գնաց 'ի կողմանս Դասենոյ, 'ի Դուին և 'ի Հեր և 'ի Դահլ։ Դայց յորժամ եկին 'ի Կարին, առաքեաց Խոսրով զՄիհրան 'ի Տարօն առ Մուշեղ իշխանն, զի կալցէ զնա և տարցէ 'ի պարսիկս։ Եւ հրաման տուեալ, զտեղիսն՝ յորս նա զհաւատն ունէր՝ [1] կործանել, և զկրօնաւորսն սպանանել. որոց եկեալ, զիրսն կատարէին։

ԳԼՈՒԽ Բ.

Պատմութիւն Պարսից. և գալն Միհրանայ 'ի Տարօն երեսուն հազարաւ. և կռուորելն զնոսա Գայլուն Վահանայ յՕձ քաղաքի. և դառնալն առ Միհրան տէրն Մշու, Գալէրայ, Խութայ, Հատեոյ, և Սանեոյ։

Յառաջին ամին թագաւորութեանն Փոկասու, յորժամ սպանաւ Մաւրիկ արքայ դաւով 'ի ծառայէ իւրմէ՝ որ և նստաւ յաթոռ նորա, յիշեաց Խոսրով զուխտն Մաւրկայ՝ որ 'ի մէջ նորա և իւրն, և եկն էանց 'ի Յոյնս չորեքտասան բիւրօք. և բրեաց բազում աւանս և գաւառս, և դարձաւ։ Իսկ զՄիհրան քեռորդին իւր առաքեաց 'ի Տարօն երեսուն հազարաւ։ Եւ իբրև եկն նա 'ի գաւառն Հաշտենից, կալեալ զոմն առաջնորդ իւրեանց՝ անցեալ եկին մինչև Մարձանն քարեայ։ Իբրև ընթերցան զգիր արձանին, խոր տակեցին զնա. և ինքեանք ութ հազար այր անցին 'ի Մեղտի և Մստեղունս [2] ամրոցն. իսկ քսանեւերկու հազարն դեռ Մրձան անդր կային, դիտելով զփախստականսն։ Իբրև գիտացին արքն եւթն, որք

[1] Յերկուս օրինակս ՔԷՂԻՆ, հաւատքէր։
զոր նա հաւատք ունէր. և յայլսմ [2] Յերիս օրինակս ՅԱՍՏԷՂՈՆ։

խոտաձարակքն էին, եկին 'ի վանան, և զամենեսեան փախուցին զկրօնաւորսն։ Ամենք փախեան, և ոմանք մնացին. բայց Պօղիկարպոս զամենեսեան յուզարկեաց յամուրն Ողկան, և 'ի տեղւոջն զՀայրն միայն զԱ(Ա)ոդիկ արգել, և զպատաւորսն եկեղեցւոյն. և հրամայեաց ապատաւորացն՝ տէրունական մարմնոյն կազմել զանձինս։ Իբրև մատուցին զպատարագն եւ թանեքին խոտաձարակքն, և հրամայեցին նշանագրի միւմ՝ որ եկեալ էր 'ի Յունաց՝ գրել զառ յինքեանց ասացեալսն. և ինքեանք տարածեալ զձեռս իւրեանց առաջի ՝որ սեղանոյն, և ասէն այսպէս.

Տէր ՝ած զօրութեանց և արարիչ յաւիտենից, որ ստեղծեր զմարդն 'ի պատկեր քո բարեբարութեդ, և կացուցեր զնա իշխան 'ի վերայ երկրի. և եռուր նմա զփառս և զպատիւ յաւիտենական անմահ։ Ուստի նախանձեալ բանսարկուին՝ մտին մեղք յաշխարհս, և 'ի մեղաց անտի մուտացուն, և 'ի մուտացմանէն կոբուստ յաւիտենական. ուստի զորդեգրութիւնն, որ յոյ էր, ջնջեցաք մեղացն ապականութք. ուստի փրկութեն Ճանապարհն բարձեալ էր, և մահ թագաւորեալ։ Այլ դու, ՝ որ, գթացար 'ի ստեղծուածս քո ՝ածային ձեռացդ. առաքեցեր զմիածին Որդիդ քո 'ի փրկութի աշխարհի, որ եկն և եղև մարդ 'ի կնոջէ 'ի մեր նմանութիս, և էառ զմեր պատժապարտութիւնս. դատապարտեաց զմեզս մարմնով իւրով, ելոյծ զանէծս նախաստեղծին Ադամայ։ Արբարձ զապականութի մարմնոյն 'ի գերեզմանի, և իշխան գոլով 'ի վերայ մահու՝ զմահ գերեաց, և զդժոխս աւերեաց. զարդելեալսն ազատեաց, և Ճանապարհս յերկինս ուղղեաց, առաջնորդելով ամենեցուն յառաջին յանմահական տեղիսն։ Օ այս ՝ամ արարեալ, և զմարմին իւր ետ հաւատացելոց 'ի կերակուր, և զարիւն իւր ըմպելի, և զմահ նորա պատմել ՝ամ՝ հաւատացելոց։ Արդ վասն անուան նորա զմահ առ ոչինչ համարելով՝ զանձինս իւրեանց մատնեցին տանջանաց և մահու, փոխարինի ակն ունելով 'ի միածնէ Որդւոյ քո, փառաւորելով զամենեցունց Հայր ՝որ։

Այսօր և մեք զանձինս մեր 'ի մահ մատնեմք և չարչարանաց և վշտի. այլ և վասն խոստմանդ, թէ որ

ձանալեն զիս՝ 'ի հալածանս կայցեն, զի «Ալ բան եմ եմ, ասէ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի»։ և գիտեմք, թէ, զի ոչ անտես առնես զաղաչանս մեր, և ոչ ընդ վայր հարկանես զանձինս ծառայից քոց։ Տուր, թէ, փառս անուանդ քո վասն սրանչելեաց քոց, զորս ցուցանես առ փառաւորիչս անուանդ քո յաղագս և յաւիտեանց։ Մի տար օտարոտից զընակութիւն սիրելեաց քոց անհաւատիցն ժառանգել. և մի մեծարանեսցեն հեթանոսք՝ թէ կործանեցաւ տեղի փրկութեան նոցա, և ոչ ոք է՝ որ օգնէ նոցա. և ո՞ւր է թէ ած նոցա՝ յոր յուսացեալն էին։ Յիշեա, թէ, զգինս արեան քո, և փրկեա 'ի ձեռաց նեղչաց զհաւատացեալս անուանդ քո. զի ծանիցեն ազգք հեռաւորք զմեծութիւն քո, և յուսասցին յանուն քո ամենեքեան, որք երկիւղիւ ծառայեսցեն մեծութեան քո։ Լիցի, թէ, զժողովուրդս քո, հովուեա և բարձրացո մինչև յաւիտեան. պարապեա, թէ, խնամատար աջովդ զոր փրկեցեր պատուական խաչիւդ քով, տալով օգնական 'ի նեղութեան 'ի դէպ ժամանակի։ Զգեա, թէ, զամբաձածուկ աջ քո 'ի վերայ բանաւոր փարախիս այսորիկ, և մի տար զժառանգութիւս քո բնակութեան անհաւատիցն. եղիցի ձեռն քո 'ի զօրացուցանել զհաւատացեալսն, և որք դաւանեն և խոստովանին զանուն քո առաջի ազգաց անօրինաց։ Տուր, թէ. մատն ժառանգութեան անձանց մերոց 'ի վերինն Երուսաղէմ. զի վասն քո մեռանիմք զօր հանապազ, և զանձինս մեր վասն քո անբաւ և անչափ մարդասիրութեդ 'ի մահ մատնեմք։ Այլ ինչ ոչ ունիմք պարտուց վճարումն, բայց յաշխարհի ասա նեղութիւն ունիմք։

Լուր, թէ, ձայնից մերոց, և խնայարհեցո զունկն քո 'ի մաղթանս ծառայիցս, բարեխօսութիւք քո Կարապետիս և Մկրտչիս. և սորին ճգնութիւնս պահեա զեկեղեցիս հաւատացելոց անսասանելի և անդրդուելի, զի հաստատուն կացցէ հիմն հաւատոյս մերոյ 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից խոստովանութեանն, մինչև երևեսցի արդար դատաստանն համբերն աշխարհի։ Երևեսցի փառք քո, թէ, 'ի տաճարս յայս՝ զոր ընտրեցեր հիմնարկութիւք սրբոյն Գրիգորի, և բնակութիւք սրբոյ Կարապետիս. և կացցէ փառք՝ որ

Արրորդութեն 'ի տեղի ասա։ Վանդի ցա է դուռն դժոխոց, և կապանք մահու. իսկ այժմ 'ի սմանէ մահ սարտուցեալ, երկնչի մերձենալ չարութիւն առ հաւատացեալս։ 'Ի սմանէ և դեռ պատկառեցան, և մի դժրեսցեն զսպասաւորքն սորա, և որք գայցեն 'ի սմա։ Զբազմութիւն դիւացն կապեսցես 'ի տեղւոջս յայսմիկ, զի խթեսցեն զծուլացեալսն յանծպաշտութենէ. բայց մի տացես նոցա իշխանութիւն՝ ըստ իւրեանց լրբութեն յարձակիլ 'ի վերայ հաւատացելոց։ Արդեսցի և որք հաւատովք յիշեսցեն զանուն Տեր եկեղեցւոյս 'ի նեղութիւն իւրեանց կամ 'ի վիշտս կամ 'ի ցանկութիւն չարեաց կամ 'ի լկումն կամ 'ի գետալիք ժութիւն կամ 'ի գազանաց բեկումն կամ 'ի վիհս անհնարս որոգայթից, դու Տեր ՀԱԾ մեր լուիցես նոցա, և զերծուսցես զնոսա յարժանահաս չարեաց անտի. քանզի քո արարածք են և գինք արեան։ Մի՛ վասն մեղաց նոցա դատեսցես զնոսա, և վասն անօրէնութեանն նոցա պատժապարտեսցես զնոսա. այլ գթութիւնքդ խրատեա, որ անոխակալդ ես և ամենեցուն մատակարար ըստ իւրաքանչիւր պիտոյից։

Յիշեա զորս արեամբ քով գնեցեր, և մահուամբ քով որդեգիրս արարեր. մի եղիցի իշխան 'ի վերայ հօտի քո, և ապաստանիչ ժառանգութիւնդ վերին Սիոնի։ Ցուր, Տեր, շնորհս բնակիչս սորա՝ որք պանդրիստութիւնքդ կենաց գնան 'ի կեանս յայսոսիկ, և ոչ ըստ մարմնոյ գրգանաց, և զմիտս իւրեանց յերկիւղ քո ունիցին. թող զմեղս նոցա, ջնջեա զյանցանս նոցա, բարեխօսութիւնքդ սրբոյ Կարապետիս. և հեղմամբ արեան սորա՝ գրեա զնոսա 'ի դպրութիւն կենաց 'ի վերնակս արդարոց քոց։ Այո՝ աղաչեմք. եթէ մեղք մեծամեծք իցեն, 'ի կալ առաջի սրբոյ եկեղեցւոյս, և ունելով բարեխօս զՀեղումն արեան սրբոյ Կարապետիս, և զմեր նահատակութիւն տառապանացս, հաշտեաց ընդ նոսա մարդասիրութիւնքդ քով։ Մի՛ անտես առներ զաղաչանս մեր, զի դու վասն մեղաւորաց իջեր յերկնից, որպէս ասացեր. "Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս"։ Արդ վասն մեղաւորաց աղաչեմք, և ոչ վասն արդարոց. զմեղաւորաց թող զմեղս, զՀիւանդաց առողջացո զվերս. և որք ապաւինեցան

'ի կենդանութեանէ իւրեանց, և գործեցին զբարիս 'ի նոր եկեղեցիս, և որք սատարեսցին սրբոյ Կարապետիս և կրօնաւորացս, և բազում մեղս գործեալ իցեն, և առատաձեռնին 'ի մեղաւոր ընչից իւրեանց սրբոյ Կարապետիս, նոյն ինքս Կարապետս լիցի փոխատու փոխանակ ապականացու ողորմութեանն ըստ հաւատոյ նոցա զպարտիս իւրեանց. մատակարարեա 'ի նոսա առատապէս զթողութի մեղաց։ Ի՞նասցէ զօրութիւն աջոյ քո 'ի վերայ վիմիս այսորիկ, որպէս յառաջ հիմն նարկեցաւ քո զօրութիւդ, նոյնպէս կացցէ մինչև գաս 'ի նորոգել զերկիր։ Յայնմ աւուր գացես զսա նորոգ և անապական որպէս զխորանն 'ի հնումն, զի դու կարող ես յամի. և զմեր մահս ընկալ, և յամ արա բածոց քեզ փառք յաւիտեանս։

Լ,ս յասել զամէնն, եկն ձայն յերկնից՝ որ ասէր. Լ,զլիցի ձեզ որպէս և կամիքդ. և որք վասն անուան ի մոյ և Կարապետիս պանդխտասցին, հատուցից նոցա 'ի գալստեան իմում, և զմեղս թողից նոցա. վասն զի մարդասէր եմ առ ամենեսեան. դարձեալ և դուք եկայք 'ի տեղիսն լուսեղէնս, զոր պատրաստեցիք Ճգնութեամբ ձերով։ Լ,ս լուեալ սրբոցն, երկիր պագին առաջի սրբոյ սեղանոյն, և ելեալ արտաքս։ Լ,ս գնաց Պողիկարպոս առաջի սրբոյ խաչին, և անդ սկըսաւ աղօթել և աղաչել զՅԾ վասն խաղաղութեան ամ աշխարհի, և զեկեալ թշնամին խորտակելոյ, և աղքատաց մնալ 'ի տեղիս իւրեանց։ Լ,ս յանկարծակի հասին զօրքն Պարսից. իբրև տեսին զՊողիկարպոս, վազվազակի հատին զպարանոց նորա և ընկեցին առաջի խաչին։ Լ,ս ինքեանք փութապէս եկին մինչև 'ի դուռն եկեղեցւոյն, և տեսին զկրօնաւորսն յարտասուս և յաղօթս պարապեալ. և յարձակեալ 'ի վերայ զեւթանեքեանն կոտորեցին։ Անոց անուանքն են այսոքիկ. Զենոփնաս, Պողիկարպոս, Միմէոն, Յոհաննէս, Լ,պիփան, Դիմաւիոս, Լ,նարկիոս[1]։ Որքա եւթանեքեան կատարեցան 'ի զօրացն Պարսից Ի՞ՀՐԱՆԱՅ, յամենեանն քաղաց՝ որ օր չորրորդ էր, յա-

1 Յերկուս օրինակս Ն-ՐԷ-ԿԿ։

ւուր հինգշաբաթի յիններորդ ժամուն. և ինքեանք մնացին 'ի տեղին մինչև ցառաւօտն։

Այլ զդուռն եկեղեցւոյն ոչ կարացին գտանել, զի ծածկեաց ՝որ 'ի նոցանէ. և սկսան մրնջօք հարկանել, և ոչ գտին։ Այլ զարհուրեալք 'ի դիւաց՝ փախեան 'ի տեղւոջէն, զի գիշեր էր. և մարմինք սրբոցն անկեալ կային 'ի տեղւոջն զերիս աւուրս անթաղ, քանզի փախեան ամենեքեան։ Այլ յետ երից աւուրց եկին սպասաւորք եկեղեցւոյն, և հայրն Լեոդիկ. և տեսեալ զնոսա՝ զի վախճանեալ էին, յարտասուս եղեալ՝ տրտմեցան յոյժ։ Այլ առեալ զնշխարս նոցա ինքուցին 'ի կողմն հարաւոյ 'ի մէջ դրախտին, և անդ փորեցին զերկիր, և ինքուցին զնոսա 'ի գերեզման առ Նիտոն և Լրոնիդէս, որք զկնի սրբոյն Երիգորի ելեալ էին 'ի Լեսարիոյ. և կանգնեալ նշան տերունական 'ի վերայ նոցա, բազմաց բժշկութիւն լինէր 'ի տեղւոջն։

Իսկ ոմանք հասեալք 'ի Ուշեղայ իշխանէն՝ տեղեկանալ վասն զօրացն, իբրև տեսին զնոսա կոտորեալս՝ հիացան. և փութանակի երթեալ պատմեցին զկրոն իշխանին Ուշեղայ։ Այլ նորա լուեալ, զաւուրս երիս իբրև զմեռեալս դնէր անխօս։ Իսկ զօրքն մատուցին նմա թուղթ քրիստոնէական օրինօք և մխիթարութիւն, ասելով. Հշմարիտ շառաւեղ երանելի յուսոյն, երջանիկ ասպարապետ, մի տրտմիր վասն նոցա. զի աղօթիւք իւրեանց՝ ամուր աշտարակ եղեն աշխարհի, բարեխօսք և օգնականք մեզ առ ՝ած։ Այլ դու առաւել գոհութիւն մատո ՝այ, որ 'ի քում ժամանակի յայնքան աստիճան առաքինութիւն հասին, և հանգստեամբ փոխեցան առ ՝ած մարտիրոսական մահուամբ յաշխատութիւնէ 'ի հանգիստ, 'ի խոտաբուս կենաց 'ի դրախտն փափկութիւն, և մեզ միշտ բարեխօսք։ Այլ դարձ արի սթափեաց, և զեկեալդ 'ի վերայ մեր զԱՄիհրան յուղարկեացես։ Իսկ նորա որպէս 'ի քնոյ զարթուցեալ, հրամայեաց կոչել առ ինքն զԱՄահան, զոր իշխան էր արարեալ զնա Ցարօնոյ մինչ ինքն Հայոց մարզպան եղև։ Այլ ասէ ցնա. Ամ դեակ Ամահան, դու զիտես զաւուրս կենաց իմոց, զի այս հարեւր և քսան ամ է՝ որ ես պատերազմ եմ

մղեալ, և սլաքով եմ սրբեալ զարիւնն 'ի Հակատէս փոխանակ քրտանցն. ութասունևերեք ռազմ անձամբ իմով եմ կարգեալ և մղեալ։ Այլ այժմ ծեր եմ և դողդոջուտ, և օգնական իմ ՝ած է և դու, և ոչ այլ ոք. զի որդին իմ մեռաւ երկոտասանամեայ[1]։ Այլ արդ, որդեակ, դիր զայս 'ի մտի քում. զի եթէ 'ի վերայ քրիստոնէից մեռանիս և եկեղեցւոյ, մարտիրոս ես. իսկ եթէ 'ի վերայ մարմնաւոր ընչից իջանես 'ի մարտ, և այն քաջութիւն է. զի ես այլ ժառանգ ոչ ունիմ, և երկիրս քեզ եղիցի, և զաւակի քում յետքո։ Արդ արի և գնա, և իմաստութիւն որսա զնա, և ՝ոչ Կարապետան եղիցի քեզ օգնական և պարիսպ, և աղօթք սուրբ կրօնաւորացն յաջմէ և յահեկէ։

Իսկ Ա՝ահան յանձին կալեալ զիրսն, սկսաւ դէպ պանս կաղմել և առ նա յուղարկել, զի հաշտեսցի և գնասցէ։ Իսկ նա ասէ. Այլ մինչև զիշխանն Ա՝ուշեղ ոչ կալեալ տանիմ 'ի պարսիկս առ արքայն, ոչ գնամ աստի։ Իսկ Ա՝ահան արձակեալ, ասէ. Այթէ զերկիրս ինձ տաս տէրութիւն և իշխանութիւն, ես տաց զիշխանն Ա՝ուշեղ 'ի ձեռս քո. և ես ինքն առ քեզ գամ ապստամբութիւն 'ի նմանէ, և հատանեմ զերկիւղ 'ի պատերազմէ։ Այլ նորա արձակեալ կոչեաց, քանզի յօժար էր իրացն. և ինքն իջանէր 'ի Ա՝ուշն աւանի, և Ա՝ուշեղն յամուրն Աղկան։

Արդ այն զօրքն, որք զկրօնաւորսն կոտորեցին, անցեալ գնացին յԱ՝ստղոն ամրոցն[2]. կացին աւուրս երկու, և ոչ ինչ կարացին առնել. ապա գնացին առ Ա՝իհրան, և մատուցին զնամ ձև ամրոցին։ Իսկ իբրև եկն Ա՝ահան առ Ա՝իհրան, և նա խնդրեաց 'ի նմանէ զԱ՝ստղոնս. և Ա՝ահան ասէ. Այ այդպէս, տէր. այլ տուր 'ի ձեռս՝ իմ չորեք հազար այր, որ գնամք 'ի վերայ ամուր բերդիցն՝ ուր մտերիմքն նորա էն և գանձքն. գուցէ բռնացեալ՝ ոչ տայցեն 'ի ձեռս իմ, ապստամբ զիս կարծելով. այլ այժմ երթիցուք նախ յ( )ձ քաղաք, և ապա յայլ ուրեք։ Իսկ Ա՝իհրան տուեալ 'ի ձեռս նորա չորս հազար ընտ-

1 Ցերիս օրինակս էրէոպատառ ամէ։ ամուրն. յայլում յԱ՝ոպէզնս ամուրն.
2 'Ի միում օրինակի յԱ՝ոպէզն որպէս և 'ի առորև։

տիր առնեաձիոյ, և նորա առեալ տանէր մինչև 'ի դուռն ( )ձ քաղաքին. և 'ի ներքսնեանդուռն դարան մնայր դորձեալ՝ 'ի ձեռս դալ զօրացն։ Եւ առ վաղ ղիւն բանս արարեալ քաղաքին 'ի ներքս առնուլ զզօրան Պարսից. և քանզի նուրբ էր մուտ քաղաքին, սակաւ սակաւ կարէին մտանել 'ի ներքս. և որք ընդդուռն յայնկոյս անցանէին, զայնս 'ի տունս արկեալ՝ 'ի զգեստիցն կողոպտէին, և զգլուխսն կտրէին. և արտաքոյ պարապին յաներևան տեղիսն 'ի խորսն լը-նուին։ Եւ 'ի չորեքհազարէն յիսուն այր թողեալ էր 'ի Խարձ՝ կոչեցեալ գեւղն. և նշան տուեալ էր, թէ յորժամ զոք 'ի ձեզ յուղարկեմ, 'ի Միհրան գնացէք, և այլ զօրս ածէք։ Եւ այնպէս արարեալ, և յղեաց՝ թէ այլ զօրս տուր։ Եւ նոքա դարձան առ Միհրան, և առին 'ի նմանէ երկու հազար այր ընտիր, և եկին առ Վահան. և նա այնպիսի դործ հնարեաց, զոր ոչ կարացին գիտել պարսիկքն։

Զոր յորժամ եկին 'ի դուռն Մօրացն, Վահան զՊարսից զօրաց զերիվարսն և զհանդերձսն տուեալ էր քաղաքացեացն. 'ի դուռն կոչեաց զնոսա, և ետ խրատ՝ թէ յորժամ նոքա 'ի ձեզ հային, դուք միաբան 'ի քաղաքն դարձէք, և 'ի ներս մտեալ՝ զյաղթութիւն փողն հնչեցուցէք. և զդուռն քաղաքին 'ի բաց թողէք, զի նոքա կարծիցեն՝ թէ առին զքաղաքն։ Եւ արարին այնպէս։ Զոր իբրև տեսին պարսիկքն՝ զի դիմեցին նոքա միաբան 'ի քաղաքն, խնդացին յոյժ. և դիմեցին նոքա ևս 'ի քաղաքն, և սկսան մտանել։ Իսկ Վահան փութով ընդ առաջ եկեալ զօրացն, աւետիս տայր. և քան այր 'ի պարսիկ զօրացն աւետաւորս առաքէր առ Միհրան, թէ առաք զքաղաքն. և ինքն դարձաւ զհետ Պարսից զօրացն։ Եւ իբրև բազումք մտին 'ի քաղաքն, և այլքն դեռ մտանէին, սկսան կասկած առնուլ զիրացն, և կամէին յետս դառնալ։ Իսկ Վահան զհետ մտեալ, սկսաւ կոտորել, և 'ի մօրսն լնուլ. և ինքն աստի, և քաղաքացիքն անտի քառասուն այր մօրահեղձ արարին. և զայլսն 'ի քաղաքն արդելեալ, կտրել տայր

1 Յերկուս օրինակս 'Ի հ=ԷՅ։

զգլուխն. և 'ի պարիսպն հանէին։ Եւ արարեալ համար յաւուր յայնմիկ, զտէն զգլուխս վեց հազար, պակաս երկու։ Եւ հրամայեաց զամենեցուն զքիթն կտրել և զթլփատն, և արկանել 'ի մախաղ։

Եւ ինքն առեալ զզօրս իւր արս եւթնհարեւր, եկն 'ի Ամուշն աւան. և երեքհարեւր այր թողեալ յանցս Ամեղայ[1], և երկու հարեւր այր աշտենաւոր թողեալ 'ի Սանասայ 'ի Ծմակն[2], և ինքն երկու հարեւր այր առեալ ընդ իւր, եկն առ Միհրան. և մտեալ 'ի սենեակն, խօսեցաւ ընդ նմա այսպէս և ասէ. Եւս փախստական եկի 'ի քո զօրացն առ քեզ. զի ոչ 'ի քաղաքն թողին զիս, և ոչ աւարամանն էտուն մեզ. այլ և զիմ զօրսն 'ի քաղաքն արգելին, և ես փախստական գամ։ Իսկ Միհրան խորհեցաւ հազար այր արձակել 'ի վերայ նոցա. և Ամահան ասէ. Եւ 'ի քէն իսկ ապստամբեալ են. քանզի զաւար քաղաքին և զկապուտն առեալ, և կամին 'ի Յոյնս անցանել։ Իսկ Միհրանայ առաւել բարկացեալ, հրամայեաց երկու հազար այր արձակել 'ի վերայ նոցա. և Ամահան խրատ տայր զօրացն՝ 'ի գիշերի մի անցանել ընդ գետն Տիգրեայ, այլ ինքնանս առնել, և 'ի վաղիւն ապա գնալ. Ուստ ոք թշնամի, ասէ, յարձակիցի. և դուք չէք ընդդէմ վայրուցն։ Եւ ասէ ցնոսա. Հազար այր գնացէք ընդ Ծմակն[3], և հազար ընդ դաշտն։ Եւ տուեալ նոցա առաջնորդ, և ինքն էլ 'ի Միհրանայ, գնաց յուղարկել զնոսա։ Եւ իբրև գնացին յայն տեղին՝ ուր բաժանել հրամայեաց, առաքեաց հարեւր այր ընդ նոսա՝ որ ընդ Ծմակն գնացին. և ինքն հարեւր այր առեալ, գնաց զկնիս նոցա։

Եւ իբրև գնացին յերգր գետոյն Տիգրեայ, յայն կոյս ինքնայն զնոսա 'ի քուն առնել. և ինքն 'ի պատրաստի արարեալ զդարանակալսն, հրամայեաց ծառայիցն՝ կտրել զերիվարսն արօտոյ պատճառաւ, և զնոսա յանհոգս առնել։ Եւ յանկարծակի հնչեցուցին զփողսն յետոյ և յառաջոյ, և 'ի մէջ առին զնոսա.

1 Ցերկուս օրինակս Մէղէայ։ Յեղէն Բուղոյ 'ի Ծմոն։

2 Ցերկուս օրինակս Երկու հարեւր այր աշտենաւորս 'ի Սասանայ 'ի Ծմոն։

3 Ցերկուս օրինակս գարձեալ 'ի Ծմոն. որպէս և 'ի առորև։

և 'ի սակաւ ժամու բարձին զգլուխս նոցա, և 'ի գետ անդր ընկեցին, և մի ոք ոչ կարաց զերծանել. և զԵրիվարան առաջի եդեալ, 'ի Ն՝ծմակն անցուցին։ Եւ մինչ նոքա զայն պատերազմն անցուցին և վճարեցին, և յառաջն եկին այսոց, և նոքա դեռ չէին եկեալ 'ի Ն՝ծմակն, և կային մնային մինչ նոքա եկին և յանհոգս եղեալ ելին, զի զայն խրատ տուեալ էր Վ՝ահանայ։ Եւ ապա կալեալ զխելս կամրջին, և ձայն սաստիկ հնչեցուցին շուրջանակի զնոքօք, և սկսան յանխնայ կոտորել զնոսա. և մի 'ի նոցանէ 'ի մօրն թագուցեալ, հեծեալ յերիվարն՝ փախեաւ 'ի Մ՝ուշ։ Որոյ զհետ մտեալ երկուց ոմանց, և յայնկոյս գետոյն ջաղխեցին զգլուխս նորա, և ուղեղն ընդ քիթն ելանէր։ Եւ մեւս ընկերին առեալ աւազ մատուցանէր, և ասէր. Պարսից խորտկարար, առ զաղս։ Եւ կոչեցաւ անուն տեղոյն այնորիկ Ա՝ռաղս մինչև ցայսօր. զոր և աւան իսկ շինեաց։ Եւ Վ՝ահանայ 'ի մօրին տուեալ զնոսա, ոմանք այլ ոչ կարացին ելանել, և ոմանք 'ի ջուրն անկեալ խեղդեցան։ Եւ զորս 'ի ցամաքն սպանին, զքիթն և զթլփատն կտրէին և պահէին, և զգլուխն 'ի մօր անդր և 'ի դաշտն ընկենուին։ Եւ ժողովեալ զերկու հազար երիվարն, ետ տանել յԱ՝ղանց[1] քերդն, զոր դեռ Ա՝ղնուտն կոչեն։

Եւ 'ի վաղիւն դարձեալ եկին առ Ա՝ՒՀրան[2]. և Վ՝ահան հրամայեաց ծառայից իւրոց՝ Ճաշ առնել, և՝ զՎ՝ԻՀրան կոչել։ Իսկ նա վասն խօթութեան պատճառանաց 'ի սենեակ մտեալ, զՎ՝ահան միայն թողոյր առ իւր։ Իսկ Վ՝ահան դռնապան եղեալ, և զիշխանն ոչք գային դարձուցանէր, ասելով. Այսոց մարզպանն չկարաց գալ 'ի Ճաշն։ Իսկ նոցա ժողովեալ 'ի տաճար մի, ընդ գինի մտին. և Վ՝ահանայ առեալ զմախաղն, ուր քիթքն և թլփատքն կային, ետ բերել առաջի իւր։ Իսկ նորա զարհուրեալ, ասէ. Ո՞՝ինչ է այդ, զորոյ տուր ինձ։ Եւ նա կարգաւ պատմեաց նմա ստուգիւ, և մի բան ոչ թագուցեալ 'ի նմանէ զոր ինչ արարեալն։ Իսկ նորա բարկացեալ, առեալ զտէգն 'ի ձեռանէ ծառային, և կամէր հար-

1 Յերիս օրինակս Ղ՝ՌՆՈՒ-ԲԷՐԴՆ։ 2 Յերկուս օրինակս առ ՆԻՒՈՐ։

կանել զԱ՝ահան։ Եւ նորա ձգեալ զձեռն իւր 'ի սուրն՝ որ առաջի կայր, կտրեաց զԹլփատն նորա, և եդ 'ի բերան նորա, և ասէ. Դու ես, որ թշնամանէիր զՅԱԾ, և զկրօնաւորսն իմ զսիւնան աշխարհի սպանանել տայիր։ Եւ կտրեաց զքիթն, և ցուցանէր աչացն. և պատառեալ զփորն, ետ ծառային հանել զլեարդն և դնել 'ի բերանն. և հարեալ զդանակն 'ի փորն, և ետ թողուլ 'ի ցից։

Եւ մինչ լոկ որ զԹլփատն կտրեաց, ասէ. Ցուր բանից նիշ և պատուէր 'ի պարսիկն՝ որ յԱ՝պահունիս, և ես ապրեցուցանեմ զքեզ։ Եւ նորա տուեալ բանից նշան և պատուէր՝ բազում երդմամբ ասացեալ, զոր նա և նա միայն գիտէին։ Եւ իբրև ասաց զկրոն, առեալ զդանակն եհար 'ի սիրտն, և անդէն մեռաւ։ Իսկ ծառայիցն առեալ զարիւնոտ զգեստն պահէին, և զգետինն մաքրեալ յարենէն, և կողմնեցուցեալ 'ի մահիճն, քնոյ պատճառանօք ծածկեցին։ Եւ ինքն կոչեաց զպարսիկ դպիրն Ա՝ՒՀրանայ 'ի սենեակն. և ետ գրել ողջոյն և բանից նիշ՝[1], թէ յետ երից աւուրց էլ 'ի բլուրդ՝ որ 'ի վերայ Կոթ ձորոյն՝ հազար ամբք միայն, զի տեսցուք զկրեարս։ Եւ դպիրն գրեաց որպէս ասաց նմա Ա՝ահան, և եդ զմատանին Ա՝ԻՀրանայ 'ի վերայ. և կոչեաց 'ի ծառայիցն Ա՝ԻՀրանայ տասն այր հաւատարիմ, և ետ տանել ըզԹուղթն առ Ա՝արշիր՝ որ զՀազար այրն ունէր ընդ ինքեան, և յԱ՝պահունիս էր. և առեալ զԹուղթն գնացին։ Իսկ Ա՝ահան կոչեաց զնուիրակն, և ասէ. Երթ կոչեա զայն անուն իշխան։ Եւ կոչեաց. և իբրև գայր իշխանն և մտանէր ընդ փողոցն խաւարչտին, միայն վեց այր ատի և անտի կային։ Եւ մինչ դեռ կամէր մտանել 'ի սենեակն, աճապարեալ ունէին զփողն, զի մի ձայն ինչ բարձցէ 'ի մեւան. և հարեալ դանակ 'ի սիրտն, 'ի մեւս այլ սենեակն ձգէին զդին. ուր և զնուիրակն և զդպիրն վասն պատճառանաց իւրաց արկանել ետ 'ի բանտն։

Եւ ինքն սկսաւ կոչել զիշխանն խաբէութեամբ 'ի խորհուրդ, և նենգով այնպէս առնէր. և եպան

1 Յերկուս օրինակս ողջոյն և նշանաբան։

յաւուր յայնմիկ իշխանս ուԹսուն և վեց։ Եւ իբրև վՀարեցան իշխանքն, գնաց ինքն 'ի տաՀարն՝ ուր զորքն էին Պարսից. և ժողովեաց զնոսա 'ի նեբս, և զիւրն և զայլ գաւառին մարդիկն արտաքս էՀան։ Եւ ինքն սկսաւ զնոսա վտանգել բանիւ, Թէ արժանն էր ձեզ զմարգարտասպսակն զմարզպանին գողանալ. արդ հրամայեալ է՝ զձեզ զամենեսեան մերկ առնել, մինչև ցուցանէք։ Եւ հանեալ զամենեցուն զՀանդերձսն, արգել զնոսա 'ի տաՀարին, և 'ի մեւս այլ՝ արս Հազար ինՀարեւր և երիս։ Եւ փակեալ ըզդրունս տաՀարացն, ետ բերել զգլուխն ՄիՀրանայ, կախեալ ընդ երդն, ցուցանէր նոցա ասելով. Ա.յս այն գլուխն է, որ խորՀէր զՄարապետն Հիմն 'ի վեր առնել, և զկրօնաւորսն Հրով այրել։ Եւ Հրամայեաց վառել զերկոսին տաՀարսն, և ասէ ցնոսա. Դուք ինձ ՀնաՀակարք էք, որք զտաՀարսն այլ յայրել էք 'ի տալ. բայց Թէ կամի ՀԱծ և սուրբ Կարապետն, ես զայս փայտս յապաշաւել եմ Թողեալ. սակայն ընդ ձեր և ընդ ձեր Թագաւորին կառափն Հանեմ. զի ես աշխատեալ եմ 'ի շինելն, և դուք մերկք էք և ցրտացեալք. բայց վասն իմ մեղացն ԹողուԹէ և իմ Հարցն՝ ջեռարուք, ասէ, և մի՛ ամաչէք. և տունքդ այդոքիկ՝ գերեզմանք ձեզ եղիցի ընորՀիւ Պարսից արքային։

Եւ բորբոքեալ բոցն ՀարպոՀն, մինչ զի քաղաքն արբեալ լինէր 'ի Հոտ ՀենՀերաց նոցա։ Եւ ինքն ժողովեալ զկապուտնոցա և զգանձս, և ետ տանել յամուրն Ղկան. և զիշխանն Մուշեղ ետ ածել 'ի քաղաքն. և ինքն առեալ երեք Հազար այր, գնաց ընդառաջ Ա աշրայ։ Եւ երԹեալ 'ի վերայ լերինն, ընդ երիս դեՀն դարան գործեաց, և զդպիրն և զնուիրակն առաքեաց առ Ա աշիր անդ։ Եւ նոքա երԹեալ կուչեցին զնա, զի իջեալ էր յեզը Օրիայ[1] ծովուն։ Այլ նուիրակն և դպիրն ինչ ոչ գիտէին յիրացն, զի Ա ահան ոչ ետ մՀտիլ 'ի զօրսն, այլ առանձին յեւոյ դային։ Եւ յորժամ զտաՀարն այրեաց, զնոսա 'ի պատՀառս իրացն յայլ վայրս առաքեաց, զի մի գի-

1 Ցերիս օրինակս չէր ծովուն։

տասցէն զիրան. նա և զՀանդերձս իշխանացն տեսեալ, կարծէին եթէ միհրանեանքն էն։ Եւ իբրև գնացին, և զԱհանայ ասացեալսն պատմեցին, որպէս թէ յերեսաց Միհրանայ, և առեալ զաշրայ հազար և հարեւր այր, եկն 'ի վերայ լերինն։ Եւ իբրև մօտեցան 'ի տեղին, զաշիր արս հարեւր 'ի բացեայ եթող վասն այլ թշնամեացն, և ինքն եկն ետմուտ առ զԱհան 'ի վրանն, կարծելով թէ Միհրան է։ Իբրև ետես զնա զԱհան, և ասէ. Զաշիր, զի՞նչ եդիք 'ի մտի. 'ի պարսիկ հաւատ կամիք դարձուցանել զերկիրս Հայոց։ Եւ հրամայեաց դռնապանացն՝ արգելուլ զզօրսն 'ի հեռուստ, և զզաշիր գանեաց սաստիկ, մինչև էառ բանից նշան զզօրսն կոչելոյ։ Եւ նա 'ի հարկէ ցաւոցն ետ բանից նիշ 'ի զօրապետն և առ իշխանսն՝ գալ 'ի տեղին փութով. և ետ գրել թուղթ պարսիկ դպրին, և կաշառեաց՝ զի այնպէս գրեսցէ, որ գայցեն զօրքն 'ի վաղիւն. Օ՛ի Յոյնք էն 'ի գալ 'ի վերայ մեր, ասէ։ Եւ տուեալ զմատանին զաշրայ, և թուղթ յայն զօրն՝ որ հեռի կային, և դարձուցեալ կոչնակսն զօրացն այլոց, և զիշխանսն մի մի կոչել տայր, և զգլուխսն կտրէր։ Եւ ոչ իմացան այլ զօրքն, մինչև մի ոմն յիշխանացն փախեաւ և անկաւ 'ի բանակն իւր։

Եւ իբրև գիտաց զԱհան՝ թէ յայտնի եղև իրքն, ազդ արարեալ այնոցիկ՝ որք 'ի դարանսն կային, և յարուցեալ նոցա 'ի յետին կողմանէ՝ փախստական արարեալ զնոսա 'ի բերդն կոյս Լոռի ձորոյ. և որ բուն յետինքն էին 'ի դարանի անդ, չյարեան իսկ։ Եւ արք բերդին ընդդէմ ելեալ, քարամբք և գլօք յանխնայ կոտորեցին զնոսա. և փախստականք եղեն արք հարեւր յԱպահունիսն։ Օ՛որ տեսեալ դարանակալացն՝ յարեան 'ի վերայ, և կալան զնոսա. և ապա 'ի վաղիւն սկսան մեւս զօրքն Պարսից գալ 'ի վերայ բլերն 'ի նոյն տեղին։ Իսկ զԱհանայ ընդ առաջ գնացեալ նոցա, իջոյց զնոսա, և ասէ. Զողէք զերիվարսդ, զի արածեսցին մինչև ցերեկոյ. և յերեկոյին իջանեմք 'ի դաշտն 'ի վերայ Յունացն։ Եւ նոքա հաւանեալ, արարին այնպէս։ Եւ դարանակալքն յանկարծակի դիմեալք, կտրեցին զերիվարս

նոցա 'ի զօրացն, և փախստական արարեալ անցուցին ընդ Բրածանի, և հանին 'ի Արաբք։ Իսկ զօրացն Պարսից տեսեալ, աղաղակեցին միաբան և ասեն. Վա՜յ մեզ, կորեաք։ Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այն Նորիկ Կորի։

Իսկ Վահանայ առեալ զզօրսն, իջուցանէ զնոսա 'ի ձորն բուն. յարեան դարանակալքն աստի և անտի, և առեալ զնոսա 'ի մէջ՝ կոտորեցին, ոչ ողորմելով ուրուք։ Եւ հրամայեաց արս քառասուն թողուլ զրուցատարս Պարսից արքային։ Եւ ետ տանել ըզգլուխն Մ'ԻՀրանայ առ թագաւորն Պարսից, ասելով. Բ.յս մարզպանս Հայոց յորժամ եկն յերկիրս մեր, և զօրս հակառակեալ ընդ իրեարս՝ գունդ խրնդրեցին, և ոչ կարացին գտանել. և Յոյնք մեր [1] թշնամիք էին, 'ի նոսա ոչ իշխեցաք գնալ. և ձեզ ընդ ակամբ էաք, և ձեր զօրացն գունդ ոչ կայր. ապա կտրեցաք զգլուխդ զայդ, և խաղացաք։ Բ.յլ լուաք եթէ 'ի Շ ահաստանէ եղեալ էք 'ի Խոստր [2] քաղաք՝ յերկիր տափարակ և դաշտաձև, և գիտեմ որ գնդի խաղայք. առէք զգլուխ քեռորդւոյդ ձերոյ, և եղիցի դա ձեր գունդ ազգաց յազգս։ Եւ իբրև գնացին արքն քառասուն, և տարան զգլուխն Մ'ԻՀրանայ առ արքայն Խոսրով, և նա խռովեցաւ պղտորեցաւ, ամաչեաց զամօթն յաւիտենից։ Եւ 'ի միւսում ամի խրոխտացեալ, այլ զօրս առաքեաց։

'Ի նոյն ամի՝ որ Կարապետն, որ յիննակնեան տեղիսն էր, փլաւ. զի շարժ խստագոյն եղև, վասն որոյ և տունք՝ որք 'ի նեղքոյ նորա՝ 'ի շարժէ անտի փլան։ Իսկ եկեղեցին, քանզի հիմն 'ի վերայ նորա էր, շարժեցաւ և պատառեցաւ. զոր Մ'ուշեղ Տարօնոյ իշխանն, տուեալ գանձս բազումս, և հրամայեաց քարակոփս շինել։ Բայց ոչ ժամանեցին շինել որպէս արժանն էր. զի զօրքն Պարսից նեղէին զնոսա։ 'Ի սոյն ամի շինեաց Մ'ուշեղ զՓոր Կարապետն, և ինքն վախճանեցաւ. և կայ 'ի Թաղմանն առ Բ.ըծրունեաց իշխանին, 'ի կողմն արևելից Ճակատուն։

Եւ յետ վախճանելոյն Մ'ուշեղայ՝ նստաւ յաթոռ

1 Յերկուս օրինակս Յէր։ 2 Յերկուս օրինակս Բ.ասոր։

իշխանութեան նորա Ս. ահան, իշխանն մամիկոնէից տան։ Օ՛որ և բազում քահանայիւք և քսան եպիսկոպոսաք տօն ցնծութեան կատարեցին փրկական տեղեացն, ուր զհաւատն ունէին, և 'ի դուռն սրբոյ Կարապետին, և 'ի վանս Գ՛ուլակայ եպիսկոպոսին։ Եւ ութեւտասն գեղջ ազատեաց և ետ եկեղեցւոյն, ընծեաց զանուանս նոցա յարքունի դիւանէն։

'Ի նոյն ամին վախճանեցաւ Երանելին Լ՛ոդիկ, հայր վանացն Գ՛ուլակայ. և կայ Թաղեալ 'ի նոյն տեղւոջն, զոր Հայրբլուր կոչեն. որ է ընդ աջմէ եկեղեցւոյն 'ի հիւսիսոյ ընդ արևելս[1]։ Եւ նստաւ յաթոռ նորա մանկիկն Ստեփաննոս, որդի իշխանին Ա՛ղծրունեաց, որոյ մայրն հերձաւ. և կան 'ի Թաղմանն ծնօղք նորա 'ի նոյն վանսն։ Եւ բազում ուղղութիւս գործեաց 'ի դաւառն Տարօնոյ, զի վերագոյն ունէին զնա քան զեպիսկոպոսն. զի հայր էր վանացն, և ընդ ձեռամբ իւրով ունէր երեքհարեւր ինն սունեւութ կրօնաւորս. զի այնչափ առաքինի էր, որ ամենեքեան իբրև զՅովաննէս Կարապետն համարէին զնա։

Սա խնդրեաց 'ի Տէր Կարապետէն, կապել զբերանս գազանացն՝ որք բեկանէին զլուսաբերն եկեղեցւոյն։ Եւ բազում պարկեշտ վարուք իւրովք յանդիմանէր զիշխանն Հարքայ, որ ունէր զկին եղբօր իւրոյ. և ածեալ 'ի հաւան՝ կորել 'ի կնոջէն, և արարեալ կրօնաւոր, ետ նմա շինել զեկեղեցին՝ որ 'ի Լ՛ոլին աւանի յԵ՛կեղեաց գաւառի։

1 Ցերիս օրինակս ընդ Ա-էրէ-ոյ Բա-ր Իբրեւ -ին 'ի Գէլ։

ԳԼՈՒԽ Գ.

Վասն գալոյն Վախտանգայ 'ի Ցարօն Երեսուն հազարաւ, որ և շինեաց զՊորպ քաղաք և զամուրն զԴահար, և կացեալ 'ի Գրդուռ ամս երկք։

ԳԱՐՁԵԱԼ զօրաժողով եղև Խոսրով արքայ 'ի վերայ Յունաց երկրորդ անգամ, 'ի մոի կալեալ ըզմահն Հիրանայ քեռորդւոյն իւրոյ. և առաքեաց զՎախտանգ՝ զնորին հօրեղբայրն, Երեսուն հազար ընտիր առն և ձիոյ։ Իսկ նորա եկեալ 'ի գաւառն Պապհունեաց, արձակէր հարկապահանջս 'ի Հարք և 'ի Հաշտեանք և 'ի Ցարօն։ Որ որ գրեն գաւառապետքն. Թէ Վահան տայ, և մեք. ապա թէ ոչ, ունայն գնայք 'ի մէնջ։ Այսոսիկ լուեալ Վաղտանգայ, խրոխտացաւ և ըմբոստացաւ. և թողեալ կողմնապետ յՊապհունիս, և փքացեալ ալեօք եկն 'ի գլուխ Ցարօնոյ։ Յորս շինէ զաւերեալն Զինկերտ քաղաք մեծ. և փոխէ զանուն քաղաքին ըստ անուան կնոջն իւրոյ՝ զոր էած ընդ իւր՝ Պորպէս, այս ինքն համեղ։ Ցնկեաց այգիս և բուրաստանս. և փոխէ զատրուշանն 'ի դուռնն Կաթուղիկէին, զոր հիմնարկեալ էր սրբոյն Սահակայ։ Յոր 'ի վերայ լերինն Ցաւրոսի շինեաց ամրոց, և կոչեաց զանուն նորա Դարհար. քանզի անդ ոմանք գահավէժ եղեն 'ի վերայ անասնոց, կարծելով թէ հեծեալք են։ Փոխէ զՈռոռոզ լեռնաբլուրն, յանուն որդւոյն իւրոյ Ռոէգուռոյ՝ Ռոգուռ[1], զբօսանալով յամարան աւուրսն 'ի վերայ նորա։ Յոր յղեաց պարգևս բազումս Վահանայ, և թուղթս՝ զայս ինչ.

Քաջ և հզօր բազկիդ Վահանայ սկայի, դիցն օգնականութիւնք ողջոյն։

Որ թէպէտ և ընդ մահ եղբօրորդւոյն մերոյ տրտմեցաք, բայց ընդ հզօր քո իմաստութիւնդ զարմացաք։ Արդ ես եկեալ եմ վասն սիրոյ և խաղաղութեան, և

1 Յերկուս օրինակս Գրգռոռ, յայլսում Գգռոռ։

գու արի եկ առ իս, և երդուիր տալ զհարկ արքունի և կալ հնազանդ, և յառաջին պատիւն ձեր ՚ի ՚ի՚նալ, և այլ ոչ մտանել ՚ի նենգութիւն։ Ողջ լեր ՚ի դիցն աջոյ։

Եւ նա յղեաց նմա պատասխանի այսպէս.

Ես ատ և թոյլ անձինդ Ես ախտանգայ, և խոզ քոյոց դասուց՝ որք զաղբա Ճաշակէն, ողջոյն։

Բ.յլ թէպէտ ընդ մահն Ես՝ ի հրանայ ինդացի, բայց ընդ անմտութիւնդ քո լացի. որ զմահն նորա լսեցեր, և զիմ կորովութիւնս ծանեար՝ զոր ինձ ետ ՚ած, զի՞ արդ իշխեցեր գալ ՚ի վերայ եկեղեցւոյն ՚այ։ Բ.յլ թէ սէր եկիր առնել, զկինդ ՚ի հետ ընդէր ածեր. մի թէ որդի՞ խնդրես յերանաց մերոց. և եթէ սիրոյ պատՃառանօք եկիր, զիմ քաղաքդ էր շինեցեր և ամրոցս։ Բ.յլ գիտեմ զի սուտ ես, և իբրև զշուն քծնիս[1]։ Բ.ըդ զկեանս քո առաջի մահու դիր, և յերկրէս արի եկ և գնա խաղաղութիւն. ապա թէ ոչ, զմահն՝ որ ընդ քեզ անցանելոց է՝ զայն ՚ամ երկիր տեսանէ։

Եւ նորա բարկացեալ առաքեաց վեց հազար այր ՚ի վերայ նորա ՚ի Ես՝ուշ։ Իսկ ոմանք ազգ արարին նմա, և ասեն՝ թէ գայ Ես՝ահան ՚ի վերայ քո վեց հազարաւ։ Եւ նորա գիշերագնաց եղեալ, գնաց ՚ի վերայ նոցա՝ որք իջևանեալք էին ՚ի Ն՝ծմանկն[2], և յանկարծակի էհար զնոսա սրով, և ոչ ժամանեցին ըմբռնել զերիվարսն։ Բ.անզի որդի նորա Ես՝մբատ ընդ մէջ անցեալ, կտրեաց չորեք հազար երիվարս. և անցուցանէր յայն կոյս Բ.ըածանոյ, և հանեալ ՚ի կողմն Ճաշտենիից։ Եւ երկերիւր ձի յառաջին յաղթութեանն աւարաւ մասն ետուն եկեղեցւոյն ՚ի Պ՝ալակայ վանսն, զի այն էր տուն նոցա հայրենական. և անդ կնքեցին զնա։ Իսկ Ես՝ահանայ տուեալ զնոսա մօրացն՝ զբաղումն կուտորեաց, և զբաղումն խոցոտեաց, և երկերիւր այր ՚ի մօր անդր ընկղմեաց։

Իշխանն Ճաշտենիից ունէր ընդ ձեռամբ իւրով երեք հազար վեցհարեւր այր, և իշխանն Պ՝ալունեաց երկու հազար և երկերիւր, և իշխանն Բ.ըջուց երեք

1 Յերիս օրինակս ՚ի՚ի։ Յերկուս օրինակս գիշերագնաց էր, որ ՚ի՚ի՚ն էին. յայլում հանէ նոցա ՚ի Ն՝ծմանէ, որ ՚ի՚ի՚ն էին, գնաց ասա ասի՝ որ Ն՝ծմայ յոգն էր։

հազար, և իշխանն Հնդուստայ[1] հինգ հազար, և իշխանն Ամահան ութ հազար, և Ամբատ որդի նորա վեցհազար. ընդ ամենայն քսանևութ հազար։ Այս ամ զոքք կային ընդ ձեռամբ Ամահնայ. բայց բաժանեալ էր, և կողմնապահս թողեալ ամ տեղեացն. և կային առ ինքն յաւուր յայնմիկ երեք հազար այր։ Եւ բազում նախձիրս գործեաց անդ իշխանն Հաշտենից. զի աճապարեալ կտրեաց զգլուխն Մահանայ, և զզօրսն փախստական դարձոյց։ Եւ նեղեալ զնոսա, մինչև յաղաչանս անկեալ՝ և հարկս խոստանային տալ նոցա։ Իսկ Ամահան ասէ. Ցուք 'ի մեզ զգլուխն Մահանայ, և թողումք զձեզ։ Եւ զօրքն 'ի բազում տարակուսանս լեալ՝ խնդրէին, և ոչ գտանէին։ Այս կալեալ զորդի նորա զԱհ, ետուն ցԱահան։ Իսկ իշխանն Հաշտենից յառաջ մատուցեալ, ասէ. Կամ տուք զՄահան 'ի մեզ, կամ տուք երեսուն հազար դահեկան։ Եւ նոքա ետուն երեսուն հազար դահեկան, և դարձան։ Իբրև ետես Ամահան եթէ գնան ամբողջ, զնախանձն այ նախանձեալ՝ յարձակեցաւ 'ի վերայ նոցա, և սկսաւ կոտորել զնոսա։ Իսկ նոցա զաղաղակ բարձեալ, ասեն. Ո՞ւ ինչ դարձայք 'ի պատերազմ, ո՛վ աւելախօսք։ Եւ կոչեցաւ տեղին այն Ո՞ւինչս։ Եւ տարեալ ածեալ զնոսա 'ի դաշտին, կոտորած սաստիկ գործեցին. և որք փախեանն՝ էին պակաս քան զհինգհարեւր այր. որք երթեալ պատմեցին Ամախանգայ։ Իսկ նորա բարկացեալ, հրամայեաց գլխատել զնոսա՝ որք դարձանն. և ոչ մնաց 'ի վեցհազարէն և ոչ մի։

Իսկ Ամախանգայ 'ի ցասումն բարկութեան շարժեալ վասն Մահանայ, առաքեաց դարձեալ զՄուր 'ի վերայ ութ հազարաց։ Որք եկեալ բանակեցան յեզերս Մեղտայ, և արձակեցին առ Ամահան այսպէս. Այ չարաբարոյ դայլ Ամահան. մինչ գիտես եթէ ծառայելոց ես Մրեաց արքային, ընդէր այդպէս յանդգնեալ անամոթիս։ Մրդ արի եկ առ մեզ, և լեր հարկատու. ապա թէ ոչ, մեռանիս որպէս ըզշուն։ Եւ նորա լուեալ զայն, առեալ վեցհազար այր՝

[1] Յերիս օրինակս Ոնդուֆինաց։

գնաց 'ի վերայ նոցա ինքն և որդին իւր Սմբատ։ Իբ
րև կացին հանդէպ իրերաց, սկսաւ Աստուր թշնամա-
նել զՍահան, և գայլ կոչէր նմա։ Այս նա ասէ.
Յիրաւի է անունդ ինձ. քանզի գամ կոտորեմ, եր-
թամ և այլ գամ։ Այս սկսան մարտնչել ընդ միմեանս։

Իբրև խմբեցաւ պատերազմն, ակն կալաւ Սմբատ
որդին Սահանայ 'ի վերայ Աստուրայ, և պատահե-
ցաւ նմա։ Իսկ Աստուր տեսեալ՝ երթէ պատանի է,
քամահեաց զնա, և ասէ. Արարապաշտ հարճորդի,
'ի բաց կաց, զի 'ի պատերազմող արան ելանեմ ան-
ցանեմ։ Այս նա ասէ. Որդի սատանայի, յիրաւի է
անուն քո Աստուր. զի սուր քո չէ ինչ, և 'ի մարտն-
չել ընդ մանկանն՝ [1] ծանիցես զպարտութիւն քո։ Այս
ածեալ զսուրն՝ կտրեաց զգլուխ երիվարի նորա, և
զնա յերկիր ընկէց. և յարձակեալ՝ էառ զգլուխն 'ի
նմանէ. և 'ի վեր վերացուցեալ, ասէ. Փառք քեզ
Աստ և տէր Արարատ, որ յաղթեցեր հակառակոր-
դիս։ Այս մինչ դեռ նա զայն ասէր, տասն այր պա-
տեցին զՍահան. որպէս որք զանտառսն հատանեն,
այնպէս յանխնայ կոփէին և նոքա։ Այս սկսաւ պա-
կասիլ Սահան. և ձայն բարձեալ, ասէր. Ո՞ւր ես
Սմբատ որդեակ, հասիր յօգն ծերոյս։ Զի էր ա-
մաց ութսուն և ութից։ Իսկ նորա քաջաբար 'ի վե-
րայ յարձակեալ որպէս զարծիւ սրաթռիչ, ասէր.
Զգնեա մեզ տէր Արարատ։ Այս անդէն եհատ ըզ-
գլուխ որդւոյն Աստուրայ, և ընդ մէջ ձեղքեալ՝ հան-
դերձ թիկամբն աջոյ 'ի բաց ընկենոյր։ Այս զօրացեալ
Սահանայ, զվեց երիվարին գլուխսն կտրեաց. և մատ-
նեաց տեր 'ի ձեռս նոցա զզօրսն Պարսից, և փախչ-
տական արարին զնոսա մինչև ցերեկոյն։ Այս 'ի յութ
հազարէն երեքհազար միայն գնացին առ Սահականգ։
Այս նորա լուռ եղեալ մինչև ցմիւս ամն. և 'ի նոյն ա-
մին վախճանեցաւ Սահան քաջն վրէժինդիր 'ի վե-
րայ եկեղեցւոյ, և եհատանել զինքն 'ի ՊՀակայ վանան.
և կայ 'ի Թաղման 'ի դուռն սրբոյ Արարատին, ա-
ռաջի սեմոյն։

Իսկ 'ի միւսում ամի զօրս կազմեալ գումարեաց

1 Ցերիս օրինակս ընդ Խորէնի։

Ա ախտանգ քան հազար, և առաքեաց առ Ամբատ, եթէ կամ եկ՝ որ պատերազմիմք, և կամ հնազանդեաց և տուր հարկս։ Իսկ նորա ժողովեալ տասն հազար այր, գնաց 'ի վերայ նորա Յինդակ. և թողեալ զՀինդ հազարն 'Ի բլեբն, որ կոչեն Ա՝ահու աղարակ, և ինքն գնաց հինգ հազարաւ ընդդէմ նորա՝ 'ի գրգռել զնա։ Եւ առաքեաց Ա ախտանգ տասն հազար այր 'ի վերայ նորա, կարծելով թէ ինքն միայն է։ Եկին զօրքն, և 'ի գիշերի պատեցին զնա. և նա կամէր 'ի գիշերի ելանել ընդդէմ, բայց արդելուին զնա քահանայք դրան նորա։ Իսկ նա ասէ. Ա՝ստահ եմ յաղ, թէ որովհետև ծառայեալ եմք սրբոյ Կարապետին միամտութեամբ, թէ ոչ թողու զմեզ 'ի ձեռանէ։ Եւ ել ջահիւք 'ի վերայ զօրացն Պարսից. և յանկարծակի տեսին այր մի գիսաւոր, որ լոյս փայլէր 'ի հերաց նորա, և զաչս թշնամեացն կուրացուցանէր։ Զոր տեսեալ քաջին Ամբատայ, ասէ ցզօրսն. Վաղալերացարուք, որդեակք, և մի՛ երկնչիք. զի՞ զի Կարապետն մեզ 'ի թիկունս հասեալ կայ, և ընդ մեր՝ ինքն պատերազմի։ Եւ մի՛ ոք անհաւատալի զիրսն կարծիցէ. զի ինքեանք սկսան մարտնչիլ ընդ միմեանս, և զմիմեանս սատակել. զի՞ որպատերազմէր ընդ նոսա։ Եւ այնչափ կոտորեցին զնոսա, մինչև հեղեղատք արեանց ելանէին. որ և Ալիլ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ։

Եւ իբրև վճարեցին 'ի կոտորելոյ զայնչափ բազմութին, երկերիւր այր համարով թողեալ զրուցաբարս այլոցն վասն առն՝ զոր տեսին 'ի գիշերին, զի և թշնամիքն ևս տեսին, և ինքն յուղարկեաց զերիվարսն նոցա 'ի Ա՝ուշն աւան՝ առ որդին իւր, որ կոչէր ըստ պապ անուանն՝ Ա ահան կամսարական, զի զՀետևակս քաղաքին հեծեալս արասցէ, և յուղարկեսցէ փութով։ Եւ նորա կազմեալ հեծեալս երկու հազար և հինգ հարեւր, հանէ առ Ամբատ իշխանն։ Իսկ նորա խոյս տուեալ աւուրս ութ, և պատրաստեաց զզօրս իւր. և յետ ութ աւուրն եկն եհաս Ա ախտանգն 'ի դաշտ անդր, և առ վաղիւն պատրաստեցան 'ի պատերազմ։ Իսկ Ամբատ կտրեաց 'ի գիշերին երկու հազար այր հեծելոց, և անցոյց 'ի

տեղի Թագուհեան զպարսկէն յետուստ կողմանէ, և 'ի բլերն յայս կողմանէ երիք հազար։ Եւ յերկու կողմանէն ռազմ գաղտ կարգեաց. և ինքն զուԹ հազար արսն բաժանեաց 'ի վեց ռազմն։ Եւ ընդ առաւօտն կազմեցան. զի մի զգաղտ դարանն գիտասցեն, փուԹապէս 'ի դիմի հարեալ՝ շարժեաց զնոսա 'ի վերայ իւր։

Իբրև Ճակատեցան 'ի պատերազմն ընդ իրեարս, զառաջինն յաղԹահարեցին զՍմբատ։ Իսկ նորա 'ի բլուրն ելեալ, ասէր. Ո՞ւր էք քաջք, յառաջ մատիք։ Եւ յետ կողմանց 'ի վերայ յարձակեցան, և 'ի մէջ առին զզօրսն Պարսից. և խմբեցաւ պատերազմն ընդ իրարս, մինչ զի ոչ գոյր հնար Ճանաչել զմիմեանս, բայց միայն 'ի ձայն փողոցն և 'ի տեսս դրօշայն։ Իբրև 'ի դիմի հարան Ս. ախտանգ և Սմբատ, ասէ Ս. ախտանգ. Կաց հարձորդի. Թէպէտ և զբազումն ջնջեցեր, սակայն այսօր չպրծնուս 'ի ձեռաց քաջ արանցս, որ գէշ գէշ պատառեն զձեզ սուսերք մեր։ Եւ Սմբատ ընդ մէջ անցեալ, էհատ և կտրեաց զառնապանս բարձից նորա, և կարեվէր խոցոտեաց, և մերձ տարաւ յընկէնուլ զՍ. ախտանգ։ Եւ նորա ձգեալ՝ զտէգն, էհար զկուրծս նորա. և ցցեալ, 'ի նեղքս ոչ կարաց անցուցանել։ Եւ Սմբատայ ձայնս արձակեալ, ասէր. Սուրբ Կարապետ, յայտնեա և այսօր զքեզ ծառայից քոց. զի վասն քո մեռանիմք 'ի վերայ հաւատացելոցս Ս[illegible]։ Եւ բախեալ տիգաւ 'ի Թիկունս նորա, և անց ընդ զրահն 'ի նեղքս, և էհան ընդ սիրտ նորա։ Եւ հանեալ ըզսուրն՝ կտրեաց զգլուխ նորա, և ոչ կարաց ունել. զի զբազում մարդկաւն վազեաց գլուխն Ս. ախտանգայ։

Իսկ մի ումն 'ի ծառայիցն նորա էառ զգլուխն նորա, և փախեաւ. և հասեալ Սմբատայ՝ էհար մերձոփն 'ի վերայ գագաԹանն, և գոգեաց զսաղաւարան, և գլխոյն ոսկին փոսեալ՝ տեղի տայր սաղաւարան մերձինն Սմբատայ, և հազիւ կարաց հանել։ Եւ նորա հանեալ ընկէց զգլուխն, և ինքն մեռաւ։ Եւ մեւս այլ ծառայի առեալ զգլուխն փախեաւ. և Սմբատ

1 Յերկուս օրինակս Ս[illegible] Նա [illegible]։

զՀետ մտեալ, ասէ. Պարսիկք, մի անմոռանայք. զի մինչև յայս անկաւ Ա՛խստանդ, որ սրտացաւ ծառայքդ զգլուխդ առեալ փախչիք. ապա դիտասջիք թէ ձեզ այդպէս պարտ է լինել։ Եւ ձգեալ ծառային զգլուխն 'ի կուրծսն Ամբատայ, և ասէ. Տար խորհվեա և կեր զդա. վա՛յ ձեզ, որ այլ վաղ ոչ սպանէք։ Եւ Ամբատայ առեալ զգլուխն, և զՀետ մտեալ ծառային, ասէ. Ո՞յ տիրատեաց պարսիկ, զգլուխդ քո ընդէ՞ր ոչ փոխանակեցեր տեառն քո։ Ո՞րդ որովհետև տիրատեաց էք, ես բառնամ զգլուխ քո 'ի քէն։ Եւ եՀար զնա տիգաւն 'ի սիրտն, և անցոյց զտէգն յայնկոյս. և ընկեցեալ յերիվարէն, կտրեաց զգլուխ նորա. և դարձաւ մեծաւ յաղթութիւնբ 'ի բլուրն։ Եւ զօրքն շուրջ պատեալ 'ի վայրին զպարսիկսն սպանին. և ոչ մնացին 'ի նոցանէ, բայց այնոքիկ՝ որք առ ուղտուցն բանակքն էին արք չորեքՀարեւր. զորս ոչ Հրամայեաց սպանանել, զի փախստականք էին. բայց էառ 'ի նոցանէ Հազար և քառասուն ուղտ, և ութՀազար ընդ ձի և ընդ ջորի։

Եւ իբրև վՀարեցաւ պատերազմն, Հրամայեաց ծածկել զնոսա 'ի ձորս և 'ի Հեղեղատս. և կոչեցաւ բլուրն այն Ա՛ահու բլուր։ Եւ Ամբատ առեալ զզօրսն, գնաց 'ի վերայ քաղաքին Պորպայ 'ի գիշերի։ Եւ մտեալ զօրացն 'ի տունսն, զորս և գտին պարսիկս լեզուաւ՝ սատակէին. և զքիթսն կտրեալ 'ի շարի արկանէին, և բերէին առ Ամբատ։ Եւ Համարեալ զքիթսն, գտանէին սպանեալ պարսիկք՝ ընդ այր և ընդ կին և ընդ մանկտի՝ չորեք Հազար։

Իսկ զորդին Ա՛խստանդայ և զկինն առեալ տարան յԱ՛ՀՅծից բերդն, զոր յառաջ Ա՛ՀՅծուիս կոչէին, 'ի պահել զնոսա անդ։ Եւ յղեալ առ Պարսից թագաւորն Խոսրով, և ասէ. Տուր ինձ երկոտասան տարեայ Հարկ, որ զօրքդ քո զիմ երկրիս զխոտն և զՀացն կերան, և զփայտսն այրեցին, և զՀրոյ՝ զոր արբին զգինն, և զտաՀարացն զգինս՝ զոր իմ Հայրն այրեաց վասն քո Դայլ Ա՛ահան. և դարձեալ զսասանի[1] գինսն վաթսուն Հազար դահեկան, որ զքո զօրացն

[1] Ցերկուս օրինակս զսասին։

զդիշահոտ հալաւն և զարիւնաթաթախ հանդերձն լուանալ տուաք և ազաք։ Այլ թէ ոչ, դամ հարեւր մարդով 'ի վերայ քո, և զնամ պարսիկս գերեալ՝ 'ի Տարօն ածեմ, և 'ի քո աստուածքդ շուն խառանեմ, որ փոխանակ դոցա հաջէն 'ի ձեզ։ Արդ փութով, զոր ինչ ասացի քեզ, արձակեա. ապա թէ ոչ, տեսանես թէ զի՞նչ անցք անցանէն ընդ ձեզ։ Իսկ նորա լուեալ, ծաղր առնէր զԱմբատ. և ոչ գրեաց պատասխանի թղթոյն Ամբատայ։

Այլ եղբայրն Ա ախտանգայ Աուրէն, առեալ հարեւր հազար դահեկան, և ինն հազար այր, եկն 'ի Տարօն՝ գնել զկինն և զորդին Ա ախտանգայ։ Այլ ընդ առաջ գնացեալ Ամբատայ, ընկալաւ զԱուրէն եղբայր նորա սիրով, և էած 'ի Ա՝ուշ։ Այլ կացեալ աւուրս տասն, խնդիր արար Աուրէն եղբօրորդւոյ իւրոյ՝ թէ ո՞ւր է։ Իսկ նոքա ցուցին զբերդն՝ թէ անդ է. և նա ասէ. Ընդ այծարա՞ծ է թէ դիւարաձ։ Այլ ծիծաղեալ Ամբատայ ընդ աղի բանսն Աուրենայ, առաքեաց և էտ բերել զկինն և զորդին առաջի իւր։ Այլ իբրև ածին, ասէ Աուրէն. Իշխան հզօր 'ի վերայ աշխարհիս Հայոց, տա՞ս զսոսա Պարսից արքային տուրս։ Իշխանն ասէ. Պարսից արքային և մեռեալ շուն մի ոչ տամ, որ Ձաշ ուտէ՝ առանց գնոյ, թող թէ զդոսա։ Այլ դու գնել թէ կամիս, քաջ տամ. ապա թէ ոչ, գնացէք դուք երեքեանդ յԱրծրունիս այծ արածեցէք, և բերդին ծառայութիւն արարէք, և զիմ հացս կերայք աներախտիս։

Իսկ Աուրէն քանզի իմաստուն այր էր, ասէ. Ո՛վ բարեպաշտ և հզօր իշխան, թէ և զշուն դարապապիդ քո արածել տայիր, դեռ պարծանս է մեզ՝ որ 'ի դրան քում կայաք, թող թէ այծ արածել։ Այլ թէ լսէք մեզ, առէք 'ի մէնջ հարեւր հազար դահեկան, և երկու հազար ուղտ, և վեց պարսիկ ձի. և մեզ տուրս տուք զայս կինս և զմանուկս։ Իշխանն ասէ. Օ՜ այդ՝ որ բերեալ ես, այդ մեր է. զի զքո գլուխդ կտրեմ, և զոր ունիս՝ յիս առնում։ Այլ թէ դոքա քեզ պիտոյ են, դու քրիստոնեայ լեր և կնքեաց, և զիս առ և 'ի պարսիկս գնա, և դոքա քեզ. ապա թէ ոչ, ձեզ այլ հնար իմացէք։ Իսկ

Սուրէն բերեալ էտ զՀարեւր հազար դահեկանն և զուղտն և զձիսն առաջի, և ասէ ցիշխանն. Բադիկ է տուրբդ։ Իսկ նա ասէ. Հաւանիմ տրոցդ, բայց հարեւր և ութսուն հազար փայտ են տարեալ 'ի Վարքէոյ, և չորեքհարեւր հազար դահեկանի խոտ են կերեալ 'ի դաշտէդ, և վաթսուն հազար դահեկանի՝ որ զեղն և զեղջերու և զնապաստակ երկրիս որսացեալ են և կերեալ. զՋրոյ և զՀացի գինն թողում։ Բայց զանոյշ գինին Յորոց՝ և Սանոյ և զՍոխրայ այս երկու տարի է՝ որ յինէն կորեալ էին, և ինքեանք արբին, զայն թող տան. և զվեց գաւառին հարկն՝ զոր առեալ են, և զքաղաքին մուտն՝ զոր կերեալ են չորեքհարեւր դահեկան, զայդ ամ թող բերեն. և դու քրիստոնեայ լեր, և զիս 'ի պարսիկս տար, և դոքա քեզ։

Տրամեցաւ Սուրէն, և ոչ կարաց խօսել զերիս աւուրս։ Եւ ապա արձակեաց իշխանն առնա, և ասէ. Մի՛ տրտմիր, զի ըստ քո կամացդ առնեմ զամ ինչ. բայց արի անցանեմք յայնկոյս, և յուխտս երթամք 'ի վանս իմ, զոր շինեաց հայրն իմ։ Եւ առեալ զՍուրէն անցին յայնկոյս Բրաճանոյ, և զկինն և զորդին 'ի հետ տարան։ Բայց զի նենգել կամէր պարսկին, զկին և զորդին և զՍահան կամնարական յայնկոյս թողեալ, զի որ 'ի նա անկցի՝ նա սպանցէ։ Եւ ինքն թողեալ զզօրս իւր 'ի Մեղտի չորեք հազար այր, և զՊարսիցն յանդաստան վանացն՝ զոր Բրտից գեւղն կոչեն, և առեալ չորեքհարեւր այր ընտիր զիւրեաւ, և չորեքհարեւր զնորայն, և գնացին երկոքեանն 'ի վանսն։ Եւ իբրև եկին առ Թադուցեալ խաչն, իջին յերիվարացն, և գնային հետեւակ 'ի վանսն. քանզի չէր հնար ումեք երիվարաւ ընդ այն տեղւոյն 'ի վեր անցանել։ Զոյնպէս և յարևելից կուսէ ճորոյն 'ի ստորոտ զառ 'ի վերին մինչև յեկեղեցին չիշխէր ոք գալ. զի թէ Տրդատ և նոքն Գրիգոր ոչ իշխէին գալ անդ երիվարաւ, ապա ո՞վ այլ ոք։

Բրդ իբրև մերձեցան 'ի վայրս վանացն, ընդ առաջ եկին պաշտօնեայքն, և արգելուին զնա վանն

1 Յերկուս օրինակս ՀԽՈՍՈՒՆՅ ԳԻՆԻՆ։

Սուրենայ։ Իսկ Սմբատ բարկացեալ ասէր. Որով-
հետև պարսիկք այնպիսի պիղծք էք, որ և մայրեացն
արժանի չէք, դուք և կենաց արժանի ընդէր էք։ Եւ
յարձակեալ 'ի վերայ նոցա Ա՝ արաղայ իշխանին Պա-
լունեաց, եհար սրով և կտրեաց զգլուխն Սուրենայ։
Եւ զերկու իշխանսն Պարսից կախեալ զծառոյն խեղ-
դեցին, և ինքեանք դարձան յերիվարսն. քանզի զօրք
իշխանին Պալունեաց թագուցեալ էին 'ի բլուրն 'ի
փոքր ամրոցին 'ի Ա՝ԵԾամօրին, արք երեքհարեւր,
'ի նեղքոյ Ա՝նդակայ. և հեծեալ նոցա յերիվարսն,
մինչև իջուցին 'ի Ա՝ԵԾամօր։ Եւ որք 'ի դարանին
էին, ընդդէմ եկին. և 'ի մէջ առեալ զայն չորեք
հարեւր արսն կոտորեցին, և ինքեանք իջեալ յայլ
զօրսն գնացին։ Ա՝ՐԴ այնք, որք յամրոցին Ա՝ՐՏԻՑ
գեղջն էին, 'ի գիշերին 'ի դուրս ելեալ՝ իջին 'ի վե-
րայ Պարսից. և կտրեալ զերիվարս նոցա աւելի քան
զերկու հազար և հինգ հարեւր, և հանին 'ի Սրոց[1]
ձոր։ Իսկ զօրացն Պարսից զհետ մտեալ գողոցն, և
հասեալ յայն տեղի՝ որ կոչի Գողոց աղբեւր, և դար-
ձան 'ի վերայ նոցա ձիատարքն[2], և հարին պարսաքա-
ղաք և աղեղամքք հինգհարեւր և քսան այր. և զե-
րիվարսն առին և խառնեցին յայլսն, և եղեն երեք
հազար ձի։

Իսկ ոմանք հետևակեալք ձորամուտք եղեն 'ի
Պարսից զօրացն. և գնացին յանտառն, և անկան 'ի
վերայ ձիագողոցն, և սկսան կոտորել։ Իսկ որ ա-
ւագն էր 'ի ձիագողսն, որոյ Սրեմն[3] կոչէին, դար-
ձաւ ընդդէմ. և սուր հանեալ՝ ինքն միայն պատե-
ղազմեցաւ, մինչև դարձան ընկերքն նորա։ Եւ իբրև
նոքա դարձան՝ Սրեմ մեռաւ, զի հարին նետիւ 'ի
սիրտ նորա. և թաղեցաւ 'ի նոյն ձորն, և կոչեցաւ
անուն ձորոյն այնորիկ Սրեմաձոր[4]։ Եւ ընկերքն քա-
ջիւ և նետիւ ընդդէմ դարձան, և սպանին զբազում.
և այլքն փախստական եղեալ՝ եկին ժողովեցան 'ի մի
վայր, և իջեալ Ճաշէին։

1 Ցերկուս օրինակս Դ Սրենոյ-
յոր։

2 Ցերկուս օրինակս Յիոգոզ։

3 Ցերկուս օրինակս Սերեմ. որ-
պէս և 'ի առորև։

4 Ցերկուս օրինակս Սերեմայոր։

Իսկ ոմանք յՍղկանայ եղեալ գնացին որսոյ պատ-
ճառանօք երկերեւր և յիսուն այր։ Իբրև տեսին՝ զի
յանհոգս էին ի ջրեալ պարսիկքն, գողաբար յարձա-
կեցան 'ի վերայ, և ոչ ոք կարաց յերիվարն եւանել.
այլ 'ի շուրջ եկեալ, և 'ի սեղան անդր սպանին հինգ
հարեւր և ութ այր. և վասն որ անդ ժողովեալ սպա-
նին, կոչեցաւ անուն տեղւոյն Ժողովս։

Եւ մինչ այս այսպէս գործեցաւ, Ամբատ և իշ-
խանն Պալունեաց Թագեան 'ի ձոր ուրեք։ Եւ ա-
ռաքեցին զոմն 'ի Մեղտի, թէ փութացէք գալ 'ի
վերա դոցա. և ինքեանք առաքեցին արս հարեւր,
գրգռել զզօրսն Պարսից։ Որ տեսեալ զօրացն,
գրոհ տուեալ զհետ՝ մի մի հասանէին։ Իբրև եկին
զօրքն առ Ամբատ, ասեն. Ցուք զձեզ 'ի բլուրն, զի
տեղին աջող է պատերազմի. և անձնապահ լիք, մինչ-
չև մեր զօրն հասանէ։ Եւ նոցա 'ի բլուրն եղեալ, և
զօրացն Պարսից բազմացեալ 'ի վերայ Ամբատայ և
Ի արազայ, և նոցա կրկնեալ ծունր՝ այ, յօգնութի՛ն
կոչելով զՔրիստոս Կարապետն. Ցիշեա, ասեն, զերախ-
տիս մեր. և որպէս 'ի հեռուստ օգնեցեր, 'ի մօտոյս
մի վերջանար 'ի մէնջ։ Եւ եհաս 'ի թիկունս օգնա-
կանութի՛ն՝ այ։

Եւ փողոց տուեալ 'ի վերայ բլերն, Ամբատայ յաջ
թեւն, և Ի արազայ յահեակն, և սկսան արեամբ
թաթաւել ինքեանք և երիվարք իւրեանց։ Եւ մա-
ծաւ սուրն 'ի ձեռին Ամբատայ, և ոչ կարաց հանել.
քանզի մաճեաւ արիւնն ընդ սուրն և ընդ ձեռնա-
տեղին, և կոտորեցաւ։ Եւ իբրև տեսին պարսիկքն՝
եթէ ոչ կնդրաց առնուլ այլ սուր, ձայն տուեալ՝ ա-
սէին ցմիմեանս. Փութասջիք, զի մաճեալ է ձեռն
քաջին, և կապեաց զնա՝ ածն իւր, և սուրն 'ի ձեռին
կոտորեալ է։ Եւ պատեցին զնա բազումք. և իբրև
զփայտ չոր, որ 'ի Ճեղքին Ճարճատէ, այնպէս Ճար-
Ճատէին 'ի վերայ գլխոյն Ամբատայ զէնք։ Իսկ նա
բարձր ձայնիւ ասէր. Ա՛յ քաջութեդ ձերոյ, զի ոչ
կարացիք հերձուլ զգլուխս իմ։ Ո՛ այս ասաց, զի յիշե-
լիք լիցի բանն։ Դայց իբրև գիտաց՝ եթէ կարի սաստ-
կացան 'ի վերայ նորա, ձայն բարձեալ՝ ասէ. Ո՞ւր ես
բաղուկ քաջ, և մուրճ հզօր ընդդէմ թշնամեաց,

դաւազան իմոյ ծերութեանս, իշխան Պալունեաց. յառաջ մատիր որպէս քաջ արծուի, զի անդեղք և բուէնք պատեցին զիս։ Եւ նորա թողեալ զահեակ թևն յորդին իւր Վահան, որ զՎահանովիտն շինեաց, և ինքն քաջաբար որպէս զարծուի՝ կանչեալ դիմեաց 'ի վերայ։ Որ և 'ի դողման հարեալ ամ երիվարացն, և հասեալ 'ի Թիկունս Սմբատայ, և բախեալ զտէգն 'ի վերայ պարսկին Թիկանն, և անդէն եհան ընդ ողն երիվարին. և այլ ոչ ժամանեաց հանել զտէգն։ Օ որ ծաղը արարեալ, ասէր. Երթ չափեա զտէգդ՝ թէ քանի կանգուն է. մի ոք սուտ ասէ՝ թէ երեք գիրկ է, և խաբէ զքեզ։ Եւ անդէն մեռաւ։

Իսկ Սմբատայ ելեալ յեզը պատերազմին, և ձախ ձեռամբ պրկեաց պարսիկ մի, և ետ զենուլ 'ի վերայ ձեռինն և սրոյն, զի իջցէ ջերմ արիւնն և թուլացուցցէ զբռնատեղն։ Եւ փոխեալ այլ սուր, և ելեալ յերիվարն. և իբրև հեծաւ, ետես զի հազար այր պատեցին զնա կրկին, և 'ի մէջ առեալ զՀինդհարեւրն։ Եւ իբրև դիտացին՝ եթէ կացեալ են երիվարքն, էհար պարսիկ մի և ընկէց, և զերիվարն առեալ մատոյց Սարազայ իշխանին, և ասէ. Եկ և հեծիր իշխան Պալունեաց։ Իսկ նորա փոխեալ զոտնն, նստաւ 'ի վերայ նորա. զոր տեսեալ զօրացն՝ զարմացան. և այսպէս արարեալ՝ 'ի մէջ ահաւոր պատերազմին փոխեցին զերիվարս իւրեանց։ Օ յ որչափ և զօրքն բազմանային, նոքա յանհոգս լինէին 'ի մէջ նոցա. զի այնչափ կուտեցան 'ի վերայ, որ և տեղի չպատանէին՝ որ յեզը ելանէին։

Եւ իբրև սկսան ոմանք երկմտել 'ի զօրացն Սմբատայ, ըստ տեսչութեան այ տեսին զմեւս Սմբատ՝ զի գայր, որ էր իշխան Հաշտենից. և ածէր զՎահան կամարական զորդին Սմբատայ, և վեցհազար այր ընդ նմա։ Օ որ տեսեալ Սարազ իշխանին, աղաղակեաց և ասէ. Վաջորդի Վահան, ո՞ւր էիր՝ որ ոչ վաղ եկիր յօգնութիւն։ Իսկ Վահան ձայն բարձեալ, ասէր հանդերձ արտասուօք. Այ այն տառապեալ հայրն իմ ծերունի, եթէ փոխեցաւ առ տէր 'ի հանգիստ։ Իսկ Սմբատայ լուեալ, ասէր. Ուրբ

Կարապետն ինձ 'ի Թիկունս հասեալ էր, և ես 'ի ձեռաց անօրինաց մեռանէի։ Իսկ նորա գոհացեալ զայ, և 'ի դիմի հարեալ՝ կորեցին փողոց, անցին 'ի նեբբս. և պարզեցին զմի թևն նա, և զմիւսն իշխանն Հաշտենից Ամբատ. և յինքեանս առեալ զպատերազմն, սկսան կոտորել զպատերազմագլուխսն։ Այլ 'ի վերայ շրջեալ, զմեւս թևն Ա՝ահանայ բոլորեալ, 'ի մէջ առեալ զզօրսն Պարսից, կոտորեցին մինչև յերեկոյն։

Այլ իբրև 'ի մուտս եղև արևն, մնացին 'ի Պարսից չորեքարեւր այր, որք ընդ միջոցն ելեալ փախեան. և քանզի մնացեալք էին երիվարք նոցա, երթեալ մտին 'ի ձոր մի, և թագեան ենջեցին խոյս առեալ[1] մինչև 'ի մեւս աւուր հասարակն։ Օ՝որ եկեալ զօրացն գտին, և ջուր ցանեալ 'ի վերայ նոցա՝ զարթուցին, և առեալ տարան զնոսա 'ի Ա՝եղտի. և կոչեցաւ տեղին այն Ամբրաձոր։ Իսկ Ամբատ հրամայեաց ըզդիակունսն կուտել 'ի վերայ իրերաց 'ի բլուրն. և վասն Ա՝արազայ կոտորածին՝ կոչեցաւ տեղին այն Ա՝արազաբլուր[2]։ Այլ ինքեանք եկեալ իջաւանեցան 'ի վանաց գեւղն, զոր կոչեն Կենաց վայրք. և իբրև մտին 'ի գեւղն, ընդ առաջ եղեն նոցա պարաւորքն, և երգս առեալ բազում ինչ իրաց՝ գովեին։ Որ և յետոյ 'ի հոտել դիականցն և յորդնել, շեր հանեալ՝ ասէին.

Կերան գազանք զմարմինս դիականցն Ա՝արազայ, և գիրացան։ Կուշ կերեալ, ուռաւ որպէս զարջ. և աղուէս հպարտ եղև քան զառեւծ։ Պայլ, քանզի շատակեր էր, պայթեաց. և արջ, քանզի զոր ուտէն՝ չմնայ առ ինքն, 'ի սովոյ մեռաւ։ Ա՝նգեղջ, քանզի ագահք էին, նստան և այլ ոչ կարացին վերանալ. մկունք, քանզի շատ կրեցին 'ի ծակսն, ոտքն մաշեցան։

Օ՝այս ՝ամ՝ ասացին, և 'ի գէպ էր վասն իրացն. որ՝և՝ կոչեցաւ անուն գեղջն Շ՝իրականիք։

Իսկ զարան՝ որ 'ի Ա՝եղտի տարան՝ բժշկեալ 'ի ցաւոց վիրացն, և ետ նոցա գանձս և երիվարս և զէնս.

1 Յերկուս օրինակս խոյոգէալ։
2 'Ի միւմ ևեթ օրինակի Վարազաբլուր։

և յղեաց զնոսա 'ի պարսիկս։ Եւ ինքեանք ելեալք 'ի տերունական տունն, ընծայս բազումս մատուցին ՅՍ 'ի 'որ Կարապետն, և ցնծութիւն դարձան 'ի տունս իւրեանց։

Եւ 'ի սոյն աւուրս վախճանեցաւ Երանելին Ստեփաննոս, և կայ առ այլ հարսն 'ի Հայրաբլուրն։ Եւ առեալ Ս. ահանայ զեպիսկոպոսունսն մամիկոնենից և զՊալունեաց և զՀաշտենից, և եկն 'ի վանսն Գլակայ. և ձեռնադրեցին հայր վանացն զՅոպիփան, որ 'ի Գունայ գաշտէն էր եկեալ յանապատ, և բնակեալ 'ի վայրսն եկեղեցւոյն։ Սա եկաց քսանեւրորդ երկրորդ[1] զկնի Ստեփաննոսի. և կացեալ 'ի վանականունէն ամս քսան, և գնաց 'ի Ժողովն՝ զոր արար Հերակլ յինն և 'ի տասն ամի թագաւորութեան իւրոյ[2], և նզովեցին զՇամ հերետիկոսունս. և եպիսկոպոսն Հաշտենից հալածական լիներ յերկիրն Յունաց[3]։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ ՊԱՏՃԵՆԻՆ

Վասն գալոյն Տիգրանայ, և կոտորածին՝ որ 'ի Հոնընկէցն։

Գարձեալ այլ զոր առաքեաց Խոսրով 'ի վերայ ապստամբ տանն մամիկոնենից, զՏիգրան զորապետն մեծ՝ քսան հազարաւ։ Իբրև եկին Յ'պահունիս, կռուեցաւ զՍմբատ առ ինքն. իսկ նա յղեաց զորդին իւր զՍ. ահան կամնարական, տեսանել թէ զինչ խնդրէ։ Իբրև գնաց իմացաւ զկրսն, արձակեաց պատասխանի առ հայրն և ասէ. Սա բազում անգամ բարիս խոստանայ, և բազում անգամ չարիս. բայց խնդրէ զնշխարս Ս'ուշեղայ իշխանին և զքո հօրն Ս. ահանայ, և զկինն Ս. ախթանգայ և զորդին՝ զոր սպանին 'ի պա

1 Յերիս օրինակս գոռՆէրորդ։
2 Յերկուս օրինակս չինն ամն իբրեաց օրինակք և ազաւաղեալ։
3 Յայսմ վայրի անմիաբան են իրեարաց օրինակք և ազաւաղեալ։

տերազմին Ա արազայ [1]։ Չգա թէ ոչ, գամ 'ի տեղին, ասէ, ուր հաւատք ձեր են. զայն բրեմ և աւերեմ, և կրակատուն առնեմ զեկեղեցիս ձեր, և ըզձեզ 'ի գուռն արքունի խաղացուցանեմ։ Ընդ զայս ասաց, և ինքն ընդ Հաշտեանս կամի գալ 'ի վերայ. այլ ես գնամ զՀեռ նորա. և դու Ժողովեա զզօրս մեր, և գնա 'ի սուրբ Կարապետն, աղաչեա զկրօնաւորսն՝ աղօթս առնել։ Ողջ լեր 'ի տէր։

Իսկ Ամբատայ լուեալ զայս, առեալ զթուղթն՝ գնաց առաջի սրբոյ Կարապետին. տարածեաց ըզձեռսն առաջի սրբոյ սեղանոյն, սկսաւ լալ և ասել. Օ՜ աղթիր տէր, և զաղթս զզօրութիս քո. տես տէր, մի լռեր տէր, և մի դադարեր. քանզի կարի խրոխտացաւ թշնամին 'ի վերայ մեր, այլ կամք քո եղիցին. բայց սակայն աղաչեմք, յիշեա զՋանն մեր՝ որ 'ի վերայ քո վասն ուխտին սրբութեան մերոյ, որով փառաւորեսցի անուն քո տէր։ Այս զայս ասացեալ, ետ բերել երկոտասան թուր, և դնել առաջի բեմին մինչև պատարագ մատուցանելին. և ապա առեալ ասէ. Տեր, հաւատամք 'ի քեզ, թէ և այս սուրբս եղիցին խմոր այլ սուսերաց, և հրամնաւ քով յաղթեսցուք նոցա։ Ա՛վ տէր, նեղեցաք ձանձրացաք 'ի կոտորելոյ մեզամ զանօրէնսն. նեղեցան և որք զսուսերս մեր 'ի Ժանկոյ և յարբանցն սրբեցին. այլ յուսամք՝ թէ որպէս արարերդ, և առնես։

Այս ելեալ գնաց Ժողովել զզօրսն, ինն հազար ինն հարիւր և քառասուն այր. և երթեալ էջ 'ի Հաշտեանս, 'ի գեւղն՝ որ Գիրեհն [2] կոչին, 'ի ջրատատ վայրսն։ Այս Տիգրան եկեալ 'ի Հոմրնկեցն իջանէր. և առաքեաց առ Ամբատ, և ասէ. Ելի եկ առ իս, և մի երկնչիր, և առ յինէն գանձս և մեծութիս, և եղիս պատակ 'ի գլուխ քո, և արարիս զքեզ մարզպան Հայոց, միայն լոկ զսակերսն Մուշեղայ և զԱ ահանայ տուր ցիս։ Իսկ նորա կալեալ զպատգամաւորսն, հրաւիրեալ շամիրաւ մի երկաթի, և եդ պատակ շուրջ զՃակատսն, և ասէ. Կաց տեսանեմ՝ թէ վասն քո զինչ պարգևս գայցէ ինձ, որ ես քեզ պատակ եդի։ Այս

1 Ցերիս օրինակս Վարազայ։ 2 Ցերիս օրինակս Կրեհն։

հրամայեաց ունել զամ արան՝ որ ընդ նմայն էին ե-
կեալ, և կարեաց զգլուխս նոցա մինչև ցվեց ժամ ա-
ւուրն. և կոչեցաւ տեղին այն Ոռոց գերեզման,
որ է Ոռկկունս[1].

Իսկ Ամբատայ ելեալ 'ի վերայ լերինն, որ Արե-
մավայրս[2] ասեն. բանակեցաւ Հանդէպ Տիգրանայ։
Եւ իբրև երեկոյ եղև, Ս ահան կամնարական որ-
դին Ամբատայ յարուցեալ կարեաց զգլուխ որդւոյն
Տիգրանայ և զերիս իշխանացն, զի էին 'ի միում խո-
բանի. և առեալ զգլուխս նոցա, եկն առ հայրն իւր,
և դարձեալ եկն 'ի նոյն տեղին. և գնացեալ գաղ-
տուկ[3] եմուտ ընդ ստորոտս խորանին առ Տիգրան։
Իսկ նորա տեսեալ զսուսերն մերկ 'ի ձեռին նորա,
ոչ իշխեաց ումեք ձայն տալ. կարծեաց թէ զկարա-
սին կամի զողանալ։ Իսկ Ս ահանայ յանկարծակի
առեալ բարձ մի, աՀասարեաց և նգեաց 'ի վերայ
բերանոյ նորա, և հարաւ 'ի վերայ նորա. և մնեալ
մեւս այլ ծառային Ս ահանայ կարեաց զգլուխ նո-
րա, և ժողովեալ զկարասին և զպատուական ակունսն
և զընտիր սուսերսն, եկ գնաց։ Եւ խնդացեալ զո-
բացն Հայոց, մեծ գոհութիւն ոչ մատուցանէին. և
ապաշաւեցին, զի զգերեզմանս իշխանացն աւերեցին։

Իսկ Ս ահանայ լցեալ խմաստութիւն, առեալ եր-
կերեւր կաշեայ ասպար, և արկ զՀարեւր Ջորեաք ա-
մեհեաք, երկաթ մի յայս կոյս ասպարին, և երկաթ
մի յայն. և գնաց մերձ 'ի բանակն Հունին՝ որ փո-
խանակ էր Տիգրանայ, և ունէր ընդ ձեռամբ իւրով
ուրեմն հազար այր, և բանակեալ էր մերձ 'ի քարա-
գլուխն՝ որ հայի Հանդէպ Տարօնոյ լերինն[4]. և էր
առ զատակաց յայլոց բանակացն. արդ առեալ Ս ա-
հանայ զՀարեւր ամեհի Ջորին, և տարաւ զնոսա
յերգ բանակին. և 'ի տան Ջորին այր մի՝ որ զՀետ
երթայր։ Եւ իբրև խթեցին զՋորին արով և արկին
'ի բանակն, և ինքեանք զՀետ մնեալ՝ զփող պատե-
բազմին հնչեցուցին, և առ ձեռն սկսան կոտորել. և

1 Ցերիս օրինակս Մոգոռան։
2 Ցերիս օրինակս Սերեմավայրէ։
3 Ցօրինակի միում գաղտուրէ. յայլում գաղտանէ. և 'ի միւս այլ գաղտուրէ։
4 Ցերիս օրինակս որ հանդէպ հայեր Ծերին Տարոնի։

կանչեալ զարհուրեցան ժպրհեցան , և աղմկեցան յոյժ ։ Եանզի և ջորիքն ընդ ձայն ասպարացն , և ընդ զօրացն աղմկել , և ընդ փողոցն բախելն խրտուցեալ , յամ կողմանց լոկ արշաւէին 'ի բանակն ։ Եւ զօրքն կարծէին եթէ հեծեալ է , և ձայն սուսերացն 'ի կոտորելոցն է , իւրաքանչիւր ոք լոկ վայ ձչէին , ոչ գիտելով զհետս անձանց . քանզի ՝ որ պատերազմէր ընդ նոսա ։

Եւ ընդ քանզի այլ զօրքն ոչ կարէին անցանել , զի էր մութն , և մեր զօրքն լոկ սատակելով նեղէին , և զքարագլուխն բնաւ չկարացին յիշել , զի յիմարեցոյց զնոսա ՝ որ , ապա թողեալ զկարասին՝ դէմ փախստի 'ի քարագլուխն արարին . և սկսան 'ի վայր հոսել ահաւոր վիմացն ընդ բարձրուէ ։ Եւ ոչ ոք կարաց գիտել զիրսն , մինչև պակասեցաւ ձիչ աղաղակին , և ապա գիտացին զօրքն Հայոց՝ թէ ընկղմեցան պարսիկքն . դարձան ինքեանք 'ի բանակետղ , և զկարասին և զգանձն ժողովեցին և զերիվարսն և զուղտսն , և արձակեցին 'ի գաւառն Պալունեաց ։ Եւ ընդ ձի և ընդ ջորի և ընդ ուղտ և ընդ էշ՝ գտաւ ութ և տասն հազար , որ ծածկէր զերեսս գաւառին ։ Եւ ընդ իրրև առաւօտ եղև , սկսան խնդիր առնել Տիգրանայ և որդւոյ նորա . և ոչ գտին ։ Եպա զհետ փախստականին մտեալ խնդրէին , և հայեցեալ տեսին զնոսա գահավիժեալս ։ Եպա միաբանեալ արարին իւրեանց իշխան զԱՀրիհոսրով . և բարկութիւն լցեալ , ռազմ կարգեցին ։

Եսկ Ամբատ զԱՀան կողմնապահ էր թողեալ 'ի գիշերին չծրեքհազարաւ . և երկու հազար 'ի դարանի կացուցեալ ընդ երկուս գէհս ։ Եւ ինքն զայլ զօրսն ռազմ կարգեաց , և ետ զաջ թեւն Ամարազայ իշխանին Պալունեաց . զի այնչափ հզօր էր , որ մարդոյն քան զմինն այլ ոչ կրկնէր ։ Եւ զահեակ թեւն տայր իշխանին Հաշտենից , և ինքն թողու իւր թիկնապահ զԱրազայ ՝ որդին զԱհան ։

Եւ գումարեցան ընդդէմ միմեանց , և եկին առ միմեանս Ահրիհոսրով և Ամբատ , և սկսան հարկանել

՝ Յերիս օրինակս Ամարազայ որդին ։

զգլուխս իրերաց։ Եւ դիմեաց զօրն Պարսից 'ի վերայ Ամբատայ իբրև զմեղու, և սկսաւ պակասել Ամբատայ, քանզի այր ծերացեալ էր. ձայն բարձեալ, ասէր. Ո՞ւր ես Ա ահան որդեակ, հասիր։ Եւ նորա ձայն արկեալ 'ի ներ Կարապետն, ասէր. Ա՛հա ժամ, ո՛վ Ա՛կրտիչ Ա՛ռի Կարապետ Յովհաննէս. ո՞ւր են իմ սուրբ կրօնաւորացն աղօթքն։ Եւ մտեալ յոռազին, ցրուեաց զժողովեալսն 'ի վերայ հօրն իւրոյ. և Ամբատայ ոգի առեալ, ածեալ զսուրն և Եհար զուսն, և Թիկնախառն 'ի վայր ընկէց զգլուխս աւագի նոցա. և սուր 'ի վերայ եդեալ փախստական արարին, մինչև 'ի դարանսն։ Իսկ դարանակալքն յարուցեալ, 'ի մէջ առին զնոսա. և բազմաց կորուստ եղև այն օրն, և չորեք հազար գլուխ համարով ընկեցին ընդ քարն, որ կոչեցաւ Հոնընկէց։ Եւ ժամանեաց նոցա երեկոյ, և զօրքն Պարսից փախստական եղեալ՝ իջին 'ի Հաշտեանս ութ հազար այր. և անդ հանդէս արարեալ զօրացն, և կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Հանդիսեանք. և խաբանօք կամէին գնալ Յ՚Ասպահունիս։

Իսկ Ամբատայ իմացեալ եթէ գնացին, յարուցեալ մտին զհետ նոցա, և 'ի վաղուն հասին։ Եւ իբրև բանակեցան առ իրերօք, խորհեցան սոքա գնալ 'ի վերայ Պարսիցն, և կազմեցան առ երիկունն։ Եւ դեռ սոքա յայս էին, եկին հասին զօրք Յ՚Ասպահունեաց իբր երեք հազար. և տեսին զօրքն Հայոց՝ զի խառնեցան 'ի պարսիկս զօրքն Ա՚սպահունեաց, լքան և յերկիր կործանեցան. և հնարս իմացեալ, ընդ Ա՚արկուց [1] փողն 'ի վայր գնացին յեզր Ա՚ռածանոյ, և անդ բանակեցան։ Իսկ պարսիկքն յարուցեալ ընդհետ մտին նոցա, և տուեալ գետոյն՝ նեղէին զնոսա։ Իսկ Ամբատայ զնա՛մ զյոյսն իւր յա՛ծ արարեալ, ասէ. Ո՛վ ներ, գիտեմ զմարդասիրութի՛ն քո առ մեզ զվաղընջուց. և այժմ տես զմեզ, զի աստի թշնամիքն, և անտի գետն. և արդ հայեաց 'ի մեզ, եթէ զի՛արդ թշնամիք նեղեն զմեզ։ Եւ կնքեալ զանձինս իւրեանց, դիմեցին 'ի վերայ Պարսիցն։ Եւ երևե-

[1] Ցերկուս օրինակս ընդ Ա՚-ուրեն է՚-ն։

ցաւ նոցա 'ի պատերազմին այր մի ահեղ և լուսաւոր, և հեր նորա լոյս փայլատակէր։ Օ՞ր տեսեալ Ա՛ա հանայ քաջի, և գիտացեալ՝ թէ Կարապետն է, խնդացեալ յարձակեցաւ 'ի վերայ նոցա. և կտրեալ զզօրսն երեքհազար, և եդեալ առաջի և տարաւ անցոյց ընդ Ա՛ստղօնս, և պատեալ ի՛ջոյց զնոսա մինչև հանդէպ եկեղեցւոյն, որք կամէին ելանել 'ի նոյն տեղին, և զկրօնաւորսն սպանանել։ Իսկ զօրուն թիւն ՝ն արգել զնոսա, և ոչ կարէին անցանել ընդ ձորն, յետս զգետնի դիպելով. զոր սովորեցան [1]Յետսանկ՝ կոչել տեղոյն։

Իսկ զօրքն եկեալ հասին յանտառն, որ հանդէպ վանացն հայի. և անդ թագեան։ Իսկ Ա՛ահանայ աՀապարեալ գնաց անդ, և սուր 'ի վերայ՝ եդեալ՝ կոտորէր զնոսա. և ոչ մնաց յիշատակ անգամ, և կո՛ չեցաւ տեղին այն՝ Ա՛ահու առիթ։ Եւ խիստ վաստակեցաւ Ամբատ յաւուրն յայնմիկ. բայց 'ի թիկունս եհաս նմա Ա՛արաղ իշխանն Պալունեաց, և առաջի եդեալ զզօրսն գետաւէժ առնէին, մինչև եկին 'ի տեղին՝ զոր այժմ Կուրայ [2] կոչեն։ Եւ որք 'ի փախուստն երթային, կացին երիվարքն նոցա. և Պալունեաց իշխանն բազում զօրօք զհետ մտեալ, կոտորէին։ Եւ իբրև անդ եկին, ասէ Ա՛արաղ ցպարսիկսն. Օ՛ի սպառեցաք, փախիք՝ որ մեք կոտորեմք։ Եւ նոքա ասեն. Կորեաք մեք և մեռաք։ Եւ կոչեցաւ անուն տեղւոյն Կուրայ. և 'ի նոյն տեղւոջն սկըսաւ մի մի ունել զնոսա, և զթլփատսն կտրեաց. և էին համարով հազար վեցհարեւր և ութսուն։ Իսկ այլք մտեալք 'ի գետն խեղդեցան արք երկու հազար։

Իսկ զոր Ամբատ կոտորեաց, գունդն այն անցեալ յայնկոյս ընդ Հովհանս 'ի վերայ փախստականացն ընդ լեառն, իսկ արք ամրոցին ելեալ զկնի՝ նետիւք և պարսաքարամբք և գլոք կոտորեցին արս երկու հազար և ութհարեւր։ Եւ որք ապրեցան՝ էին արք հազար և քառասուն. որք փախուցեալք գնացին 'ի պար-

1 'Ի միում օրինակի Յէրանգ. Անդրան։
յայլում Անդրան. և 'ի միւսում
2 Յերկուս օրինակս Պուրան։

սիկս առ Խոսրով։ Եւ նա այլ զօրս առաքեաց 'ի Տարօն։

'Ի սոյն ամի վախճանեցաւ Սմբատ, և ետ տանել զինքն 'ի տապանատուն հարցն իւրոց 'ի վանսն Գլակայ. և կայ 'ի դուռն սրբոյն Ստեփաննոսի, զոր շինեաց Ստեփաննոսն այն՝ որոյ մայրն հերձաւ, և եդ 'ի նշխարաց սրբոյն Ստեփաննոսի անյայտս զձախ բոյթ ոտին սրբոյ նախավկային։ Եւ 'ի նոյն ամի փոխմանն Սմբատայ՝ փոխեցաւ հայրն Նպիփան առ Ած յետ քսան ամի. և նստաւ յաթոռ նորա Գաւիթ ամս երիս, որ է քսանևերրորդ 'ի սրբոյն Գրիգորէ։ 'Ի սոյն աւուրս կնքեցաւ Վահանայ որդին Տիրան 'ի վանս Գլակայ 'ի 'ոբ Կարապետն, 'ի հայրապետուէն Գաւթի։

ՊԱՏՃԷՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վասն գալոյն Վարդուհրայ, և մեռանելոյն 'ի Փանգիկաւ։ յիսուն հազար արամբք յեզր Արածանոյ։

Եւ ԵՂԵՒ յետ ուրթուտասն ամին, դարձեալ գժտութիւն[2] եղև ընդ պարսիկս և ընդ Վահան. և առաքեաց Խոսրով զօրս 'ի վերայ Տարօնոյ, հինգ բեւր և վեցհարեւր։ Որք բազում սրտմտութեամբ եկեալ հասանէին 'ի Տարօն, և կամէին անցանել 'ի վանսն Գլակայ, զի հանցեն զոսկերս թշնամեացն. և եկեալ բանակեցաւ 'ի Մուշ։ Իսկ Վահան կոչեաց զորդին իւր զՏիրան քաջ, և ասէ. Որդեակ, մի՛ վասն զի 'ի մեծութեան ես՝ պատրիս 'ի մեղաց, և մի՛ վասն զի մանկիկ ես՝ խաբիր 'ի գեղ կանանց. այլ յի՛ շեա զքո հարսն, ո՛րքան սրբութի՛ւն և ամբծութի՛ւն ծառայեցին ա՛յ։ Մի՛ մոռանար զծառայութի՛ն սրբոյ Կա-

1 Յերկուս օրինակս Փոդիկաւ. 2 Յերկուս օրինակս դժբութիւն։ և 'ի միւս այլ Փոնդիկ։

բապետին, զի 'ի պատերազմունս նա էր՝ որ օգնէր մեզ. այլ եթէ շատակեաց կամիս լինել, 'ի պղծուէ մի պատրիր, որպէս և չես իսկ։ Եւ եթէ ես մեռանիմ 'ի պատերազմին, զիս 'ի մեր վանսն տուր տանել։ Եւ դու ծառայեա՛ այ և կրօնաւորաց նորա սրբութի՛ւն, որպէս և ես ծառայեցի. զի ոչ պատրեցայ 'ի գեղոյ, և ոչ զրկեցի, և ոչ նեղեցի զտառապեալս. քանզի զամենեսեան՝ որք ընդ իմով իշխանութի՛ւն էին, զարս և զկանայս և զմանկտիս, զհաւատացեալս 'ի Տէ՛ր, իբրև զեղբարս և զընտանիս տան իմոյ հոգայի խնամով որպէս հարքն իմ։ Արդեակ, զնոյն և դու արասցես, և ո՛ր զօրացուսցէ զքեզ։ Ա՛ռդ գնամք 'ի պատերազմ։

Եւ գնացին 'ի պատերազմ. և արձակեցին առ հայրն Գրիգոր, որ քանև հինգերորդն էր, և նստաւ յաթոռ հայրապետութեան ամս ութ. և տարան 'ի պատերազմ երեքհարեւր ութսուն և հինգ կրօնաւոր հնկղով։ Իբրև խմբեցաւ պատերազմն յեղերս Ա՛ռաջանոյ, առ անտառովն՝ որ կոչի Կաղամախեաց [1] բլուր, կրօնաւորքն սեւազգեստք էին մաղեղինօք և հնկղաւորք, և ընդ տասն առնն ժամահար մի, և ընդ երկուսն խաչադրօշ բարձրաբուն [2], և Ճակատեցան նոքա ընդդէմ իրերաց 'ի պատերազմ՝ յայնկոյս դետոյն որ 'ի դաշտին. զոր տեսեալ թշնամիքն զարմանային։ Եւ Վարդուհրի ոչ եմուտ 'ի պատերազմ. այլ տեսից, ասէ՝, թէ նոքա զի՞նչ գործեն։ Եւ իբրև խմբեցաւ պատերազմ ընդ իրարս, և կամէին փախչել վահանեանքն, յայնժամ նոցա ծունր կրկնեալ՝ միաբան աղաղակեցին առ ա՛ծ աղօթիւք և լի արտասուօք. Ո՛վ ա՛ր, հար զմեր պատերազմն. ո՛վ Կարապետ, զարթիր 'ի ձայն պաշտօնէիցս։ Եւ զայս ասացեալ միաբան՝ յոտն կացին, և զնշան խաչին դարձուցանէին 'ի վերայ թշնամեացն. և հարին զժամահարսն յանդուգն։

Եւ հայեցեալ Վահանայ 'ի դունդ կրօնաւորացն,

1 Յերկուս օրինակս Կոխմէաց. Նասորն ժամահար մի, նոյնպէս և յոտն խակ յերիսն Կաղամանէաց։ խալ մի նշանակաւ։

2 Յերիս օրինակս և 'ի գաւն էրբ.

Էտես յաջ Թեւս նոցա Երիտասարդ մի՝ ահագին տես-
լեամբ, և Թագ ծիրանի 'ի գլուխս նորա և խաչ. և
'ի հանդերձից նորա հուր փայլատակեալ։ Եւ այլ եր-
կուս երիտասարդական հասակաւ տեսանէր, որք ա-
ռաջի կային Թեւաւորք։ Օ՛ որ և Թշնամեացն տե-
սեալ՝ յիմարեցան, և 'ի գետ անդր լցան. և որք 'ի
գետոյն յայն կոյս անցին, Մեղտայ ուշ արարին։ Իսկ
Ա՛հան ձայն տուեալ յորդին իւր Ծիրան և յայլ
զօրսն, և ասէ. Ա՛հա՜ն արարածոց Տ՛ո՜ երևի 'ի
մէջ ծառայից իւրոց. զի նա է Թագաւոր նոցա և մեր
ամենեցուն, որ խոնարհեցաւ 'ի ձայն պաշտօնէից իւ-
րոց, և էջ 'ի փրկել զնոսա և զմեզ. արդ պնդեսցուք
զկնի Թշնամեացն։ Իսկ անօրինացն հասեալ 'ի Մ՛եղ-
տի, և գտին երկոտասան ծեր 'ի կրօնաւորացն, և
սպանին զնոսա. որք Թաղեալք կան 'ի դուռն եկե-
ղեցւոյն, զի այն իսկ էր խնդրուածք նոցա։

Իսկ Ա՛հան մտեալ 'ի գետն, կապեաց զերի-
վարն 'ի վերայ ողկոն հանդերձ զինաւն, և անց յայն
կոյս 'ի գեւղն՝ զոր Պարսից դէմն [1] կոչեն։ Եւ անդ
ժողովեցան ամ՛ զօրքն Ա՛ահանայ. և կրօնաւորքն 'ի
նոյն տեղւոջն աղօթէին մինչև էհաս առ նոսա հայրն,
որ ունէր զգլուխն Ա՛արդուհրայ աւագի նոցա։ Իսկ
Ա՛ահանայ վարեալ զզօրսն, և հասեալ 'ի դաշտն՝ որ
'ի վերայ Մ՛ատրավանիցն, և բոլորեալ ռազմ կանգ-
նեցին։ Եւ եկեալ առ միմեանս Ա՛արդուհրի, և Ծի-
րան՝ որդին Ա՛ահանայ, ասէ Ա՛արդուհրի. Կախար-
դասարք, դուք 'ի կախարդան էք պանծացեալ, և կա-
խարդութիւն կամիք յաղթել Պարսից քաջաց։ Ա՛սէ
Ծիրան. Եթէ կախարդք եմք, դու վայր մի անսա՝
զի ես զքո ձիոյ ագիդ քեզ տեսանել տամ։ Եւ աձա-
պարեալ 'ի բաց ձգեաց զաջոյ ոտնն սունապանօքն հան-
դերձ. և նորա հակեալ յայնկոյս անկաւ։ Ա՛սէ Ծի-
րան. Ա՛արդուհրի, մի մեղադրեր. գլուխդ հակեաց
և ընկէց՝ զքեզ. արդ ուղղեմ զքեզնդ։ Եւ ապա
բառնայ. և կտրեալ զգլուխն էտ ցծառայ մի, և ա-
սէ. Պահեա զդա, որ ինքանեմք 'ի Մ՛ատրավանս և

1 Ցերիս օրինակս Պարսից կոմ։

գնդի խաղալն առաջի որ Կարապետին. զի դա էր, որ նախասէր զպաշտօնեայս նորա։

Եւ 'ի մէջ առեալ զդօրն Պարսից, և սկսան փան դանել՝. զի իշխանն Պալունեաց կարեաց երկու իշխանս, և Էհան գնասա մինչև 'ի Հաշտեանս։ Եւ իբրև Էհաս 'ի տեղի մի դաշտաձև, պակեաւ իշխանն փախստական մինչ զեռ զօրն հեռի էին, և ոչ կարաց խուսել կամ կռուել, այլ այնպէս կայր։ Ոչ մի ոմն 'ի ծառայիցն. Օ՛ի պակեաւ, ով իշխան։ Եւ նա ասէ. Պաղակ իշխան տեսանեմ, և ոչ կարեմ գնալ։ Այլ ոչ կարացին գիտել, թէ զինչ էր բանն, և անդէն մեռաւ։ Իսկ նորա կարեալ զգլուխն, և առեալ զերկու իշխանորդիսն՝ զորս եկալ, և եհան պա հել. և ինքն գնաց զհետ փախստականացն։ Եւ հասեալ միւս իշխանին, ասէ Ա՛ռաջ. Ինկիր պարսիկ կամաւ, ապա թէ ոչ՝ անկանիս ակամայ։ Եւ նա փախեաւ. և Ա՛ռաջ զհետ մնեալ, Էհաս զտէգն 'ի թիկունս նորա, և անցոյց ընդ ոգն երիվարին, և ասէ. Դ՛ժմ անկանիս։ Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Ա՛ղերինանկիս։

Եւ տակաւ մի գնացեալ՝ Էհաս միւս այլ իշխանին, և ասէ. Ինկանիս կամաւ, իսկ եթէ ոչ՝ անկանիս ակամայ։ Իսկ նա ընդդէմ դարձաւ, և կարեաց զգլուխ երիվարին Ա՛ռաջայ, և ընկէց։ Իսկ նա 'ի վայր վազեալ, և Էհաս զջիլս երիվարին պարսկին, և ասէր. Ինկիր և դու։ Եւ անուանեցաւ տեղին այն Ա՛ռաջանկանիս։ Իսկ այնք՝ որք 'ի Պուղին էին մնացեալք, առեալ զերկու իշխանորդիսն, և զգլուխս այնր իշխանին՝ որ պակեաւն, բերին առ Ա՛ռաջ. և կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Պուղկ[2]։ Եւ դարձաւ Ա՛ռաջ առ Ամրատ որդին իւր, և իջին առ Ա՛հան. և նա կոտորեալ էր զբաղումն, և վատաս կեալ էր յոյժ։ Եւ փախուցեալք ընդ երեսս դաշտին փախստականք լինէին, և անուանեցաւ տեղին այն Փանդիկ[3]։

1 Յայլս՝ օրինակի ֆանդան դէն. իսկ յերիս օրինակս Ն պոբէ. ջին ղաբան Պուրիշ Ն ոլոան ցրուել 'ի գիգանդ։

2 Յերկուս օրինակս Պուղ. և 'ի միւս այլ Պուղ։

3 Յերիս օրինակս Փոյոդիկ։

Իսկ կրօնաւորացն գարձեալ գային 'ի Կաղամախեաց բլրէն, եկին ելին 'ի բլուր մի, որ Հայի ընդ գաշան Մատրամանից. անկան առ նոսա գունդ մի պարսիկ փախստական, և ազաչէին զկրօնաւորսն՝ ապրել։ Իսկ իբրև եկին այլ գունդք իշխանին Հաշտենից, ասեն. Ո՞ւր են պարսիկքն, որք գային զհետ փախստականին. և ոչ էտուն կրօնաւորքն զպարսիկսն 'ի ձեռս նոցա։ Այլ եկեալ իշխանին Հաշտենից, ասէ. Ո՞ի եղեն պարսիկքն։ Այլ նոքա ասեն. Ա՛սասիկ են ընդ Հայերոյդ։ Այլ կոչեցաւ անուն տեղոյն Հայկերտ։ Այլ ապա գադարեաց պատերազմն. և զփախուցեալսն գարձուցին 'ի Մեղտի, և գտան համբոով սրս չորեքհարեւր և ութսուն. և տուեալ նոցա գանձս և երիվարս՝ արձակեցին 'ի պարսիկս, լինել զրուցատարս պանչելեացն՝ որ հանդիպեցաւ 'ի կրօնաւորացն նոցա։

Ա Ձար եղև պատերազմն Տարօնոյ 'ի հինգ առաջինի իշխանացն, Մուշեղայ, Ա ահանայ, Ամբատայ, Ա ահանայ կամնարականի, և Տիրանայ։ Որոց յիշատակն օրհնութիւն եղիցի։

1 Ցերիս օրինակս հայերէն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վասն գիտելոյ զպատճառս Ծիծառնեայ խաչին, թէ յումմէ բերաւ, և կամ թէ ուրպէս կայ 'ի Ծիծառնէ, և կամ յոր ժամանակի գործեցաւ։

ԸՆԴ ԺԱՄԱՆԱԿՍ Թագաւորութեն Հերակլեայ զօրացաւ Խոսրով Պարսից արքայն. և գնաց մինչև Յերուսաղէմ. զքաղաքն աւերեաց, և զկտակարանսն այրեաց, և զսուրբ խաչն գերեաց, և առեալ գնաց 'ի պարսիկս, եդեալ 'ի պահեստի զոր խաչն հանդերձ սպասուքն մինչև յեւթն և 'ի տասն ամի Թագաւորութեանն իւրում։ Յետ զօրացաւ Հերակլ 'ի Թագաւորութեանն իւրում, գնաց 'ի պարսիկս, և եսպան զԽոսրով, և դարձոյց զոր խաչն՝ հանդերձ գերեօքն։ Յետ ընդ բազում օթևանօք զանց առնէր, տուեալ մասունս բազումս Հայոց աշխարհին և մեծամեծ իշխանացն։ Իբրև գնաց Յերեզնաւան, կտրեաց սպասաւորն մեծ մասն մի 'ի գիշերին, և կամէր փախչել։ Իսկ մի ոմն իմացեալ, ազգ արար Թագաւորին. և նորա առեալ զմասնն 'ի նմանէ, և կտրեաց զգլուխս նորա. և ելեալ զօրօքն գնաց 'ի Կեսարիա, և էտ զմասնն հայրապետին Կեսարու, որ կոչիւր Յովհան. և ինքն գնաց 'ի Թագաւորաքնակ քաղաքն Կոստանդինուպոլիս։ Յետ 'ի նոյն ամի գնաց Վահան կամսարական 'ի Կեսարիա, և էտ երեսուն և վեցհազար դահեկան հայրապետին Յովհաննու, և առեալ զխաչն եբեր 'ի վանս Պետակայ 'ի տոր Կարապետն, և եդ 'ի դարանն՝ որ 'ի վերայ սրբոյ սեղանոյն. և եկաց անդ ամն վեց։

Իսկ իշխանն Աղջուց կողմանն Գորգ Շատախոս, որ կոչեաց զանուն գաւառին իւրում Շատախ վասն աւելի անուան իւրում, սա եկն 'ի դաշտն Տարօնոյ առ այր մի՝ որոյ անուն էր Ծիծառնիկ. որ շինեաց փոքր աւան, և եդ անուն նմա Ծիծառն։ Ղաչեաց իշխանն զԾիծառնիկ՝ եթէ հնարեա և գողացիր զխաչն, զի եկեղեցպանն քո ազգական է։ Իսկ զգ-

խաչն և տուր ինձ, և առ յինէն վեցհազար դրամ։ Իսկ նա ասէ. Դրամն քեզ, զխաչն առնում, և գամ յերկիրն քո. և ընտրեմ ամուր տեղի, և շինեմ աւան. և զիմ անունս դնեմ։ Եւ յանձն կալեալ իշխանին, գնաց 'ի տուն իւր. իսկ Օրիծառնիկն զկինն և զորդիսն և զաղգատոհմն իւր յղեաց առ իշխանն Բ.ՐՋուց, և ինքն եկեալ ծանոյց զիրսն եկեղեցպանին։ Եւ նորա յանձին կալեալ՝ իջոյց 'ի պահարանէն, և գնացեալ զհետ նորա յերկիրն իշխանին՝ ընտրեաց տեղի, և շինեաց եկեղեցի. և անդ եդին ըստերունական նշանն, և անուանեաց զաւանն Օրիծառն։

Եւ ընդ այն ժամանակսն Ներսէս Հայոց կաթուղիկոս, որ 'ի Տայոց էր ծննդեամբ, այն՝ որ զԱղարշկերտոյ նր Բ.ծածինն շինեաց, եկն վասն սուրբ խաչին տեսութեան։ Իսկ Ա՝ահանայ առեալ զկաթուղիկոսն, եկն 'ի վանսն Գլակայ. և խնդրեաց զսուրբ խաչն։ Իսկ սպասաւորացն խնդիր արարեալ, ոչ գըտին։ Ապա առին իշխանքն և կաթուղիկոսն և եպիսկոպոսունքն, և եւթն օր Ա՝ահան ոչ եկեր և ոչ էարբ։ Եւ յայտնեալ նմա մինչ դեռ ննջէր 'ի դրունս եկեղեցւոյն յաւուր ուրբաթու, ետես ինքն իշխանն Ա՝ահան, զի այր ոմն լուսաւոր ընդ սեամն եկեղեցւոյն յայս կոյս եղեալ, ասէ ցնա. Ո՝իս կողոպտեցին, և զԲ.ՐՋՔ շինեցին. արդ թոյլ տուր, զի երկիրն այն ամուր է, ոչ կարեն անտի գողանալ։ Իսկ նորա լի եղեալ խնդութեամբ, զարթեաւ. և ընթացեալ՝ աւետիս տայր կաթողիկոսին, եթէ խաչն 'ի Բ.ՐՋՔն է։ Եւ խնդացեալ յոյժ՝ 'ի վաղիւն տօն ցնծութեամբ կատարեցին, և յարուցեալ գնացին 'ի տեղին. և կալեալ զկրօնաւորն՝ որ զխաչն էր գողացեալ՝ ետ ցկաթուղիկոսն, և հանեալ ետ զերկոսին աչս նորա՝ որ զի կողոպտեաց զոր Կարապետն։ Եւ կալեալ Ա՝ահանայ զՕրիծառնիկ, էհատ զգլուխ նորա։ Եւ զիշխանն Բ.ՐՋուց եդեալ յԱղկան մինչև էառ 'ի նմանէ հարեւր հազար դահեկան, և ապա շինեաց զեկեղեցին՝ որ 'ի վերայ բլերն Ա՝շու՝ յանուն որդւոյ իւրոյ կրտսերի Ստեփաննոս, որ կայ 'ի նոյն դուռն թաղեալ։ Իսկ զխաչն ետ Ա՝ահան 'ի ձեռն եպիսկոպո-

սին Աբջուց. և նա իսկ կացոյց քահանայս եւթն 'ի վերայ եկեղեցւոյն, զի յամ ամի մինն ունիցի. և վեց հազար դրամ կարգեցին նոցա տալ Հայոց 'ի Տաճնոյ։

Աբդ զայս պատմութիւս գրեալ եդին յեկեղեցին Ծիծառնեայ. և եղև այս 'ի Թուականութեն Հայոց հարեւր և երեսուն, և Հռոմին չորեքհարեւր քսան և եւթն. զոր ստուգիւ գրեալ զեղեալ պատմութեն, եդին 'ի Գլակայ վանսն 'ի Ծոր Կարապետն, հրամանաւ Կերսիսի Հայոց կաթուղիկոսի՝ որ քսանեւիններորդ էր 'ի սրբոյն Գրիգորէ, և յիշխանութեն Ալ աՀանայ մամիկոնեանոյ։ Կրեսուն և երկու իշխան նրատեալ է 'ի Մուշեղայ մամիկոնեան ցեղին. սա եկաց իշխան 'ի Տարօն ամս երեսուն, և մարզպան ամս տասն։

Վասն մահուան Տիրանայ՝ որդւոյ Վահանայ, և պատերազմին՝ որ յեղերս Աղի ծովուն։

Յետ այսքան պատմութիւն զրուցատրութեց, սուգ ժամանեաց խաղաղարնակ երկրիս մերում։ Զի Ալ աՀան յաւելեալ առ հարսն իւր, մեռանի. և կայ թաղեալ 'ի դուռն սրբոյ Կարապետին, կացեալ իշխան Տարօնոյ և Աղահունեաց ամս երեսուն։ Բայց որդի նորա Տիրան հրամանաւ Ալ աշդենայ Ալ բաց իշխանին և հօր իւրոյ Ալ ահանայ գնաց 'ի դուռն Խոսրովայ, յառաջքան զգնալն Հերակլի 'ի պարսիկս. և եղեալ Խոսրովայ ընդ որդեգիրս, լեալ մարզպան Հայոց, առնու զօր բազում, և գայ 'ի վերայ Յունաց որպէս թէ 'ի պատերազմ։ Բայց յղէ 'ի կայսրն, թէ մի ինչ երկնչիր յիմոյ գալոյս. այլ տուր ինձ քաղաք մի, զի ժողովեալ զզօրս Հայոց, և մնացից քեզ 'ի թիկունս։ Իսկ նա ուխտ սիրոյ դնէր 'ի միջի, ոչ միայն մարզպան Հայոց և Պարսից համարեալ՝ այլ և դիմէլեկոս առնել բովանդակ Հռոմոյ։

Զ այսոսիկ լուեալ Ալ աշդեան Ալ բաց իշխանն՝ առաքեաց առ Խոսրով, եթէ նենգեաց քեզ Տիրան,

և եղև ընդ Յոյնս. արդ առաքեա ուղղ հազար այր-
ուձի ընդ Ասանդ, և ես տաց զնա 'ի ձեռս քո։
Իսկ Թագաւորն կոչեաց զ Ջոջիկ զԱրաց իշխանաղ-
դին, և արար մարզպան. և զԱիւնեաց իշխանն ձե-
ռացկոծ տայր հանել որպէս զնենգաւոր և զխաբօղ
աղգ։ Եւ առաքեաց ինքն առ Աշտեան զօր հինգ
հազար. իսկ Աշտեան գրեալ Թուղթ առ Տիրան
այսպէս. Լեղացար պանդխտութիւն, արդ արի եկ՝ զի
խորհեսցուք ինչ վասն արքայի։

Իբրև ընթերցաւ զթուղթն, 'ի նոյն աւուր եկն
Թուղթ մի 'ի Համամայ քեռորդւոյն Աշդենայ, ծա-
նուցանել զնենգութիւնն՝ որ ինչ առաջի կայր 'ի զօ-
րացն եկեղցն 'ի Պարսից։ Եւ նորա վաղվաղակի
Թուղթ գրեալ 'ի Աշդեան, յամօթ առնելով վասն
ծածուկ իրացն։ Եւ բարկացեալ Աշդեան, ետ
ածել զՀամամ, և ծայրատել զոտս և զձեռս նորա։
Եւ առեալ զպարսիկս՝ էանց ընդ գետն Հորոմ, և
գնաց 'ի քաղաքն Համամայ՝ որ կոչի Տամբուր. էհար
սրով և հրով, և գերեաց զքաղաքն։ Իսկ նոր եպիս-
կոպոսն քաղաքին Անանկոս անիծեաց սաստիկ զիշ-
խանն. և նորա հրաման տուեալ պարսկացն՝ կոտո-
րել զքահանայսն յեկեղեցին, որ կոչի նոր Աիօն։ Իսկ
եպիսկոպոսն աղօթեալ առ ած լուութիւն, միայն զայս
հանեալ 'ի լոյս՝ թէ եղիցի քաղաքս խոպան և աւե-
րակ, և ոչ ոք իցէ որ բնակիցի 'ի սա յաւիտեանս յա-
ւիտենից։ Եւ արկեալ զինքն 'ի վերայ սեղանոյն, զենին
զնա յաւուր Պենդակոստէին յառաջ քան զԲրիս-
տոս պատարագելն։ Եւ 'ի միւսում աւուրն Ձայ-
թեալ ամպոց երկնից, հրայրեաց արար զնա մինչ նրա-
տեր առ դուռն քաղաքին Տամբուրայ։ Զայս յետոյ
շինեաց Համամ, զիւր անուն դնելով Համամաշէն։
Եւ 'ի գլուխ եկ աղօթիք Անդնոսի. զի երեքհազար
այր 'ի միում գիշերի սատակեցան, և այլքն փա-
խեան, և քաղաքն աւեր մնաց։

Ապա 'ի սոյն ամի եկանէ Հերակլ, և սպանանէ
զԽոսրով. և յիշեաց զերդումն՝ զոր ընդ Տիրան և
ընդ ինքն, և կացուցեալ մարզպան ամ Հայոց, և
ինքն գնաց 'ի Կոստանդինուպոլիս։ Եւ յետ ութ
ամի եկն Աբդռահիմ քեռորդի Մահմետի բազում

աղխիւ, ութ հատան հազար առնուձիոյ ընդ իւր բերեալ, խնդրէր հարկս 'ի Հայոց։ Իսկ Տիրան արձակեաց՝ ժողով լինել համօրէն զօրու 'ի պատերազմ։ Օ որ դիպող ժամանակ գտեալ իւր՝ որդին Ա աշդենոյ Ջ ոջիկ Ա ըաց իշխանն, ապստամբեցուցանէ զբովանդակ Հայք՝ չերթալ առ նա։ Օ այս տեսեալ Տիրանայ թէ ամ ինչ 'ի վերջ հասեալ է, եդ զայս բանս առաջի զօրաց իւրոց ութ հազարաց՝ որք կամաւ էին եկեալ, թէ ո՛վ Ոչ՝ի ժողովուրդք, լաւ է ինձ մեռանել՝ քան զեկեղեցի այ հարկատու լինել Տաճկաց։

Եւ 'ի վաղիւն ժողովեալ 'ի ստորոտն Գրգռոյ՝ որ ընդ հարաւոյ, 'ի դաշտ անդ խմբեցան յառաւօտէ մինչև յերրորդ ժամն։ Գնեռ և ևս փախստեայ էին աբարեալ զտաճկաստանն, իսկոյն իշխանն Ընձաւաց եաց ապստամբեալ 'ի դուրս ելեալ, և սուր 'ի վերայ Հայոց զօրուն դնէ։ Իսկ Տիրան պատառեալ զերկու ռազմն, պատահեցաւ Ամհուռայ, և ասէ. Կաց ուրացեալ Ամհուռ, զի ըմբռնեաց զքեզ Ոչ՝ 'ի ձեռս իմ։ Եւ ձգեաց զգլուխն Ամհուռայ սրով, և ինքն անդէն պսակեցաւ սրով երկու իշխանօքն։ Եւ ապա 'ի մէջ առեալ զզօրսն Հայոց, ամենեցուն զկատարած կենաց հասուցանէին։ Իսկ ոմանք փախստեայ լեալ, անցանէին հանդէպ մօրաթաթախ[1] Օձ քաղաքի։ Եւ կոտորեալքն 'ի Պարսից կան 'ի պահեստի ընդ վկայարանաւն, և վերակոչի անուանն նոր Խանակ։ Իսկ Ընդռահիմ անցանէ ընդ Հարք և 'ի Խասեան, 'ի Ա իրք և 'ի Ջ ախվախս և 'ի Ա ատնանդ. և առեալ հարկս, դառնայ 'ի տաճկաստան։

'Ի սոյն ամի քակի եկեղեցին, որ յԸշտից վանան հիմնարկեալ 'ի սրբոյն Գրիգորէ. և Կարապետն յինանակնեանն, և Ատրաւանն 'ի Տարօն, և մեծ կաթուղիկէն յԱստղաբերդ, և Երսխի հայրապետի կաթուղիկէ եկեղեցին 'ի Թիլն յԱկեղեաց գաւառն։ Եւ մարզպանն կայ թաղեալ 'ի դուռն կաթուղիկէին 'ի Զիւնկերտ Տարօնոյ 'ի Պորպ քաղաքի։

1 Յորինական մօրթաթախ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ժամանակագրութիւնս այս սկսեալ առ սրբով Գրիգորիւ Օ էնոբայ ասորւոյ՝ վասն որ ինչ յիւրեան տեղւոյն գործեցաւ Թողեալ գրով՝ ի նոյն եկեղեցին։ Հաճոյ է Թուեալ այլոց յետոյ զնոյն պահել զկարգ, միայն որ ինչ իշխան տանս այս առնէր քաջութիւն՝ իւրաքանչիւր հայր գրեալ զիւր ժամանակին անցս Թողցեր. և ահեալ, պատմութիւն Աստուծոյ կոչի։ Օ ի այն հարանց անուանքն, որք գրեալք կան մինչև ՝ի Ավոդիկ, ամենեքեան Աստուածք էին. և տուին այն աստուծի գրով և պաշտամամբ է վարեալ մինչև ՝ի Ավոդիկ։ Այս նա փոխեաց զամենայն կարգս, և զԱստուծոց ցեղն բնաւ հալածական արար ՝ի վանացն։

Այլ զոր ինչ ՝ի Տրդատայ մինչև ՝ի Խոսրով արքայ Պարսից լեալ է ՝ի տանս մամիկոնենից՝ ոչ գտի գրով։ Աստ տեղեկացայ յոմանց՝ Թէ ՝ի կողմանս Ուռհայի է կրօնաւոր ոմն Մարմառա կոչեցեալ, և ունի զգիրսդ զայդ։ Գնացի և տեսի առ նմա զգիրսն, որ ՝ի նոյն ինքնակնեան վանսն էր գրած. և նա ՝ի զօրացս ուստեք ունէր ՝ի Պարսից կամ յայլոց ուրուք, որ ապականեալ զերկիր, և գիրքն կարծեմ Թէ անտի է անկեալ ՝ի նա։ Այլ Թարգմանեալ ՝ի նմանէ քսան և ութ պատՃեան, և տասն՝ որ ՝ի գրի առ իս կայր, և բովանդակեալ արարի երեսուն և ութ պատՃեան, ՝ի մի գիրս հաւաքելով՝ Թողի մանկանց եկեղեցւոյ։

Ի ժամանակս Թագաւորութեան Հերակլեայ, և ՝ի մահուն Խոսրովու, հրամանաւ Ներսիսի Հայոց կաթողիկոսի, և յիշխանութեամբ մամիկոնեան Վահանայ՝ զոր մայրենեաւք կամարական կոչեն, որ Երեսներորդ երկրորդ էր ՝ի Մուշեղայ՝ զոր Աջակորով կոչեն, գրեալ և կազմեալ ՝ի վանսն Գլակայ ՝ի դուռն սրբոյ Կարապետին, յորում կայ նշխարք Կարապե-

տին՝ բևեռո

ՅԱՆԿ ԱԼՖԱԲԵՏԱՅ

Աբգարահիմ 57. 58:
Աբրահամ կաթողիկոս 8:
Աթանաս Գլակայ առաջնորդ 8:
Աղի ծով 56:
Այծից բերդ 36:
Այծման, տե՛ս Յետանկ:
Այծ տան, տե՛ս Յետանկ:
Անգակ 11. 34. 39:
Անգրեաս Գլակայ առաջնորդ 8:
Անձաւացիք 58:
Անտոն և Կրօնիդէս 7:
Աշտից վանք 58:
Ապահունիք 25. 27. 30. 43. 47. 56:
Առաջ 24:
Առինչք 32:
Ասուր 32. 33:
Ասորիք 38. 59:
Ատեղունք, Ատեղունք, տե՛ս Աստղն ամրոց:
Աստղաբերդ 58:
Աստղն ամրոց 15. 21. 48:
Արածանի 28. 31. 38. 47. 49. 50:
Արդակ, տե՛ս Անգակ:
Արիք, տե՛ս Պարաք:
Արծուիք, տե՛ս Այծից բերդ:
Արծրունիք 9. 12. 28. 29. 37:
Արման 15:
Արջք 31. 54. 55. 56:
Արտամետ 12:
Արտից գետ 38. 39:
Աւետեաց բլուր 7. 9. 29:

Բալխասատան, տե՛ս Բահլ Շահատատան:
Բահլ Շահատատան 13. 15. 28:
Բասեան 15. 58:
Բարթուղիմէոս Գլակայ առաջնորդ 8:
Բարսեղ Գլակայ առաջնորդ 8:
Բաւար, տե՛ս Բոսար:
Բոսար 28:

Գալհար, տե՛ս Գահար:
Գահար 15. 30:
Գայլ Վահան, տե՛ս Վահան մամիկոնեան:
Գարհար, տե՛ս Գահար:
Գգռոս, տե՛ս Գրգուռ:
Գիրեհ 44:
Գլակ 7. 8. 9. 12. 29. 31. 33. 43. 49. 54. 56. 59:
Գողոց աղբեւր 39:
Գոմք 12:
Գորգ Շատաֆոս 54:
Գռէգուռ 30:
Գրգուռ 30. 58:
Գրգռոս, տե՛ս Գրգուռ:
Գրիգոր Լուսաւորիչ 7. 17. 20. 38. 49. 58. 59:
Գրիգոր Գլակայ առաջնորդ 8:
Գրիգոր Հայրապետ 50:

Դաւիթ Հայրապետ 49:
Դիմաւիոս մի 'ի խոտաճարակացն 19:
Դուին 8. 13–15. 43:

Եկեղեաց գաւառ 29. 58:
Եղանց բերդ 24. 32:
Եղնուտ, տե՛ս Եղանց բերդ:
Ենարկիոս մի 'ի խոտաճարակացն 19:
Եպիփան Գլակայ առաջնորդ 7:
Եպիփան մի 'ի խոտաճարակացն 19. 43. 49:
Երեզնաւան 54:
Երուսաղէմ 54:
Եփրեմ Գլակայ առաջնորդ 8:

Զէնոբ Գլակ 7. 59. 60:

Թադէոս Գլակայ առաջնորդ, տե՛ս Թադիկ:

Թէոնիտաս մի ի խոտաձարակացն 19։
Թիլն տուան 29. 34. 58։
Թմբրաձոր 42։
Թոդիկ 8–12. 16. 20. 59։

Ժողովք 40։

Ինեակնեան վանք 12. 28. 58. 59։

Խարշ 22։
Խոյլի 13. 15։
Խորով Ա. արքայ Պարսից 12։
Խորով Բ. արքայ Պարսից 12–15. 28–30. 36. 43. 49. 54. 56–59։
Խոտաձարակք 9. 16։

Ծվայ ծոմն 26։
Ծիծառն կամ Ծիծառնէ 54. 55. 56։
Ծիծառնիկ 54. 55։
Ծծմակ 23. 24. 31։
Ծմակ, տէս Ծծմակ։

Կախմխեայ բլուր, տէս Կաղամախեայ բլուր։
Կաղամախեայ բլուր 50. 53։
Կաղամանեայ բլուր, տէս Կաղամախեայ բլուր։
Կարապետ, տէս Յովհ. Կարապետ։
Կարին 14. 15։
Կենայ վայրք 42։
Կեսարիա 9. 12. 20. 54։
Կիւրեղ Գլակայ առաջնորդ 8. 12։
Կոմ 25. 27։
Կոմիտաս Գլակայ առաջնորդ 8։
Կոմիտաս կաթողիկոս 8։
Կոստանդինուպօլիս 54. 57։
Կորի 28։
Կուառք 8. 12։
Կուրայ կամ Կուրան 48։
Կրեհ, տէս Գիրեհ։
Կրօնիգէս 7. 20։

Համամ 57։
Համամաշէն 57։
Հայրաբլուր 43։
Հայր բլուր 29։
Հայկերտ 53։
Հայրկերտ, տէս Հայկերտ։
Հայք 13։
Հանգիստանք 47։
Հաշտեանք 15. 30. 31. 43. 44. 46. 47. 52. 53։
Հարցս, տէս Խարշ։
Հարք 29. 30. 58։
Հեր 15։
Հերակլ կայսր 43. 54. 56. 57. 59։
Հոն 45։
Հոնընկէց 44. 47։
Հովեանք 48։
Հոռոմք 56։
Հռիփսիմեանք 8։
Հռոմ 12։
Հռոմք, տէս Հոռոմք։

Զիւնկերտ 58։

Ղիմինդոս 8։

Ճորոխ 57։

Մակար, տէս Մարկոս։
Մահմէտ 57։
Մահու ագարակ 34։
Մահու առիթ 48։
Մահու բլուր 36։
Մամիկոնեանք 9. 43. 59։
Մանդակունի, տէս Յովհ. Մանդակունի։
Մանեայ այր 7։
Մանկնոս 57։
Մատրավանք 12։
Մարիամ կին Վարդայ պատրկի 9։
Մարկոս Գլակայ առաջնորդ 8։
Մարկուց փող 47։
Մատրավանք 51. 53. 58։
Մարմառա 59։
Մարաց փող, տէս Մարկուց փող։
Մեծամոր 39։
Մեղու 23։
Մեղրի 15. 23. 32. 38. 40. 42. 51. 53։
Միհրան 15. 19–28. 30. 31։
Միհրիսոսրով 46։
Մոգուց գերեզման, տէս Մոկքունք։
Մոխրայ եկեղի 38.
Մոկքունք կամ Մոգատունք 45։
Մշու բլուր 55.
Մովսէս կաթողիկոս 8։
Մուշ 13. 21. 23. 24. 31. 34. 37. 49։
Մուշեղ Քաջակորով 9. 13–15. 20. 21. 26. 28. 43. 44. 53. 56. 59։

Մօրայ գու� 22։
Մօրիկ 12–15։

Յետանկ 48։
Յոյնք 9. 12–16. 27. 30. 43. 56. 57։
Յովհաննէս Ա. Գլակայ առաջնորդ 8։
Յովհաննէս Բ. Գլակայ առաջնորդ 8։
Յովհաննէս Կարապետ 9. 12. 17–19. 26. 28. 29. 33–35. 40. 43. 44. 47–52. 54–56. 58. 59։
Յովհան Կեսարու հայրապետ 54։
Յովհան մամիկոնեան եպիսկոպոս 60։
Յովհաննէս մի'ի խոտաճարակացն 19։
Յովհան Մանդակունի 8։
Յովսէփ Գլակայ առաջնորդ 8։

Նարգաք 11։
Նարեսոս, տէ՛ Ենարկիոս։
Ներսէս Բ. 55. 56. 59։
Ներքինանկնիս 52։
Ներսէս Գլակայ առաջնորդ 8։
Ներսէս մեծն 58։
Նիխոր 24։
Նիխորձէս 18։

Շահաստան, տէ՛ Բահլ Շահաստան։
Շատախ 15. 54։
Շատախոս, տէ՛ Գորգ։
Շիրականիք 42։

Ողկան 16. 21. 26. 40. 55։
Ողնու բերդ, տէ՛ Եղանց բերդ։
Ողնուանիք, տէ՛ Եղանց բերդ։
Ոսմիզդ Պարսից արքայ 12. 13։
Ուռհա 59։

Պալունիք 31. 39–43. 46. 52։
Պարեխ 12։
Պարսք 12. 19. 22–28. 32. 34–40. 42. 47. 56. 57. 58. 59։
Պարսից գէմ կամ կողմ 51։
Պուղակ կամ Պողկ, տէ՛ Պուղկ։
Պորպէ կամ Պորպէս քաղաք 30. 36. 58։
Պուղկ 52։
Պոլիկարպոս մի'ի խոտաճարակացն 16. 19։

Ջախվախիք 58։
Ջամբ խոսրով, տէ՛ խոսրով Ա։
Ջոջիկ 57. 58։

Ռահան 31. 32։

Սադաստան 9։
Սադակ, տէ՛ Նարգաք։
Սաղնայ երկիր 38։
Սահակ Գլակայ առաջնորդ 8։
Սահուռ 58։
Սամուէլ հայրապետ 60։
Սանտայ Ծծմակ, տէ՛ Ծծմակ։
Սասուն 13. 15. 25։
Սերեմ, տէ՛ Սրեմ։
Սերեմառոր, տէ՛ Սրեմառոր։
Սերեմավայր, տէ՛ Սրեմավայր։
Սիմէոն մի'ի խոտաճարակացն 19։
Սիւնիք 57։
Սմբատ իշխան Հաչաենից 41։
Սմբատ որդի Վահանայ 31–49. 52. 53։
Սուկաւ 9։
Սուրբ Բանակ 58։
Սուրբ Սիոն 57։
Սուրբ Ստեփաննոս եկեղեցի 49։
Սուրբն Եղբայր Վախտանգայ 37–39։
Ստեփաննոս Նախավկայ 49։
Ստեփաննոս որդի Վահանայ մամիկոնենի 55։
Ստեփաննոս որդի Վարդայ պատրիկի 9. 29. 43. 49։
Սրեմ 39։
Սրեմառոր 39։
Սրեմավայր 45։
Սրոց կամ Սրենց ձոր։

Վախտանգ 30–37. 43։
Վահ 32։
Վահան Մամիկոնեան կամ Կամսարական 15. 20–41. 44–56։
Վահան որդի Վարազայ 46։
Վահանովիա 41.
Վայրանկանիս 52։
Վանանդ 57. 58։
Վաչգեան 56–58։
Վաչիր 25–27։
Վաչտեան, տէ՛ Վաչգեան։
Վարազ իշխան Պալունեաց 39. 40. 41. 44. 46. 48։
Վարազաբլուր 42։

Վարազակ 44։
Վարազակարլուր, փէ՝ Վարազարլուր։
Վարդ պապրիկ 9։
Վարդուհրի 49. 50. 51։
Վարշիր, փէ՝ Վաշիր։
Վիրք 8. 56–58։

Տաճիկք 58։
Տաճկաստան 58։
Տամբուր 57։
Տայք 55։
Տարօն 12–15. 20. 28. 29. 30. 45. 49. 53. 54. 56. 58։
Տաւրոս 45։
Տիգրան զօրաստիւ 43–46։
Տիրան 49. 51. 53. 56–58։
Տրդատ 38–59։

Փադիկաւ, փէ՝ Փանդիկաւ։
Փանդիկ կամ Փանդիկաւ 49. 52։
Փոկաս 14. 15։
Փոյադիկ, փէ՝ Փանդիկ։

Քաղկեդոն 12։
Քարքէ 28. 38։

Օձ քաղաք 21. 22. 58։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

[2р. 50к]